

ՀԱՅԱՍՏԱՆ

1904 ԱՊՐԻԼ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻԼ 1904 Թ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

1. Փոխանակուած Հեռագիրները. 291
2. Քաղուածք Ի Կոնդակաց Վեհ. Հայրապետին. . . 292
3. Քաղուածք Սինօդի օրագիրներից. . . . 294

ԿՐՕՆԱԿԱՆ

4. Արարատի ընթերցողներին. } Ե. Ժ. Վ. Մ. . 302
5 Բրիտոս յարեաւ. . } . 305

ՄԱՅՐ ԱԹՈՌ

6. Վեհափառ Հայրապետի ճանապարհորդութիւնը Սանահին և Երևան. 310
7. Ներսէս Հինդերորդ կաթուղիկոսի կոնդակները. Մեսրոպ վ. 310

ՏԱՃԿԱՀԱՅՏ.

8. Աղթամարի թեմը, բարեգործութիւններ. երգարան մանուկների համար. աշխարհաբար շարականն. . . 327

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

9. Օրթօդոքս եկեղեցի. 331
10. Կաթոլիկ եկեղեցի. 336

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

11. Էմմանուէլ Կանա. Մ. Քրիշճեան 338

ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

12. Հայոց Նախնական պատմութիւնն ըստ Մոմիգլեի Գ. Ս. 342
13. Ծողովրդական լռաղեր Մ. Աբեղեան . . . 354
14. Կաթի պահպանութիւնները Գ. Ղազարեան . . 358

ՅԱՒԵԼՈՒԱԾ

15. Թուղթ Սիմէօն Սսոյ Կաթուղիկոսի առ Փիլիպպոս Էջմիածնի կաթուղիկոս. Յունիկ եպիսկոպոս. . . . .

Ա Ր Ա Ր Ա Տ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1904—ՌՅՇԳ

Տարի ԼԷ.	Ա Պ Ր Ի Լ	Համար Գ.

Հրամանաւ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

Дозволено цензурою 24 Марта 1904 г. г. Тифлисъ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԹԻՀՐԱՆ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՇԱՀՆՇԱՀԻՆ

Յերջանկաբեր աւուրս նոյեմբերի չնորհաւորեմ հանդերձ միաբանութեամբ Լ՚Ոմիածնի զՁերդ Կայսերական Մեծութիւն և վերառաքեմ դաղօթս Ջերմագին առ Բարձրեալն, զի երկարեսցէ Աստուած զթանկագին կեանս Շահնշահիդ հանդերձ Կայսերական Պալատան՝ ի բարօրութիւն բազմամիլիոն հպատակաց Մեծին Իրանի։

յ8-ն Մարտի 1904 ամի

ՄԿՐՏԻՉ կաթուղիկոս ամենայն Հայոց

Ի ՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ցոյժ հաճոյ է Ինձ ստացումն բարեմաղթութեանցն այսոցիկ, զորս Սրբութիւն Ձեր և միաբանութիւն յայտնէք։ Երջանիկ համարեմ զիս, զի կարեմ հաւաստիացուցանել զբարեկամութիւն Իմ, զոր ունիմ առ Ձեզ և զբարիացակամ ղգացմունս, զորս տնուցանեմ առ կրօնակիցս Ձեր։

յ9-ն Մարտի 1904 ամի

ՄՕԶԱՖԱՐ-Էդդին

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ա.

ՓԱՂԱՔԱՑԻՔ Ի ԿԱՆԴԱԿԱՅ ՎԻՃ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական անօրէնութիւնք

Կանդակ յանուն Վիճ. Կոնսիստ. Երևանայ, ընդ որում յետս դարձուցանելով զերկուս գործս նորին, որ վասն պատկառութեան վիճակային Տաթևու՝ Մեսրոպայ Յարութիւնեանց և Մովսիսի Պետրոսեանց, հաստատէ զվճիռ Սինոդին՝ սակս անլուծանելի դոյց պսակաց նոցին։

—Յանուն Մեսրոպ վարդապետի Մադաւսեանի և անդամոց առաջնորդական խորհրդարանին, որով պատուիրեցաւ ի սկզբան առաջիկայ Ապրիլ ամսոյ կատարել առաջնորդական ընտրութիւն համաձայն հաստատեալ կանոնադրութեան և առաջարկել ի հաստատութիւն։ Մարտի 5 № 193.

—Յանուն Տ. Եղիշէ Ծ. վարդապետի Մուրադեանի, որով կարգեցաւ պատասխանատու խմբագիր «Արարատ» ամսագրոյ։ № 196.

—Յանուն Տ. Մամբրէ վարդապետի, որով կարգեցաւ տեսուչ ազգարանի Մայր Աթոռոյ։ № 198.

—Յանուն Տ. Դաւնդ եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ածել յաստիճան սարկաւագութեան ղշուշեցի Աւետիսն Տէր Գասպարեանն։ № 199.

—Յանուն Տ. Տիրայր վարդապետի, որով պատուիրեցաւ նախագահել հոգաբարձական ժողովոյ Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի։ № 201.

—Յանուն հոգաբարձութեան Նեբս. աղգ. Հոգևոր դպրանոցի, որով տուաւ տեղեկութիւն ղկիշեալ կարգադրութենէ № 202.

—Յանուն Վիճ. Կոնսիստորիային Վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ կարգադրել, ղի ի միւսմ յառաջիկայ տօնից Ժողովեսցեն զնուէրս յօգուտ պատերազմին և զգոյացեալ դումարն յաստուածեն տեղական վարչութեան № 203.

Կոնդակ նոյն Կոնսիստորիային, որով պատուիրեցաւ օգնական կարգել Կարապետ քահանայի Մալխասեանց Բաթումի քաղաքի № 208.

Երջաբերական կոնդակ յանուն Կոնսիստորիայից ուսումնական գործոց, որով պատուիրեցաւ տալ տեղեկութիւն զաղօրինի կենակցաց ի վիճակս № 210.

—Յանուն վիճակային Կոնսիստ. Վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ վճարել գործարանին Թադակի զմնացեալ ի դնոց խոզովակացն ս. Խաչի Սրբազանս զդրամն ի 1800 ր. յերիս նուագս № 216.

—Յանուն վիճ. Կոնսիստ. Երևանայ, որով պատուիրեցաւ տալ Մկրտչի Պալեան ղկենսաթոշակ ղ220 ր. ի վիճակային արքեանց և ղ100 ր. ի թեմական դպրանոցէն տեղւոյ յիւրաքանչիւր ամի № 220.

Բ.

Հայրապետական հնորհակալիք և օրհնութիւնք:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Շուշեցի Միրզայանի Պատուականեանց վասն նուիրաբերութեան նորա:

Յանուն Խաչատրոյ Դէօրդեան վասն Աստուածահաճոյ գործոց նորա:

Կանդակ օրհնութեան և մխիթարութեան Սահմանոսի Դրիգորեան Ալվազանց բազուեցւոյ, վասն նուիրաբերութեան 400 ռուբ. ի յիշատակ հանգուցեալ հօրն։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յունվարի 14-ին Սինօդը լսեց ազգիս Վեհափառ Հայրապետի անցեալ տարուայ Դեկտեմբերի 29-ին տուած № 1421 կոնդակը և որոշեց ազատ համարել Սինօդի հաւատարմատար պ. Քեալեանցին համաձայն իւր խնդրանաց, վճարել նրան հասանելի ռոճիկն՝ հաշուելով անցեալ տարուայ Յուլիսի մէկից մինչև ներկայ տարուայ Յունվարի վերջը. Վեհափառ Հայրապետի անձնական գործերի և յանձնարարութիւնների համար վարձել ժամանակաւորապէս փաստաբան պ. Յարեգին Ենգիբարեանցին և կրելիք պայմանագրի մէջ մտցնել նրա տարեկան վարձատրութեան և ճանապարհածախսի չափը։

Սինօդն իւր՝ անցեալ տարուայ Նոյեմբերի 5-ին կայացրած օրագրով որոշել էր լուծել տիկին Շուշանիկ Նուրալեանի ամուսնութիւնն և իրաւունք էր տուել նորից ամուսնանալու։ Յունվարի 23-ին լսեց այս առթիւ պ. Պրօկուրորի տուած բողոքն ու որոշեց հրամայել՝ ի կատար ածել իւր նախկին վճիռն և անհետևանք թողնել յիշեալ բողոքը։

Յունվարի 26. Սինօդը որոշեց անհետևանք թողնել Օշի քաղաքի Ծխատէր հանգուցեալ տէր Գրիգոր քահանայ Փանեանցի այրու խնդիրն, որով Դէօրդ քահանայ Մեհրաբեանից պահանջում էր 70 ռուբլի՝ իբրև իրեն հասանելի բաժնի մնացորդ՝ իւր հանգուցեալ ամուսնու եկամուտներից։

Նոյն թուին որոշեց մերժել Երևանի կոնսիստորիայի միջնորդութիւնը Ղարամահմադ գիւղի վրայ Ոսկան տէր-Պետրոսեանցին քահանայ ձեռնադրելու մասին։

Նոյն թուին, Սինօդը լսելով տէր կառավարչապետի

անցեալ տարուայ Դեկտեմբերի 20-ից ուղարկած № 17314 դրութիւնը Թամամլու գիւղի եկեղեցու շինութիւնը բարձրագոյն հրամանաւ Թոյլատրուած լինելու մասին, որոշեց հրամանագրել այս մասին Երևանի կոնսիստորիային և վերադարձնել ազօթատան յատակագիծը։

Յունվարի 28-ին Սինոդը որոշեց կարճել Թադէոս Ղայթանջեանի ամուսնալուծութեան գործը՝ խնդրատուի մահուան պատճառով։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Սօֆիա Դարչոյեանի և Տիգրան Յարութիւնեանի ամուսնութիւնը և իրաւունք տուեց Սօֆիային նորից ամուսնանալ։

Յունվարի 30-ին Սինոդը որոշեց լուծել Նատալիա Ղուլեանի և Եամիր Իրիգոլեանի ամուսնութիւնը՝ վերջնիս անյայտ բացակայութեան պատճառով և թոյլատրեց Նատալիա Ղուլեանցին նորին ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը ոչնչ հիմք չգտնելով Մարիամ Փաքրիելեանի և Յովհան Մելիք Մուրադեանի ամուսնալուծութեան հաւար, որոշեց մերժել Մարիամ Փաքրիելեանի խնդիրն այս մասին։

Փետրուարի 4-ին Սինոդը որոշեց մերժել Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութիւնը Հաղրութի գերեզմանատանից Շուշի փոխադրելու հանգուցեալ Եղինէ Դաւիթբէկեանի դիակը։

Նոյն թուին Սինոդը որոշեց մերժել իշխան Բարաթովի առաջարկութիւնը Հաղբատի վանքի կալուածքի վերաբերեալ վէճը խաղաղութեամբ վերջացնելու իշխանի առաջարկած պայմաններով և հրամայեց Վրաստանի և Իմերէթի կոնսիստորիային՝ յանձնել գործն երդուեալ հատուածին՝ դատաստանական կարգաւ պաշտպանելու հոգևոր իշխանութեան չահերը։

Նոյն թուին Սինոդը լուծեց Աննա Դաւթեանի և Վարդան Խոջայեանի ամուսնութիւնը՝ Վարդանի անհաւատարմութեան պատճառով և թոյլատրեց Աննա Դաւթեանին նորից ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը որոշեց դիմել տէր կառավարչապետին Երեւանի գաւառի Թաղա-գիւղի եկեղեցու շինութեան թոյլտուութեան համար։

Փետրվարի 11-ին Սինոդը որոշեց դիմել նոյն ձեւով՝ Սուրմալուի գաւառի Կողբ գիւղում Եղնիկ Կողբացու դիրեզմանի վրայ շինուելիք եկեղեցու թոյլտուութեան համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց կարճել Մկրտիչ Կարապետեանի և Ներսիսեակ Աւագեանի ամուսնալուծութեան գործը՝ նրանց օտարատոհմակ լինելու պատճառաւ և ներկայացնել այն Վեհափառ Հայրապետին ի բարեհաճ տնօրինութիւնն։

Փետրվարի 13-ին Սինոդը, լսելով Տ. Տ. Մաթէոս և Բարկէն վարդապետեանների կատարած քննութիւնները Թիֆլիզի կուկիոյ ս. Աստուածածնայ եկեղեցու վերջին երկու երեսփոխանների պաշտօնավարութեան մասին, որոշեց նախ՝—որովհետեւ կատարած երկու քննութիւններից պարզապէս ապացուցւում են այդ եկեղեցու նախկին երեսփոխան Եսայի Աբրահամեանի մասին եղած մեղադրանքները ու ներկայ երեսփոխան Մինժիներ Նիկողայոս Գրիգորեանի անմեղութիւնն, ուստի նրանցից առաջինին՝—Եսայի Աբրահամեանին՝ եկեղեցական փողերն իւրացնելու պատճառով՝ յանձնել մարմնաւոր իշխանութեան Թիֆլիզի նահանգական դատարանի դատախազի միջոցով քրէական դործ յարուցանելով նրա դէմ, և այդ բանի համար ուղարկել ուր հարկն է բոլոր կարեւոր փաստաթղթերն։ Նիկողայոս Գրիգորեանի դէմ յարուցած գործը՝ նրա անմեղութեան պատճառով կարճել, որովհետեւ նրա վրայ բերած մեղադրանքներից ոչ մինն ապացուցուած չէ. երկրորդ՝—որովհետեւ Սինոդի 1900 թուի Յունիսի 16-ին կայացրած № 612-ով հրամանագրած վճռին Աղէքսանդր քահանայ Տէր Յովհաննիսեանցին երկամեայ ապաշխարութեան ենթարկելու մասին դործադրուած չէ, ուստի պատուիրել Վրաստանի և Իմերէթի կանոնատուրիային՝ չուտով ի կատար ածել այդ հրամանը, որովհետեւ քահանան անուեղի զրպար-

տել և անիրաւացի անպատուել է Նիկողայոս Պրիգոբեան-նին, և նրան դող և եկեղեցի կողոպտող է անուանել։

Նոյն թուին որոշեց ի կատար ածել 1903 թուի Դեկտեմբերի 17-ին կայացրած օրագիրն՝ Արշակ Քոթոյեանցի և Եղիսաբեթի Խումեանցի ամուսնալուծութեան մասին, որով Արշակ Խումեանցին թոյլատրուել էր նորից ամուսնանալ, և անհետևանք թողնել այս առթիւ պ. Պրօկուրորի ներկայացրած բողոքը։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Միքայէլ Յարութիւնեանի և Սաթենիկ Յակովբեանի ամուսնութիւնը՝ Միքայելի անհաւատարմութեան պատճառով և իրաւունք տուեց Սաթենիկ Յակովբեանին նորից ամուսնանալու։

Փետրուարի 18 Սինոդը լսեց Դանձակի քննչի № 164 պրոթիւնը Փետրուարի 9-ից, որով խնդրել էր Դանձակի Հոգևոր Կառավարութեան դանձապահ Սիմէօն քահանայ տէր Խաչատուրեանի օրինազանցութեան վերաբերեալ Սիմէօնի դանուած գործը, ուստի որոշեց ուղարկել այն պ. քննչին և խնդրել, որ քննութիւնից յետոյ՝ գործը կըրկին վերադարձնի Սինոդ։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Ոթման տէր Պետրոսեանի և Հռիփսիմէ Մարտիրոսեանի ամուսնութեան գործն՝ ամուսնական անհաւատարմութեան պատճառով և Հռիփսիմէ Մարտիրոսեանին տուեց նորից ամուսնանալու իրաւունք։

Փետրուարի 20-ին Սինոդը ոչ մի հիմք չգտաւ և որոշեց մերժել Խաչատուր և Վարսենիկ Բարսեղեանների ամուսնալուծութեան խնդիրը։

Նոյն թուին Սինոդը որոշեց Կարսի Հոգևոր Կառավարութեան ներկայացրած տեղական ժողովրդի համախոհական խնդիրը Խաչատուր տէր Պրիգորեանին քահանայ ձեռնադրելու մասին վերադարձնել Կարսի Տ. Նահանգապետին և որովհետև համախոհականը ստորագրուած և վաւերացրած չէ Հոգևոր Իշխանութեան ներկայացուցչի

կողմից, ուստի խնդրել նորին գերազանցութեան, որ բարեհաճի ստուգել տալ եղած ստորագրութիւնները և եթէ ոչ մի օրինական արգելք չկայ Թաչատուր տէր Գրիգորեանի քահանայանալու դէմ, բարեհաճի այդ մասին տեղեկագրել Սինոդին։

Նոյն թուին Սինոդը որոշեց մերժել Եփրեմ Շահնազարեանի կրկին ամուսնանալու խնդիրը՝ նրա ապօրինի կենակցութեան պատճառով և թոյլատրեց նրա կողակից Մարգարիտ Շահնազարեանցին նորից ամուսնանալ։

Նոյն թուին որոշեց լուծել Յովհաննէս Ալուխանեանցի ամուսնութիւնը և թոյլատրեց նրա կնոջ Մարիամ Ալուխանեանցին՝ նորից ամուսնանալ։

Փետրվարի 27 Սինոդը որոշեց հետևեալը.—

Նախ, Երևանի նահանգական դատարանի 1901 թուի Նոյեմբերի 15-ին Սինոդ ուղարկած խնդրանաց համաձայն Բեռիանակ գիւղի տէր Գրիգոր քահանան պէտք է ենթարկուէր երկամեայ եկեղեցական ապաշխարութեան, այն ինչ կատարուած քննութիւնից երևաց, որ յիշեալ վճիռը չի գործադրուած և Գրիգոր քահանան մի օր միայն ճոխ իրեն ապաշխարութեան համար որոշուած վայրում՝— Անուշ վանքում, վախել է այնտեղից, երկրորդ. որովհետև Անուշ վանահայր Մկրտիչ վարդապետն անատոդ տեղեկութիւն է տուել Աղէքսանդրապոլի Հոգևոր Կառավարութեան, իբրև թէ Գրիգոր քահանան վերջացրել է իր երկամեայ ապաշխարութիւնը, ուստի հանգիմանութիւն կարգալ նրան թեմական իշխանութեան միջոցաւ։

Երրորդ. ի նկատի ունենալով, որ Գրիգոր քահանայի գործած յանցանքների մեծ մասը Սինոդը գտնում է մարմնաւոր իշխանութեան իրաւասութեան և քննութեան ենթակայ, ուստի ամբողջ գործն ուղարկել Երևանի Կոնսիստորիային և պատուիրել, որ քահանան յանձնուի մարմնաւոր իշխանութեան և այժմեանից իսպառ դադարեցնելով մինչև դատավարութեան վերջն՝ աքսորել Սևան, որի մասին և տեղեկութիւն տալ Սինոդին։ Գրիգոր քա-

հանդի ծխականներին հովուելու գործն էլ յանձնել մի այլ քահանայի և պատուիրել, որ առաջուած եկամուտի $^2/_3$ մասն յանձնի պատժուած քահանայի ընտանիքին, իսկ $^1/_3$ մասը վերցնի հովուող քահանան։ Երիզոր քահանային մարմնաւոր իշխանութեան յանձնելու մասին տեղեկութիւն տալ Երևանի նահանգական դատարանին՝ նրա № 2294 դրութեան համաձայն։

Նոյն թուին Սինոդը լսեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիայի յայտարարութիւնը, որով հարցնում էր, թէ արդեօք այս տարի՝ եկեղեցական կալուածների դրամական տուրքից յետոյ էլ պէտք է կազմուին և ուղարկուին տուրքական տեղեկագրերը։ Սինոդը որոշեց շրջաբերականով հրամայել բոլոր կոնսիստորիաներին, որ անցեալ տարիների ձևով կազմեն եկեղեցական գոյքի, կալուածների և պաշտօնեաների վերաբերեալ տուրքական տեղեկագիրն ու մանրամասն արտագրած ուղարկեն Սինոդ. Երևանի, Շամախու, Դարաբաղի, Վրաստանի և Իմերէթի՝ կոնսիստորիաներն ուղարկելու են—երեք երեք օրինակ, իսկ Աստրախանի և Բեսարաբիայի կոնսիստորիաներից՝—երկու երկու օրինակ՝ առանց առարագրութիւնների։

Նոյն թուին Սինոդը լսեց Երևանի նահանգական կառավարութեան № 1638 դրութիւնն անցեալ տարուայ Նոյեմբերի 25-ից, որի հետ ուղարկել էր կառավարիչ Սեհնաոի հրամանը և համաձայն 1892 թուին հրատարակած օրէնսգրքի երկրորդ հատորի 530 յօդուածի որոշեց առանձին շրջաբերականով յայտարարել բոլոր առարագրեալ հիմնարկութիւններին և պաշտօնեաներին, որ Պրիամուրեան շրջանի զինուորական նահանգապետութիւնից և Կվանտունի թերակղզուց կազմուած է առանձին Փոխարքայութիւն։

Փետրվարի 25-ին Սինոդը որոշեց լուծել Երևանի գաւառի Թոխանջալու գիւղացի Եղիսաբեթ Օհանեանի և

Ալէքսան Հախվերդեանի պատկը կնոջ անհաւատարմութեան պատճառով և թոյլատրեց Ալէքսանին նորից ամուսնանալ։

Նոյն թուին Սինօդը քննելով 1902 թուի Յունվարի 31-ին Նուխուայ Հոգևոր Կառավարութեան կայացրած արձանագրութիւնն և դատաստանական քննիչի ձեռքով կատարած քննութիւնն, եկաւ այն եզրակացութեան, որ Յովհաննէս քահանայ տէր Աւագեանը Յունվարի 31-ին Հոգևոր Կառավարութեան առեանում խօսքով անպատուել է իւր անմիջական իշխանաւոր և Նուխուայ փոխանորդ Տ. Սահակ վարդապետին մանաւոր խօսակցութեան և ոչ թէ պաշտօնավարութեան ժամանակ, հետևապէս Յովհաննէս քահանան պատասխանատուութեան ենթարկուել պատժական օրինաց I մասի 394 յօդուածի համաձայն։ Իւր այս եզրակացութեան մասին Սինօդը որոշեց յայտնել Դանձակի նահանգական դատարանի պ. Պրօկուրօրին և վերադարձնել ամբողջ քննական գործը։

Նոյն թուին Սինօդը լսեց Երևանի նահանգական կառավարութեան դրութիւնը, որի հետ ուղարկուած էր սոյն տարուայ Յունվարի 27-ին հրատարակած բարձրագոյն հրովարտակը պատերազմ յայտարարելու մասին և որոշեց թարգմանել այն հայերէն և ուղարկել բոլոր առաջնորդական հիմնարկութիւններին ու պաշտօնեաներին՝ եկեղեցիներում կարդալու և ժողովրդին յայտարարելու։

Փետրվարի 25-ին Սինօդը լսեց Ներքին Գործոց պ. Նախարարի № 6330 դրութիւնը Դեկտեմբերի մէկից, որի բովանդակութիւնն է հետևեալը.—

1902 թուի Յունիսի 3-ին բարձրագոյն հաստատուած կանոնագրութեան 132-դ. յօդուածը ապօրինի զաւակների դրութեան բարելաւութեան համար, որով փոխուեց քաղաքական օրէնքների ժողովածուի 132-դ յօդուածը (ժողովածու օրինաց X հատոր ման առաջին) որոշել է, որ բոլոր մանուկներ՝ 1) որոնք ծնուած են ամուսնութիւնից առաջ, 2) ապօրինի կենակցութիւնից, 3) ամուսնու մահուանից,

կամ ամուսնալուծութիւնից, կամ ամուսնութիւնն անվաւէր համարելուց յետոյ, երբ մինչև մանկան ծնունդն անցած է 306 օրուանից աւելի, պէտք է կոչուին արտաքոյ ամուսնութեան ծնուած։ Ի նկատի առնելով, որ յիշեալ բարձրագոյն հրամանի և գործող օրէնսդրութիւնների հիման վրայ վերացրած է երևանեան «ապօրինի» կոչելու սովորութիւնը և նախապարութեան մէջ եղած միջնորդութիւնների համաձայն՝ խնդրուում է վերացնել մետրիքական մատեաններում «ապօրինի» բառի գործածութիւնն և այդ ձևով արձանագրելու սովորութիւնը, ես կարևոր եմ համարում բացատրել ի հրահանգութիւն այն անձանց, որոնք վարում են յիշեալ մատեանները, որ արտաքոյ ամուսնութեան ծնուած մանուկների պէտք է արձանագրել մատեաններում երեխայ մայրերի անունով առանց «ապօրինի» բառը մոցնելու։ Այսպէս և մանուկների անունները մատեանում արձանագրելիս, երբ նրանց հայրերն անյայտ են, ծնողների անուան յատկացրած սիւնեակում պէտք է նշանակել միայն, թէ «ծնողներն անյայտ են»՝ առանց «ապօրինի» բառն աւելացնելու։ Վերոյիշեալներն առաջնորդում եմ Հայ Լուսաւորչական Էջմիածնի Սինոդից ի հրահանգութիւն»։

Հրամայեցին. տէր Նախարարի գրութեան պատճէնները ուղարկել Ռուսահայոց բոլոր կոնսիստորիաներին ի հրահանգութիւն և ի կատարումն։

Յանձնար և փետրվար ամիսներին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ ասորև յիշատակած անձերին և որոշեց դիմել համապատասխան նահանգապետներին՝ նրանց հոգևոր կոչման մէջ ընդունելու թոյլատուութեան համար.—

Կոստանդին տէր Սարգսեան Աթալեանին՝—Զէյթայիլի գաւառի Յոր գիւղի համար, Մոսէսեան տէր Առաքելեան տէր Մարտիրոսեանին՝—Շամախու գաւառի Հնդար գիւղի համար, Թաչատուր տէր Գալստեանին՝ Կարսի նահանգի Զուչի գիւղի համար, Յովակիմ տէր Ներսիսեան Փիլիվդևա-նին՝—Շամախու գաւառի Փիլիվդի գիւղի համար, Արամ

Աբիտճեան Սարուժեանցին՝ — Նուշուայ դաւառի Սէյդաշէն գիւղի համար, Պօղոս Պերչանեանցին՝ Կարսի նահանգի Ծալնի գիւղի համար, Միքայէլ Զաքարեանցին՝ — Ղարաբաղի Նորագիւղի համար, Պապ Տէր Գրիգորեանին՝ — Զանգեզուրի դաւառի Մազրա գիւղի համար, Խաչատուր տէր Ներսիսեանին՝ — Էջմիածնի դաւառի Բաշարարան գիւղի համար. Բաղալ Տէր Սիմէոնեանցին՝ — Գանձակի նահանգի Ղարաքլիսա գիւղի համար, Արիստակէս Գալստեանցին՝ — Երևան քաղաքի ս. Զօրավար եկեղեցու համար, Թէոդորոս Կարապետեանցին՝ — Երևանի նահանգի Ճարուր-Դարալագեազի դաւառի Քէշիշքեանդ գիւղի համար, Գրիգոր տէր Յովհաննիսեան Առաքելեանին՝ — Գանձակի նահանգի Հղորդ գիւղի համար և Համբաձում տէր Գէորգեանցին՝ — Երևանի նահանգի Ալէքսանդրապօլ քաղաքի համար։

ԱՐԱՐԱՏԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Ազգիս վեհափառ ծերունազարդ Հայրապետն անցեալ Մարտ ամսի 10-ին բարեհաճեց մի ծանր՝ բայց եւ հէնց այդ պատճառով շատ քաղցր պարտականութիւն դնել մեզ վերայ եւ յանձնեց Արարատի խմբագրութեան ժուռնալին գործը։

Թէ ինչ կրկարողանանք անել մեր կրօնական — պաշտօնական այդ միակ ամսագրի համար, թէ ինչ չափով գոհացնել կրկարողանանք Արարատի ընթերցողներին, դրա մասին առաջուց ոչ մի խօսք չենք ուզում ասել, որովհետեւ գործն ինքնին պէտք է խօսի եւ տրամադրի շրջապատողներին յօգուտ կամ ի վնաս այդ գործունէութեան։

Դժուարին է խմբագրական գործը, բազմատեսակ են ընթերցողների եւ Հոգեւոր Իշխանութեան պահանջներն այդ ամսագրի վերաբերութեամբ եւ ըոլորն էլ իրաւացի։ Այդ ըոլոր պահանջներին բաւարարութիւն տալու համար

հարկաւոր է խմբակցական աշխատանք, իսկ այդ աշխատանքի համար՝ սէր եւ կենդանութիւն։ Բազմաթիւ հայ հոգեւորականութիւնը, սովորական հոգսերի ետեւից ընկած, կարծէք չի էլ ուզում նկատել իւր միակ ամնագրի գոյութիւնն, եւ երեւի մի տեսակ աւելորդ եւ խորթ բան է համարում այն իրեն համար։

Յաւելի երեւոյթ։

Բազմաթիւ հայ հոգեւորականներից Աբարատը՝ սուրբ էջմիածնի միաբանութիւնից դուրս, համարեա թէ բոլորովին աշխատակիցներ չունի եւ տարիների ընթացքում դրսից գրած հազիւ մի երկու, երեք թղթակցութեան ենք հանդիպում։ Մինչդեռ նրա էջերում պէտք է արտափայլի հայ հոգեւորականի կեանքն ու գործունէութիւնը, նրա պաշտօնավարութիւնը·—քարոյական աշխարհը, ժողովրդի բարեպաշտութեան չափն ու նրա կրօնական պահանջները, ներմուծանողութիւնն ու ճշմարտութիւն որոնելու եւ հաստատելու ջանքն ու ծարաւը, եկեղեցու ներքին եւ արտաքին բարեկարգութեան, բարեշինութեան եւ բարեզարդութեան իրաքանչիւր դէպքը· ցայսօր այս բոլոր պահանջների մասին շատ քիչ բան է երեւացել մեր կրօնական միակ ամնագրում եւ այդ ուղղութեամբ էլ շատ քիչ բաւականութիւն է տուել նա ընթերցողներին։ Կան բազմաթիւ խնդիրներ, որոնց մասին խօսւում է մանաւանդ շրջաններում եւ սրանց այս կամ այն ձեւով լուծումն համարվում է ցանկալի, նոյն իսկ անյետաձգելի, բայց դրանց մասին մեր միակ կրօնական ամնագրում շատ քիչ՝ կամ բոլորովին ոչինչ չի խօսւում։ կարծէք թէ ժողովրդի հետ ապրող, նրա հետ ուրախացող ու վշտացող հայ հոգեւորականութիւնը պահանջ չունի, կարծիք չունի, ցաւ չունի եւ դարդի ու դարմանի կարիք չունի· մինչդեռ հազիւ թէ գտնուի մէկը, որի սիրտն ազատ լինի վէրքից ու ցաւից, ճակատը — կնճիռներից եւ միտքը — կեանքի առաջ բերած բազմաթիւ յուզիչ հոգսերից։ Եւ ցանկալի է, որ Աբարատի էջերն հայելի լինեն մեր եկեղեցու եւ նրա պաշտօնէութեան կարիքների եւ ցաւերի, նրանց յառաջադիմութեան եւ գործունէութեան ամենամանրամասն եւ

կենդանի տարեգրութիւն, որքան ներում՝ են ամենագրի միջոցներն ու ծաւալը, որոնք կարեաց չափով միշտ կարող են մնծանալ։

Այսօր ազգիս Վեհափառ Հայրապետի ս. հրամանով մեզ վրայ բառնալով Արարատի խմբագրութեան ծանր եւ պատասխանատու պաշտօնը, հրաւէր կընկալանք Հայ Հոգեւորական եւ ծեռնհաս աշխարհական անձերին՝ աջակից լինել մեր կրօնական—պաշտօնական միակ ամենագրի նիւթական եւ բարոյական յաջողութեան, եւ թեթեւացնելով մեր ծանր լուծն, աշխատել, որ Արարատը կենդանի հայելի լինի Հայ Հոգեւորականութեան եւ ժողովրդի կրօնական բարոյական կեանքի, որովհետեւ, մենք համոզուած ենք, որ այդ՝ դարերի ընթացքում՝ ի մի ձուլուած ամբողջութիւնը չի կարող դադարած լինել ճշմարտութիւն հասկանալու, գտնելու եւ նրան ծառայելու, նրանով ոգեւորվելու եւ ապրելու ծարաւից։ Մենք կողմից եւս խոստանում՝ ենք ոչինչ չընկնայել, մոռանալ հանգիստն ու քունը եւ աշխատել անդուլ, աշխատել անչափ եւ մեր ոյժերից բարձր՝ թէ հանդրները ժամանակին տալու եւ թէ Արարատը հետաքրքիր պահելու ընթերցողների համար։

Ե. ծ. վ. Մ.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՆ

Եաա հին ժամանակներից՝ եսկ, անձնատուրութեան երկրպագու և այդ անձի հաճոյքի և բարիքի համար ապրող մարդկութիւնը կռիւ էր յայտարարել այն բոլոր անձանց դէմ, որոնք յանդգնում էին մասնանիշ լինել այդ տեսակ կեանքի բոլոր պահապանող կոզմերի վրայ, որոնք այդ տեսակ կենցաղավարութիւնը պոռնում էին անպատուաբեր բանական մարդ արարածի համար, որովհետև անձնատուրութեան բարիքն ու հաճոյքը ձեռք էր բերում բազմաթիւ անմեղների ապի արցունքի և դառն աշխատանքի չնորհիւ. որովհետև այդ տեսակ կեանքի հետևանքն էր ստորութիւն և նեղութիւն, մահ և սարսափ, տանջանքի և անհատապարութիւն։

Հաճելի չէր Աստուծուն մարդկային այս այլանդակ կեանքը։ Նա իւր առեղծած աշխարհում տարբերութիւն չէր մտցրել արարածների մէջ. բոլորին հաւասարապես մանակից էր արել իւր առեղծագործող ձեռքի պատուղներին, իսկ մարդիկ այժմ իրաւունք տալով, խախտել էին կեանքի Աստուածադիր օկղբանքները՝ սէր և ընդհանուր եղբայրութիւնը։ Իբրև Աստուծոյ կամքի քարոզիչ, իբրև Աստուծոյ պատգամաբեր՝ յայտնւում էին մարգարէները, որոնք աներկիւղ հնչում էին ճշմարտութեան քարոզը և ցոյց տալիս մարդկանց, որ այդ չէ կեանքի, մարդասէր գոյութեան նպատակը, որ անձի պաշտամունքը դէմ է Աբարչին և մարդկանց նպատակը պէտք է լինի վերստին մարմնացումն այն դրախտային կեանքի, որից մարդկութիւնը զրկուել էր հէնց այն օրից, երբ եսի սպանդին ու հաճոյքն յաղթանաբեցին և նրան մուտցնել տուին

Աստուածադիր առաջին պատուէրը՝ ճշմարտութեան քարոզից սարսափած՝ եսասէր և եսապաշտ մարդկութիւնը, ճիշտ է, երբեմն սթափւում էր, աչխատում ուղղուել, բայց նորից չեղւում, նորից մոլորւում էր և բռնութեան, հալածանքի, խոր դլերի և բանտերի մէջ, կամ սրով մաչում էր այդ տարօրինակ պատգամախօսներին և նորից սկսում իւր ցոփ և անարդար կեանքը։

Դժած Աբրիչը չէր տանում Իւրադիր օրէնքների այսպիսի եղծումն, աքանչելագործ ձեռքերի արարած աչխարհի այս տասիճանի այլանդակ փոփոխութիւնն և այս պատճառով աչխարհ ուղարկեց Աստուածորդուն—Աստուածամարդուն՝ իբրև կենաց բանի քարոզ։

«Ես եկի, դի զկեանս ունիցիք և առաւել ևս ունիցէք», ասում էր Նա, պատուիրում. «սիրեցէք զիմեանս, որպէս ես ձեզ սիրեցի» և աւելացնում—«չկայ աւելի մեծ սէր քան երբ մարդս իւր անձը զոհում է բարեկամի համար». Նա այս ասելով պահանջում էր հրաժարուել անձնասիրութիւնն ու եսը պաչտելուց և այլոց ծառայել, բոլորին հաւասար ընդունել և նպատակ դնել երկնային դրախտի մասնակցումն այս երկրիս վերայ։ Ճշմարտութեան կիզիչ հոլը չրթունքներին և լոյս աչքերին, դեպի տանջուած մարդկութիւնն անհուն սիրով սիրալ լեցուն, Նա յանդիմանում էր աչխարհի մեծերին, քահանաներին, հարուստներին և դալիլեներին, մատնանիչ լինում նրանց սխալ կենցաղավարութեան վրայ և կծու լեզուով ցոյց տալիս նրանց գործն, կեանքն և դատաստանքի տարբերութիւնը։

Եւ մարդիկ չէր տալան կենաց բանի քարոզը, չուզեին խանգարած տեսնել իրենց կեանքն ու քունը և Աստուածորդուն մատնեցին, չարչարեցին և խաչելութեամբ մահուան դատապարտեցին

1871 տարի սրանից առաջ Երուսաղէմի փողոցներում մի չըտեսնուած իրարանցում կար։ Իրար էին խառնուել մեծ և փոքրը, հարուստը և աղքատը, դալիլն ու քահանան, դատաւորն ու ղինուորը, և յաղթանակով, ծաղրով և քրքիջով ուղևորւում էին դեպի Գողգոթա,

Այդ յաղթական դնացքով ընթացողների առաջից կորաքամակ, ահագին, ծանր խաչն ուսին, դանդաղ քայլում էր ճշմարտութեան քարոզը փշով պսակած, ճակատն արիւնաներկ, տանջուած ու դունատ, կիսամերկ և մի միայն սփածանների կապած։ Դեռ հեռու էր Golgotha. գժուար էր, շատ մեծ էր անարդար մարդկութեան բարձած խաչի ծանրութիւնը Աստուածորդու տկար մարդկային մարմնի համար և նա ընկնում էր նրա ծանրութեան տակ, կարծէք ուզէր լրիւ կատարելու զօրաւորների կատաղեցրած ամբոխի յաղթական խնդութիւնն ու ծիծաղը և նորանոր ծաղրի և տանջանքի տեղիք տալու նրանց։ Վերջապէս մի երկրագործի օգնութեամբ Յիսուս իւր խաչով հասաւ Golgotha, հասաւ կրելու իւր համարձակ քարոզի և խիստ յանդիմանութիւնների պատիժը, հասաւ այն տեղ՝ խաչի վերայ մեռնելու, ինչպէս գտատապարտել էր նրան յանցաւոր և անարդար աշխարհը։ Եւ այդ աշխարհն յոյս ունէր, որ այնուհետև կապրի անդորր ու խաղաղ և կը շարունակի իւր նախկին կեանքն ու քունը։

Իսկ անհուն սիրոյ և ճշմարտութեան համար գժուար էր մի միայն Golgotha-յի ճանապարհը, գժուար էր աշխարհի բարձած ծանրութեամբ այնտեղ հասնելը, բայց երբ հասաւ, արդէն յաղթականը կատարեալ էր։ Աստուածորդուն, մեղաւոր մարդկութեան Փրկչին, խաչելին երկու ուազակների մէջ, որովհետև այդպէս էր անձնապաշտ մարդկութեան դատաստանն ու իրաւունքը, նա այդպէս էր վերաբերւում սիրոյ և եղբայրութեան քարոզչին և յանցաւոր մահապարտներին, այդ էր նրա հոգեբանութիւնը։ Աստուածորդին իւր կեանքի վերջին րոպէներին, խաչի վրայ գամուած, ցոյց տուեց Իւր երկնաքաղաք լինելը։ Նա փոխանակ հառաչանքի և տրտունջների, փոխանակ բարկութեան և վրէժխնդրութեան իրեն մատնողների, չարչարողների և խաչողների դէմ, երկնային սիրով լցուած դէպի դատող մարդիկ, աչքերն ուղղեց երկինք ու աղաղակեց. «Հայր նեերիր սոցա, զի ոչ գիտեն, թէ զինչ գործեն»։

Նա մեռաւ խաչի վրայ. փակուեցին Նրա կենսաբուխ շրթունքները, դադարեց քաղցրախօս լեզուն և հանգան Նրա լուսափայլ աչքերը։ Խնդացին խաչի մօտ հաւաքուած աշխարհի մարդիկ, ծափ զարկին, նորից մի քանի անգամ ծաղրեցին և այնէ պատրաստւում էին հանդիսաւ ու խաղաղ տուն դառնալ, երբ երկինքն ու երկիրը սկսան միասին ողբալ մարդկութեան ամենամեծ անարդարութիւնը։ Արևն ու լուսինը խաւարեցին, տաճարի վարագոյրը պատռուեց և մեծ երկրաշարժ եղաւ։ Մարդիկ սարսափած ցրուեցան Golgothայից և չէին կարողանում հաշիւ տալ իրենց՝ անցած դարձածի մասին։

Փրկչին դաղտնի աշակերտող Յովսէփ Արեմաթացին և Նիկոդիմոսը կարողացան իրաւունք ստանալ Պիղատոսից Յիսուսին թաղելու և թաղեցին մօտակայ պարտէզում փորուած մի դերեզմանում, որտեղ ոչ ոք չէր թաղուել։

Մարդկանց ձեռքով թաղուեց Աստուածորդին, կենաց բանի քարոզը, մահկանացու կարծուած ճշմարտութիւնը։

Խաչել տուողներն ու խաչողները, թէև տեսել էին Յիսուսի մահը, թէև գիտէին, որ Նրան թաղեցին, բայց երկիւղն ու կասկածը լցրել էր նրանց սիրտը՝ նամանաւանդ տեղի ունեցած արտակարգ երևոյթները դիտելուց յետոյ։ Նրանք յիշեցին, որ Աստուածորդին Յիսուս ասում էր, որ պէտք է մեռնի և թաղուի, բայց երրորդ օրը յարութիւն կառնի։ Նրանք հասկացան, որ երկու աւազակների հետ և նրանց խաչերի մէջտեղի խաչի վերայ խաչուածը սովորական մարդ չէր և կարևոր գործ պիտի կատարէր ամեն միջոցների դիմելու։ Սրանք իրենց սրտի խորքում զգում էին, որ իրենց պատճառած մահը վերջնական չէ և այդ պատճառով կնքեցին ճշմարտութեան դամբարանն ու պահապաններ կարգեցին, որ ոչ ոք չը մօտենայ և նա քայքայուի ու ոչնչանայ հողի տակ։

Սխալ էր մտորուած մարդկութեան հաշիւը և ծիծաղելի էին նրա ընտրած միջոցները ու յոյսերը։ Ճշմարտութիւնն երկրիս ծոցում կարողացաւ թաղուած մնալ մի-

միայն երկու օր և երրորդ օրն յարութիւն առաւ հրաշափառապէս. «ոչնչացրեց մահն ու աշխարհիս կեանք պարգևեց»։

Քրիստոս յարեաւ. մի՛թէ սորանից աւելի մեծ ոք կարող ես երևակայել, ճշմարտասէր եղբայր. մի՛թէ սորանից աւելի վեհ օրինակ կուզես կեանքիդ համար նոյն այդ կեանքի արհաւիրքով տանջուած եղբայր. մի՛թէ պարզ չէ քեզ համար մանկանացու տեղովդ անմահութիւնն՝ յարութեան հասնելու ճանապարհը։ Արիացիր քրիստոնեայ եղբայր. ճշմարտութիւն, աւետարանական ճշմարտութիւն սիրիր ու դրկիր, անվախ դնա սիրոյ և ընդհանուր եղբայրութեան շաւղով. թող Աւետարանի գծած շաւղից չեղուած մարդկութիւնը խաչ, երկաթեայ՝ խաչ բառնայ ուսիդ, թող փշով պսակի ճակատդ, անարգի և վարդապոյն արեամբ ներկի քեզ ճշմարտութեան ծառայ և ղինուոր լինելուդ համար։ Մի վհատուիր, մի կարծիր, թէ մինչև Golgotha չես կարողանալ հասցնել մարդկանց ձեռքով ձուլած խաչդ։ Փայթ չէ. կը գտնեն մի վաստակած հալալ ու մարդուր աշխատաւորին, նրան քեզ օգնական կանեն և դուք միասին կը տանէք այն մինչև Golgotha։

Իսկ այնտեղ, այնտեղ անմահութիւն է և ճշմարտութեան պատուանդան, և այդ ճշմարտութիւնը նա աւանդից մեզ՝—անձնազոհ սէր և հաւատար եղբայրութիւն քարոզելով։

Քրիստոս յարեաւ, քրիստոնեայ հայ եղբայր. բաց ճակատիդ կնճիռները. դրկիր Աւետարանն ու մի տատասկիր Քրկչի շաւղով մինչև Golgotha առաջնորդուելու։ Այդ է կեանքի ճշմարիտ ուղին. այդ է այն միակ կարճ ճանապարհը, որը տանում է դէպի կեանքն ու անմահութիւն, և այդ ճանապարհով միայն կարող ես գտնել յարութիւնն և յաւիտենական կեանքը։

Ե. ծ. վ. Մ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Երկարատև և այս տարի սովորականից խիստ և ցրտաշունչ ձմռանից ձանձրանալով, մանաւանդ քաշած թուլութիւնից և—տկարութիւնից յետոյ, Փետրվարի քսանին ազդիս Վեհափառ Հայրիկը կարճ ժամանակով օդափոխութեան համար մեկնեց Աղեքսանդրապոլ և Սանահին, որտեղից վերադարձաւ Մարտի մեկին։ Փետրուար ամսի վերջին տաք օրերի շնորհիւ ձիւնն արդէն վերացել էր Ա. բարատեան դաշտից և եղանակն էլ բաւականին տաքացել։ Վեհափառը համեմատաբար բաւականին կազդուրուած, յանկարծ ս. Լուսաւորչի Վիրապնամոի ոտնին ուխտ դնալ Խորվիրապ վանքը և ս. Էջմիածնից մեկնեց Երևան, բայց անձրևային եղանակն ու ճանապարհների վատութիւնն արգելք եղան Վերոնշազարդ Հայրապետի վաղատանց և Նա ս. Լուսաւորչի ոտնն Երևանում անցկացնելուց յետոյ, Մայր Աթոռ վերադարձաւ։

Ս. Էջմիածին վերադարձան Դէպրդ արքեպիսկոպոս Սուբէնեանը, Եպիչէ ծ. վարդապետ Մուրադեան և ա. Մեսրոպ ու ա. Մամբրէ վարդապետները, որոնցից վերջին երկուսը Թիֆլիզ էին դնացել տպարանական գործերով։

ՆԵՐՍԷՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

Մեր մտաւոր աշխարհահայեցողութեան վրայ ահագին ազդեցութիւն է թողնում պատմութեան ուսումնասիրութիւնը։ Լաւ, բազմակողմանի հմտութիւն ձեռք բերած պատմագէտը ոչ միայն պատմութիւնից իւր կեանքի և կենցաղի համար խրատներ է ընդունում, աղնուացնում իւր հոգին, նա միշտ կարող է նաև ապագայ դալիք

չարիքն և բարիքն մասին իւր խոհերն ունենալ։ Պատմական դործողութեանց մէջ կայ անկայականն, կարելի է ասել, նախագծուած հետևողութիւն, թելադրած բնութեան մէջ դործող օրէնքներով և ոչ թէ, ինչպէս առերևոյթ թուում է, պզրել անհատների և մեծ պատմական անձերի ցանկութիւններով ու կամքով ուղղուած։ Մի շարք անյայտ միացած և ուշադրութիւնից խուսափած հանդամանքներ միացած՝ յայտնի երևոյթներ են առաջ բերում, որ իբրև ակներև արդիւնք, միայն սովորական մտածման համար են ինքնաբերաբար և անկախ հրատարակւում։ Պատմութեան դասը խիստ շահաւէտ է հայերիս համար և մենք, որ ամենաչատ կարիքն ունինք, ամենից քիչ ենք օգտւում այդ դասից, որովհետև արևելցու ծուլութիւն ասեմ, դաբերի մոքսաւորութիւն և տանջանքներից առաջացած խոնջութիւն ասեմ, մեզ դարձրել են անտարբեր և թուլացրել մեր բնական հետաքրքրութիւնը։ Իբրև պատմական կեանքով ապրած հին ազգ, մենք իսկապէս պէտք է պատմութիւն սիրենք և հետամտենք նրա խորքերը հետախուզելու։ Եւ սակայն որքան քիչ բան ունինք կատարած մեր՝ թէ անցեալ և թէ ներկայ պատմութեան ուսումնասիրութեան նկատմամբ, մանաւանդ եթէ ի նկատի առնենք նաև այն հանդամանքը, որ պատմութիւնը պատկանում է այն սակաւաթիւ գիտական առարկաների շարքին, որով կարող է ղբաղուել և հայ ուսումնականը՝ փակուած իւր խցում, կամ մատնաւոր տանը։

Տասնուվեցերորդ դարում Զամչեանը առաջ իւր յայտնի Հայոց պատմութիւնը երեք հատորի մէջ ամփոփուած։ Համարեա երկու դար է անցել նրա ժամանակից և մենք կանդնած ենք նոյն կէտի վրայ և չունինք մեր անցեալ կեանքի ուսումնասիրութեան ամփոփումը, որ բաւարարութիւն տար ներկայ պահանջներին։ Հարկաւ այդ երկու դարում՝ անգործ չենք միացել, պատմական շատ կնճիռներ և չհասկացուած խնդիրներ լուծուել են կամ պարզաբանուել, եւրոպական դիտութեան բարերար ազդեցութիւնը աննկատելի չէ անցել մեզ համար. սակայն դեռ

չէ երևացել մի սահմագործող և միացնող քանքար, որ ցաք ու ցրիւ կատարուած աշխատութիւնների արդիւնքը կարողանար միացնել և մի ամբողջական գործ դնէր մեր առաջ։ Ի նկատի առնելով այդ հանգամանքը, աւժամանակ դոհ պիտի լինինք այն մարդկանց փորձերով, որոնք աւաղ, քար ու կիր են պատրաստում ապագայ շինութեան համար։ Այդ ձևի աշխատութիւն եմ համարում, եթէ խնդիրն ամփոփենք մեր նորագոյն պատմութեամբ, հանգուցեալ Երիցեանի, Դիւտ քահանայի և Լէօի հայոց նորագոյն պատմութեան նուիրուած աշխատութիւնները, Վենետիկի և Վիեննայի Մխիթարեանների երբոպա գաղթած գաղթական հայերի մասին կատարած ուսումնասիրութիւնները, Պ. Եղեանի նշանաւոր աշխատութիւնը՝ նուիրուած Պետրոս Մեծի հայերի հետ ունեցած յարաբերութեանը ևն։ Բոլորն ի մի հաւաքած բաւական ճոխացրել են մեր ունեցած պատմական պաշարը և լուսաբանել մեր նորագոյն պատմութեան շատ էջեր։ Եւ պէտք է ասած, որ քան մեծի մասին այդ պատմական, և ոչ թէ պատմական ու գրական ուսումնասիրութիւնները՝ բացատրութեամբ պ. Գարագաշեանի՝ Հայոց պատմութեան քառահատոր գրքի, կատարում են դլխաւորապէս վերջի գարերի համար, սկսած ԺԶ-ից, որովհետև այդ ժամանակուանից միայն, բացի պատմական—գրական հեղինակութիւններից, պահուած են նաև ժամանակակից դոկումենտներ—վաւերաթղթեր։ Եւ հէնց այդ պատճառով, մինչդեռ Հայոց հին պատմութիւն ուսումնասիրողը, քան գրական և պատմական հարցերը միմիանցից դժուարանում է անջատել, նորով պարապողը գործ ունի կամ կարող է ունենալ միայն քան պատմական խնդիրների հետ։

Մի հանգամանք ևս ուշադրութեան արժանի է։ Թէև շատ հեղինակները նիւթի մշակման զանազան ձև են ընտրել, ի նկատի առնելով, թէ ում համար են գրել և թէ ինչ հայեցակէտով են առաջնորդուել։ Մի քանիսը ձգտել են ընթերցող հայ հասարակութեան մեծամասնութեան ծանօթացնել մեր նորագոյն պատմական դէպքերի հետ։

Նոցա դէմառուր նպատակը չի եղել անյայտ կամ չ'լուծուած հարցեր լուծել, պատմական խնդիրներ մշակել, այլ սրոշ չափով պատրաստի, բայց ոչ ամենքին դիւրամատչելի նիւթերն ընդհանրացնել։ Անկասկած է, որ դա մի ծառայութիւն է և մեզ պէս կրթութեամբ յետ մնացած ժողովրդի համար անհրաժեշտ մի ձեռնարկութիւն։ Սակայն այդպիսի աշխատութիւնները իսկապէս օգտակար են միայն այն ժամանակ, երբ կատարուում են կամ ժողովրդական նացնելու ընդունակ մասնագէտների ձեռքով, կամ երբ սովորական աշխատողները հիմք են ընդունում մասնագիտապէս մշակուած և գիտութեան բովով անցած աշխատանքներ։ Սմենի մի մասնագիտական աշխատանք մի նպատակ ունի. առաջադրած խնդրի ճշմարիտ լուծումը գտնել։ Շատ մասնագէտներ սխալուում են, ահագին ջանքեր երբեմն ապարդիւն են անցնում, առանց դրական հետևանք թողնելու։ Այդ հանգամանքն երբեք չպիտի խանգարէ գնահատելու և շատ բարձր գնահատելու մասնագէտի անխոնջ որնածը, նրա չարչարանքների պատուղը։ Թեթև կերպով դրողը, ով ինքն իրեն աշխատանքի չի ենթարկում, կամ այլ և այլ պատճառներով չի կարող, ամբոխի, մեծամասնութեան առաջ երբեմն մեծ հեղինակութիւն է ստանում, միայն չպիտի մոռանալ, որ այդպիսի մարդիկ երբեմն մեծ չարիքների պատճառ են դառնում։ Նոքա թիւր կարծիքներ, հազար ու մի տարրական սխալ մտքեր են տարածում ընթերցողների մէջ, որի հետևանքը երբեմն խիստ սղալի է լինում։

Այդ իսկ պատճառով է, որ մենք ըստ ամենայնի դէմ կշիռ ենք համարում մասնագիտաբար, բայց բազմակողմանի կատարուած աշխատութիւնները. դոքա միայն են, այդ ճանապարհով ստացած դրական արդիւնքներն ամենահասարակ ընթերցողի համար էլ անհետ չեն կորչում։ Աննկատելի կերպով, դրաւոր կամ բերանացի կրկնութիւններով մասնագէտների ծանր աշխատութիւններով ստացած արդիւնքներն ընդհանրանում են, մեծամասնութեան սեփականութիւն դառնում։ Հ. Զամչեանը չէր կա-

րոշ իւր նշանաւոր պատմութիւնը գրել, եթէ երկար տա-
րիներ Մխիթարեան գրադարանում աղբիւրների ուսում-
նասիրութեամբ չզբաղէր և երբ նա միանգամ գործը կա-
տարել էր, այլ ևս դժուարութիւն չկար Պալատանեանների,
Զաքեաններին և Աբովեաններին համար՝ համառօտել, ժո-
ղովրդականացնել նրա կատարած գործը և ժողովրդի բոլոր
շրջաններին դիւրամատչելի կացուցանել։ Բայց միևնոյն
ժամանակ Հ. Զամչեանի կատարած աշխատանքի չնորհիւն է,
որ հնարաւոր է դարձել ժողովրդական պատմութիւն գրելը։

Այժմ մի հարց տանք, կարող է արդեօք Զամչեանի
գործը կատարող մի նոր անհատ դուրս գալ և մեզ տալ
մի պատմութիւն, որ ըստ ամենայնի գոհացնէր մեզ։ Դժ-
բախտաբար ոչ և ոչ մեզ ինչու։ Որքան էլ պատկառանքով ենք
յիշատակում Հ. Զամչեանի գործը, առանց հաշուի առնե-
լու նրա ներքին առաւելութիւնները և թերութիւնները,
մենք գիտենք, որ նրա համար անհամեմատ դիւր էր
հրատարակել մի պատմութիւն գրել, քան եթէ մեզ նորկայ
ժամանակներում կամենար համանման մի աշխատութեան
ձեռնարկել։ Նախ և առաջ օրովհետև հայկական բանասի-
րութիւնը նրա օրով դեռ նոր էր սկսուել հետաքրքրութեան
առարկայ դառնալ, պատմական եղած աղբիւրները բաւա-
կան սահմանափակ էին, աղբիւրներից իւրաքանչիւրի մա-
սին առանդաբար հատատուած հիմնաւոր կամ անհիմն
կազմուած համոզմունքը բաւական հաստատուն և անխախտ
էր և երկրորդ՝ պատմագիտը իւր աշխատանքը կարող էր
բաւական զոհացուցիչ ’ի կատար ածել, եթէ նա յաջողակ
վերապատմում էր այլ և այլ պատերազմների, իշխող
հարստութիւնների նկարագրութիւնը և պատմած դէպ-
քերի պատմական կապը հաստատուում։

Որքան այժմ փոխուած են պահանջները, մեծ այդ
նոցա չափը։ Մեր ոյր պատմագիրն է իւր տեղում և ժամ.
Ագաթանգեղոսը չորրորդ դարուց բերուել է հինգերորդ,
Ջենոբ Գլակը չորրորդից՝ ութներորդ, Մովսէս Խորենացու
մասին եղած վէճը մինչև օրս որոշ կէտի չի հանգուսւ։
Այս դրական հարցերի լուծումն էլ դեռ բաւական չէ,

քաղաքականի հետ անհրաժեշտ է ծանօթանալ բուն ժողովրդական կեանքին, նրա ներքին, մտաւոր շարժման բուն պատկերը վերականգնել. անհրաժեշտ է ուսումնասիրել նրա արուեստները, գրականութիւնն, իրաւունքը, մի խօսքով ազգի ներքին հոգեկան և մտաւոր կեանքի բոլոր արտայայտութիւնները։ Այս բոլորի վրայ աւելանում է մի բան էլ. մինչդեռ առաջ պատմութիւնը քաղում էին պատմական դէպքերից, մէկի հաղորդածը միւսով ստուգելով, կամ մէկի թերին միւսով լրացնելով, վերջին դարում աւելացել են մի շարք պատմական աղբիւրներ, որոնց մասին առաջներում գաղափար անգամ չունէին։ Այդ աղբիւրներն են հին դրամների դիտութիւնը, արձանագրութիւնների ուսումնասիրութիւնը և իբրև դնահատելի յաւելուած՝—աւելի ընդարձակ չափով քան հնումն էր—ժամանակակից վաւերաթղթերի դործածութիւնը. որ մեր պատմութեան մէջ, անկախ և ոչ մէկ պատմութիւնների մէջ, պահուած է սկսած Կիլիկիական թագաւորութեան ժամանակներից։

Պատմութեան այս օժանդակ և անհրաժեշտ գիտելիքները հայերիս մէջ ուսումնասիրութեան և ուշադրութեան առարկայ են դարձած պատահական կերպով, մասնաւոր անհատների, եթէ կարելի է այսպէս ասել, սիրողների կողմից։ Ցիշենք օրինակի համար Ղ. Ալիշանի նշանաւոր տեղեկագրական—պատմական երկերը. լի առնեռնակ հարուստ նիւթերով, Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանի Մատրագրութիւն հինգ գաւառաց Էջմիածնի, Մարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալեանի Ճանապարհորդութիւն ի մեծն Հայս, Հ. Ն. Մարգիսեանի՝ Տեղագրութիւնք ի փոքր և ի մեծ Հայս են, որոնք որոշ չափով աչքի ընկնող փորձեր են՝ օգտուելու պատմութեան համար հայկական բազմաթիւ արձանագրութիւններից, կամ Կ. Սիսլեանի դասաւորութիւն Ռուբինեան դրամոց աշխատութիւնը, որն արդէն, թէև միայն նուիրած է հայոց վերջի՝ Կիլիկական թագաւորութիւններին, ներկայացնում է բաւական լրիւ մի գործ, կազմուած համեմատ

գիտութեան նորագոյն պահանջներին։ Այս ուղղութեամբ առաջ գնալով, կարող ենք թուել նաև ուրիշ անուններ, որոնք չանք են գործ դրել վաւերաթղթեր հրատարակելու, հարևանցի կերպով ուսումնասիրելու հայկական երաժշտութիւնը, ճարտարապետութիւնը, մանրանկարչութիւնը, բայց իրողութիւնն այս է, որ կատարուած գործը տակաւին սահմանափակ և աննշան է՝ համեմատած առարկաների կարևորութեան հետ։ Եւ ինչպէս կարող է այդպիսի պայմաններում հայ պատմագէտ գործ դալ։

Այդ առարկաներից առայժմ միայն մէկը՝ արձանագրութեան ուսումնասիրութիւնը պէտք է հաւատալ, որ կանոնաւոր ընթացք կունենայ։ Այդ հաւատը հիմնուած է այն բանի վրայ, որ ինչպէս իւր ժամանակին յայտնուել է, պր. Մառը հայ և վրացի մասնագէտների աջակցութեամբ, Ս. Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերութեան ձեռնտուութեամբ, որոշել է հաւաքել հայերէն և վրացերէն արձանագրութիւնները, հրատարակել և պարզաբանել։ Իսկ միւս առարկաները տակաւին որոշ ծրագրի նիւթ չեն դարձել։ Ամենակարևորը գոցանից ես համարում եմ հասատատուն գրաւոր աղբիւրները, այն է՝ դիւանական գրութիւնները և վաւերաթղթերը։ Պիտ քահանայ Աղանեանի «Դիւան Հայոց Պատմութեան» հրատարակութիւնն անշուշտ ուշադրութեան և խրախուսանքի արժանի ձեռնարկութիւն է, բայց չպէտք է մոռանալ, որ համանման աշխատութեան համար թէ աւելի պատրաստութիւն է հարկաւոր և թէ մանաւանդ աւելի մեծ չրջանի ալակցութիւն։

Այդպիսի գործունէութեան յարմարագոյն տեղը, ինչ ասել կուզի, որ Էջմիածնի վանքն է, որտեղ թէ նիւթերի առատութիւն կայ և թէ հեշտ է ուրիշ տեղերից անդամ նիւթեր հաւաքել և թերութիւնները լրացնել։ Այսպէս օրինակ, անցեալ տարի Ա.ղ. Երիցեանի մատենադարանի հետ ստացուել են բազմաթիւ վաւերաթղթեր. չորս հազարի է հասնում Խաչիկ վարդապետի, մի մասնաւոր մարդու հաւաքած վաւերաթղթերի ժողովածուն և որքան նկատում եմ, մասնաւոր անհատներ մեծ ուրախութեամբ են լրենց

ձեռին ունեցած վաւերաթղթերը էջմիածնի մատենադարանին ուղարկում։ Դժբախտաբար մի ժամանակ հակառակն է տեղի ունեցել, ոչ թէ նրա են բերել, այլ էջմիածնից են վաւերաթղթեր դուրս տարել, ինչպէս ցոյց են տալիս վերոյիշեալ տառացուղ թղթերը. բայց ժամանակները փոխուել են. էջմիածնում էլ հասկանում են նոցա արժէքը և ձեռք բերած թուղթը պահում է առանձին խնամքով։ Դիտենք, որ բաւական չէ դեռ թղթեր հաւաքելը, աւելի օգտակար և անհրաժեշտ կ'լինէր, ուսումնասիրել եղած նիւթը և գոնէ արձանագրութիւնների ծրագրուած մշակման գործընթացաբար մշակել նոցա և եղած նիւթերը հրատարակել։

Թէ որքան կարևոր ձեռնարկութիւն կլինէր այդ, ապացուցելն աւելորդ է, բայց շատ ճշմարտութիւններ կան, որոնց կրկնութիւնը երբէք վնաս չէ և հետևեալում փորձում եմ միայն մի նոր օրինակ աւելի տալ ի հաստատութիւն այդքան տարրական մտքի։ Ներսէս Հինգերորդ կաթուղիկոսն, անկասկած, գիւտնագիտական մեծ հանճար է ունեցել և բացառիկ բախտով, նրա այդ ուղղութեամբ գործունէութեան և մտածման արդիւնքը համարեա թէ ամբողջութեամբ պահուած է ներկայումս նրա բազմաթիւ կոնդակների և թղթերի մէջ։ Այդ կրկնակի հանգամանքն չնորհիւ, շատերն են հետաքրքրուել նրա կեանքով ու գործունէութիւնով, փորձել են նրա մասնաւոր կամ ընդհանուր գործունէութեան նկարագիրը տալ, բայց Ներսէսն, ինչպէս մեր պատմական կեանքի շատ խոշոր դէմքեր, սպասում են իրենց պատմագրին։ Եւ պատմագիր կարող է երևան գալ, երբ կ'հաւաքուեն նախորդ պատրաստական աշխատութիւնները, երբ կ'գտնեն, մեկնութիւններով և բացատրութիւններով պարզաբանուած կհրատարակուեն նրա բազմաթիւ թղթակցութիւնները։ Այդ պատճառով այդպիսի մի աշխատութեան համար մի թեթև ցուցմունք անելն էլ, կարծում ենք, առանց յայտնի օգուտի չի լինիլ։

1901 թուին Պետերբուրգում գտնուած ժամանակ պ. Կ. Եղեան ինձ առաջարկեց ցուցակագրել Ամատուս-

եանի ձեռագրերի այն մասը, որ հանդամանքների չնպհիւ դեռ կարինի դպրոցը չի ուղարկուած, այլ պահւում է Եզեանի մօտ։ Սկիզբը նոյն իսկ պ. Եզեանին յայտնի չէր ձեռագրերի թիւը, որ տարիների ընթացքում, հանդուցեալ Սանասարեանի կենդանութեան օրով, փոքր առ փոքր ըստ մեծի մասին փողով, երբեմն նաև ընծայաբերութեամբ, ձեռք էին բերուել։ Ձեռագրերի թիւը հասնում է 189, հետն էլ հաշուած Սանասարեան վարժարանում գտնուածները, որոնցից 43 համարը արդէն ցուցակագրուած և ցուցակն էլ տպագրուած է պ. Հ. Ա.ճառեանի ձեռքով, սկիզբը Հ. Ամսօրեայում և ապա առանձին արտատպութեամբ[1])։ Այդ աշխատանքն ինձ մինչև տուեց Յանօթեանս լու Ներսէս կաթուղիկոսի կոնդակների հազուագիւտ ժողովածուի հետ, որ մեր կարծիքով Սանասարեան ձեռագրական ժողովածուի ընտրատոմն դանձերիցն է։

Այդ կոնդակները (153 համար ըստ կարդի ձեռագրաց) կազմուած են երեք հատորների մէջ, դրութեան սովորական թերթի վրայ, միածալ մեծութեամբ և բաղկացած են 1219 թերթից (հատոր Ա. ունի 400 բ 376 և գ 433 թերթ)։ Ժողովածուի հնագոյն կոնդակը 1844 թուականինն է, վերջինը 1856, Ներսէսի կաթողիկոսութեան հայրապետական ամբողջ ընթացքում։ Սակայն սխալ կ'լինէր կարծել, որ այդ ժողովածուի մէջ մտնէր ունինք Ներսէսի բոլոր դրուածների պատճէնները։ Կոնդակները դրուած են պատուական ձեռքերից, տակաւին օրինակներ Ներսէսի բնագիրն է, մի քանիսը նրա ձեռքով սրբագրուածներ են։ Այդ ժողովածուն հանդուցեալ Սանասարեանցին նուիրել է Ներսէսի աղգական Յարութիւն Շերմազանեանը և պէտք է կարծել, որ Շերմազանեանի տանըն էլ ի մի են կազմուել այդ երեք հատորները։

Ինձ յաջողուեց ցուցակագրել առաջին հատորը և երկրորդի մի մասը, 622 կոնդակ. առաջնում կայ 597 օրինակ, իսկ երեքը միասին կունենան 1500 օրինակից

1) Հ. Ա ճ ա ռ ե ա ն, Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին. Վիեննա, 1900.

աւելի։ Քանի որ, ինչպէս դիտենք, չատ չատ են Ներսիսի կենդանիները, պէտք է յուսալ, որ հիմք բռնելով այս ժողովածուն, ցանկացողը կարող է Ներսիսի, գոնէ կաթուղիկոսութեան օրով դրածներն ամբողջացնել։ Իմ ցուցակագրած մասը վերաբերում է 1844-ից մինչև 1849 թուական կանոնների և ըստ բովանդակութեան և կարևորութեան կարելի է մի քանի մասի բաժանել։ Հետևեալում ես փորձում եմ տալ իմ ցուցակագրած մասի բովանդակութիւնը, յարմարութեան համար ամբողջը մի քանի գլուխների բաժանելով։ Որպէսզի ընթերցողը չձանձրանայ, նմանօրինակ կանոնների մասին կենդակներից ստացած տեղեկութիւնը համառօտակի պատմել եմ, փոխանակ չոր ու ցամաք ցուցակագրութիւնը տալու։ Ինդրով մասնագիտաբար պարապողը կ'գտնի համապատասխան կենդակների թուահամարները, որը բուն ժողովածուի մէջ ինքս եմ նշանակել դուրսնաւոր մատիտով։ Այս էլ պիտի ասեմ, որ մեր մատենադարանում և Ա. Երիցեանի դրքերի մէջ բազմաթիւ են Ներսիսի կենդակները. առաջինները կարգաւորուած չեն, իսկ երիցեանինը մի քանի ցուցակներ ունի։ Սկզբում մտածում էի բոլորը միացնել և աւելի ամփոփ տեղեկութիւն հաղորդել, բայց որքան էլ ցանկալի լինի այդպիսի մի աշխատանք, ժամանակ չատ պահանջելով, կ'ձգձգուէր և կ'կատարուէր արդեօք երբ և է։ Այդ մտածմունքով բարւոք համարեցի ջոով բաւականանալ, աւելին յարմար ժամանակի, կամ ուրիշներին թողնելով։

1. *Կաթողիկոսական Պետերբուրգում ևս այլ ընդհանրական իրաւունքների վերահաստատութիւնը։* Ներսէսը կաթուղիկոս հաստատուեց 1843 թ. Օգոստոսի 13-ն, Նիկոլայոս առաջին կայսեր ներկայանալու համար Քիշնեւից ուղղևորուեց ս. Պետերբուրգ և անմիջապէս սկսեց կարգաւորել կաթուղիկոսական ծանրակշիռ խընդիրները՝ թէ դեպի տէրութիւնը և թէ դեպի իւր հօտն ունեցած յարաբերութեան մասին։ Այդ խնդիրներից կարևորագոյնն ընդհանրական կաթուղիկոսի իրաւանց ընդունելութիւնն էր Թուրքիայի և Ռուսիայի հայերի կող-

մից։ Յովհաննէս կաթուղիկոսի օրով այդ կապը խզուած էր, ընդհանրական կաթուղիկոսին պատասխանին չէին յիշատակում և ոչ էլ եկեղեցական խնդիրներում նրա կարգադրութիւններին հնազանդում։ Ներսէսը մեծ ջանք է գործ դնում և յաջողում է եկեղեցական այդ երկպառակութիւնը վերացնել ազգի միջից։ Այդ առթիւ բազմաթիւ են նրա գրած կոնդակները, ուղղած՝ «ամենապատուելի միաբանութեան սուրբ լուսաւորչեցւոց ազգի Հայոց, որք ի Կոստանդնուպոլիս և յամենայն շրջակայս նորին հոգեւոր տականաց և մարմնաւորականաց»... «առ Պատուական տուրս աքեպիսկոպոս պատրիարքն Կ. Պոլսոյ», «գերապարտ ազգասիրաց, ամիրայից, գործավարաց և մեծ տէրութեանն Օսմանեանն», «առ Զաքարիա արքեպիսկոպոս պատրիարքն սրբոյ Երուսաղէմի». Յովհաննէս արքեպիսկոպոսի ձեռքով, «առ Մաթէոս Աբելեան ի Կ. Պոլիս», «առ Կարապետ արքեպիսկոպոսն ի Կ. Պոլիս», «առ Յակոբ ազգայ Մաթէոսեան, Կարապետ ազգայ Յակոբեան, Բարսեղիւն ամիրայ Յովհաննիսեան և Զանիկ ամիրայ Սիմոնեան»։ Այս անձանց նուիրուած բոլոր գրութիւնները նոյն նիւթին են վերաբերում, բայց կրկնութիւն չեն ներկայացնում, այլ նայած թէ ում է գրութիւնն ուղղուած, քան այնմ էլ յարմարեցրած է բովանդակութիւնը և ձևը։ Առաջի (№ 1) կոնդակի մէջ Ներսէսը Թուրքահայերին գրում է. «Ծանուցանեմ, զի մեծագազօր կայսրն... բարեհաճեալ ընդ միաձայնութիւն պատգամաւորացն... զրամատապիւ ի 13-ն Օգոստոսի անցեալ 1843 ամի հաստատեաց զմեզ և... պարգևատց մեզ զբռնլիանդիայ օրդէն և տատ սրբոյն Աղէքսանդրի Նեւսկւոյ։ Հրամայեաց ձեռնել տատ ի Սանկտ Պետերբուրգ... յաղագս տատակագին լինն նուազութեանց անձնականաց հոգիւ ուրեմն անագան այժմ կարօղանամ յայտնել ձեզ և հաժողէն ազգիս... զբարեշնորհութիւն տէրութեանն»։

Այդ անդրանիկ հայրապետական կոնդակը գրուած է 1844 թ. Ապրիլի 21-ն Ս. Պետերբուրգում և կրում է տատրագրութիւն՝ «Եպիսկոպոսապետ և կաթուղիկոս Հայոց, պատրիարք սրբոյ Էջմիածնի, Ներսէս Աշտարակեցի»։

Նոյն թուականին Պօղոս Աստուածատուր պատրիարքին դրած կոնդակում հաղորդում է հետաքրքիր մանրամասնութիւններ, յայտնելով, որ 1843 ներքին գործոց վիճակագրից թատրի է ստացել և 1500 ռ. դանձարանից նպաստ պետերբուրգ գնալու, ուր տկարանալով պառկել է մահճում Օգոստոսի 3-ից մինչև Սեպտեմբերի 20-ը։ Տկարութեան պատճառով էր, որ թէև Օգոստոսի 15-ն էր կայսեր ներկայանալու ժամանակ նշանակուած, միայն Նոյեմբերի 28-ին է կարողացել այդ պարտքը կատարել № 2։

Մի քանի կոնդակներում (№№ 6, 7, 9) նկարագրում է իւր ներկայանալը Նիկողայոս կայսեր և առ Մատթէոս Աբելեան դրած թղթում, որին ուղարկում է Պօլիս ստացած բոլոր կոնդակների ռուսերէն թարգմանութիւնը —«չունելով ղայա... սեղեկութեանց ձերոց ձերում հայրենի լեզուի»—գրում է. «Ես եղէ համարձակաբարբառ յիշեցուցիչ անցելոցն բազմաց, թէ դու կայսր, քոյով յատկական հրովարտակաւ առիս յամի 1827 յամսեանն փետրվարի, առաքելոյ ինձ ի ձեան Դիպիչին, յանձնեցեր ինձ հաստատարմացուցանել հօտին յանձնեցելոյ իմում տեսչութեանդ՝ թէ յամենայն ժամանակս լինելոց նոցա անբեկանելի հաստատութեամբ իւրեանց առ աթոռ կայսրութեան ամենայն ստացից, լինելոց էք և դուք բաց աչօք պաշտպան նոցա։ Նմանպէս և եղբայր ձեր Աղեքսանդր կայսր ի Լիբցիկէ գրեալ էր ղղռտանօք առ ազգս հայոց, թէ պարտաւոր եմ ես յայտնել ի ներքոյ արեգական գտնուհակալութիւն իմ յազգէ հայոց՝ յազգաց անբեկանելի հաստատութեանց նոցուն։ Եւ այս ահա 44 ամ է հպատակութիւն հայոց սերնդեան ձեր, եթէ փոքրս իսկ յայտնեցեալ իցէ երբեմն ուժգնութեան ձերում նշանաւ անհաստատութեան հայոց։

Եւ ասաց նորին կայսերական մեծութիւնն, թէ ոչ երբէք, եւ վասն իմ վստահացայ ասել, թէ ի մասին անձին իմոյ ևս գերջանիկ զանձն իմ համարիմ թէ ունիցի ոք ի չափ մազի միոջ հաստատել զկայսրութիւն վասն իմում անհաստատութեան, իսկ ասա խնդրեմ... գհոփանաւո-

թեթիևն... տուեալ ղողջոյն հրաժարական համբուրիւ ձեռաց արձակեցաք»։

Ներսէսը, վճռած լինելով ազգի միջից վերացնելու կաթուղիկոսական ընդհանրական իրաւունքի չընդունելու մասին ծագած տարաձայնութիւնները, մաքեր պատրաստելու համար, կոչնակի չօշափում է այդ հարցը և հռոմէական եկեղեցւոյ օրինակով ցոյց տալիս, թէ ինչ ահագին նշանակութիւն ունի միութիւնը (№ 3)։

Պօլսում կաթուղիկոսի յարուցած խնդիրն արդեօք նեղի է պատահում, յատկապէս Ամասուածատուր պատրիարքի կողմից և Ներսէսը ստիպուած միջնորդ է ձգում Յարութիւն և Ջանիկ ամիրաներին, Յակոբ և Կարապետ աղաներին, որոնց մօտ յանձնարարական թղթերով ուղարկում է Երեմիա Դէօղդեան Արծրունեան։ Այդ միջոցին Պօլսում տեղի են ունենում պատրիարքների փոխանակութիւն՝ Ամասուածատուրին հեռանում է Կարապետ արքեպիսկոպոսը, որան էլ Մատթէոսը և Ներսէսը ի վերջոյ հաստում է իւր նպատակին։ (Կոնդակների ժողովածուի մէջ այդ խնդիրը չօշափում են №№ 1—4, 6, 8—17, 31, 36, 42, 45—55 և 59 կոնդակները)։

Հազիւ թէ Ներսէսի այդ նեղթի մասին դրած թղթերը միայն այդքան լինէին. ժողովածուն շատ թերի է. օրինակի համար, 1844 մինչև Դեկտեմբերի 4-ը նրա դրած թղթերի համարը հասնում է 232-ի,—կոնդակներից մեծագոյն մասը ունին համարներ—մինչդեռ ժողովածուի մէջ ունենք նոյն տարուց 29 կոնդակ, 30-ըդն Դեկտ. 21-ից է, հետևապէս Ներսէսի գրած մօտ 250 կոնդակից կայ միայն մի ութերորդ մասը։ Նոյն էլ կարելի է ասել նաև հետևեալ տարիների մասին. օր. 1845-ին մինչև Յունիսի 23-ը նա գրել է 106 համար կոնդակ, մինչ ժողովածուի մէջ պահուած է 23 օրինակ և այսպէս էլ միւս տարիներից։ Միայն թէ պահպանուած յայնորդական համարների չնորհիւ դիւրին է ստուգել կորած թղթերի քանակութիւնը և այլոյ գանուածների հետ ի միասին ըստ կարելոյն ամբողջացնել Ներսիսի գրագրութիւնը։

Մեծ տեղեկութիւնները, որ մենք կարող ենք քաղել այդ կենդանիներից, անչուշտ այնքան մեծ նշանակութիւն չունին, որքան ժամանակագրական հայոց եկեղեցում ծագած պատակման վերացման խնդիրը, սակայն նորանից իւրաքանչիւրն այն ժամանակներում հասարակական ընաւորութիւն ունէր և պատմագիրը պարտաւորեալ նոցա հետ պէտք է ծանօթ լինի։

2. *Առաջնորդական հարցը արտաստահմանում ապրող հայերի մէջ։* Մեծ խնդիր էր Վալախիայի, Ռումինիայի և Մոլդաւիայի հայերի առաջնորդական հարցը, որ ներսէսը կամենում էր նախ քան Էջմիածին դնալը, Բիչինևից՝ աւելի մօտ տեղից կարգաւորել։ Այդ նպատակի համար նա իր մօտ է կանչում Վալախիոյ և Մոլդաւիոյ վիճակաւոր Դէսորդ եպիսկոպոսին, սակայն նրան չեն թողնում ահմանից ներս գալ հակառակ այն բանի, որ «օրինօք տէրութեան ռուսաց ի տալն զղրամօտ վասն կաթուղիկոսութեան հայոց՝ տային և զհրամանագիրս աժենայն սահմանապահաց Ռուսաստանու ընկալնուլ ի սահմանանս ռուսաց զամենայն հոգևորականս հայոց՝ ունոզս զհրամանագիրս կաթուղիկոսի Էջմիածնի վասն մոտանելոյ ի սահման Ռուսաց» և հենց այդ օրէնքի հիման վրայ կաթուղիկոսը, կարծելով «թէ վասն մեր ևս իցէ զրեցեալ», ուզղակի հրաւիրել էր Դէսորդ եպիսկոպոսին։ Որպէսզի սորա հետ պատահած անհաճոյ դէպքը ուրիշ հոգևորականների հետ էլ չկրկնուի ներսէսը թղթով դիմում է մինիստրին։ Մոլդաւիոյ առաջնորդական հարցը կայանում էր նրանում, որ հայերը ոչ միայն հրաժարուում էին պատրիարքից նշանակուած առաջնորդին ընդունելու, այլ Ներսիսի տուած հարցերին, թէ տեղական հայ եկեղեցին ինչ կալուածներ ունի, ինչ պիսի դպրոցներ և թէ սորա ինչ վիճակում են, պատասխանում են թէ՝ իրաւ է եկեղեցիներին կից կալուածներ կան, բայց դորա պատկանում են ազգին և ոչ թէ եկեղեցուն և հետևապէս պարտաւոր չեն հոգևոր իշխանութեանը մերձաւոր հաշիւ և տեղեկութիւն տալու։ Ժողովրդի հակառակութեան և դադրման պատճառ-

Ներսէս կրկնակի էին. կաթոլիկների ազդեցութիւնը, որոնք յաջողցրել էին հայոց գպրոցում տեսուչ և կրօնի դասատու կարգել լատինահայ Սերոբէ Պապիկեանին և Պօղոս պատրիարքի թուլութիւնը, որ տեղի էր տուել Մալաթիոյ հայերի ամբաստանութեանը և երկու պատրիարքների կոնդակով հաստատուած Դէօրթ եպիսկոպոսին՝ իբրև անարժանի՝ հեռացնել, և միևնոյն ժամանակ այդ անարժան հրաւիրակուածին ուրիշ տեղ պաշտօնի կանչել։ Ներսէս պատրիարքին այդ առթիւ դրում է. հարկաւոր է անենալ զօրեղ իշխանութիւն և անընկճելի կերպով պաշտպանել եկեղեցու իրաւունքները։

Ա.յդ հարցին նուիրուած են №№ 20—29 և 38 կոնդակները, որոնց մի մասը գրուած է մանաւանդ անձանց, և Ներսէսը, նոցա յիշեցնելով իւր վաղեմի անձնական ծանօթութիւնը, բացատրում է ազգի և եկեղեցու շահը և հրաւիրում է աջակցել վերջացնելու ազգային վէճերը։ Ժողովածուի մէջ հարցի վերաճանաչման եղբի մասին կոնդակներ չեն պահուած։

3. *Ամասիոյ Հայոց եկեղեցու խնդիրը։* Ներսիսեան հետաքրքրում էր Ամասիոյ անձուկ մնացած հայոց եկեղեցու վիճակը։ Պօղոս Յովհաննէս առաքեալ Տատեանը այդ եկեղեցու մասին տեղեկութիւններ էր տրել Ներսէսին և սա հիմնուած դրա վրայ «Ներսիսեան գործոց վիճակագրի» միջոցով «օտարականաց վիճակագրին» դրել է տուել Օսմանեան կառավարութեան, պահպանելով հայոց եկեղեցու անկախանութեան իրաւունքները։ Ա.յդ խնդրի առթիւ Պօղոս պատրիարքի հետ համերաշխ գործելու դիտաւորութեամբ, իր գրագրութիւնների պատճէնները նրան է ուղարկում և նրանից լրացուցիչ տեղեկութիւններ խնդրում (Կոնդակներ №№ 18, 39.)։

4. *Ասորոց պատրիարքի յարաբերութիւնը Ներսիսի հետ։* Քանի Ներսէսը Պետերբուրգումն էր գտնուում, ասորոց պատրիարքը մահմեդականներից հալածուած, դիմում է նրան և խնդրում նրա միջնորդութիւնը ռուս կառավարութեան առաջ, որ պաշտպանեն նոցա Ներսէսը

կատարում է նորա խնդիրքը, դիմում է նոքին դարձոց վինհատրին և իւր միջնորդութեան մասին հաղորդում է տարբիներին (կոնդ. № 12, 19.)։

5. *Սալմանթեան Սերովբէ եւ Գէորգ եպիսկոպոսների եւ Գ. ք. Պատկանեանի մասին զրած կոնդակներ։* Մի քանի կոնդակներ կարևոր կենսագրական տեղեկութիւններ են պարունակում Սալմանթեան եպիսկոպոսի (№ 34, 37) Գաբրիէլ քահանայ Պատկանեանի և Հաչատրեանի առաջնորդ Սերովբէ եպիսկոպոսի (№ 61 և 246) մասին։ Սոցանից առաջինն Ներսէսը Պօղոսի ուսուցչապետի միջոցով արգելել էր Ռուսաստան մտնել և այդ մասին պատրիարքին գրում է իւր վարմունքի չարժառիթը. Գաբրիէլ քահանային մերժում է նիժնի նովգորոդի ժամանակաւոր հովիւ նշանակելու, իսկ Սերովբէ եպիսկոպոսին գրում է, որ ինքը 1822 թ. Յունվարի վոլֆ անդղիացուց պարգև է ընդունել Հէնրի Մարտէն անդղիացի քարոզչի ճանապարհորդութիւնը, տպագրուած Լոնդոնում 1822 թ. «Հայերէն թարգմանութեամբ»։ Այդ գրքի մէջ ասուած է, որ Հէնրի Մարտէնը 1812 թ. Էջմիածնում եղած ժամանակ Սերովբէ եպիսկոպոսից լսել է, որ Էջմիածնի իսկական կաթուղիկոսը ոչ թէ Եփրեմը, այլ Ներսէսն է, որ հայոց եկեղեցու մէջ կան մեծամեծ թերութիւններ են։ Կոնդակում ասուած է. «Ընդհամ չնորհ կալնուլ կարողալ զայն արժանաւորապէս մատդրութեամբ... ասլ մեզ զբացատրութիւն»։ Գրուածքի ոճը խիստ հեղնական է և կարող է լայս ասուել Ներսէսի բնաւորութեան այնպիսի յատկութեան վրայ, որ գովելի կոչել յամենայն դէպս չի կարելի։ 1812—1846 թիւը սա պահելու համար խիստ երկար ժամանակամիջոց է։ Երբ Սերովբէն 1847 թ. մեռնում է, Ներսէսը Թիֆլիզից իւր տեղապահ Դաւիթ արքեպիսկոպոսին գրում է. «Մեք համարեմք զվախճան Սերովբէի և Գէորգ եպիսկոպոսացն՝ ոչ առանց յատկական այցելութեան Աստուծոյ իւրումն հրաշակերտ ատճարի և մեր ամենեցուն» (№№ 364, 367, 368, 372, 376, 377)։ Այստեղ յիշած Գէորգ եպիսկոպոսը Ախալցխայի յաջորդն էր,

Կարապետ Տայեցի եպիսկոպոսի, Թիֆլիզի առաջնորդի ձեռնասունը։ Նրա մահուան առթիւ մեծ ընդհարում տեղի ունեցաւ Կարապետ եպիսկոպոսի և կաթուղիկոսի մէջ. կաթուղիկոսը հրամայել էր հնձել նրա դայլն ու թըզթերը՝ քննութիւն անելու համար, իսկ Կարապետը հակառակ կարգադրութիւն էր արել (№№ 328—331, 336, 339, 340, 348, 350, 359—363, 402, 430, 433, 473, 534, 575)։

6. *Կաթողիկոսի վերադարձն Էջմիածին եւ Օծումը։* Ներսէսը մայրաքաղաքից փոխանակ ուղղակի Մայր Աթոռ վերադառնալու, գնում է և բաւական ժամանակ մնում է Պետերբուրգում—մենք տեսանք թէ ինչ դժուարաւոր խնդիրների պատճառաւ—բայց կային նաև ուրիշ փոքրիկ տեղական թեմական խնդիրներ, որ նախկին առաջնորդն ուզում էր կարգաւորել և այնպէս հեռանալ։ Նրա զանազան կոնդակները մի տեսակ օրագրութիւն են նրա արածների համար և մինչ են տալիս ժամանակագրական կարգով հետևելու, թէ նա երբ վերադարձաւ Էջմիածին, ճանապարհին ինչ բազաքներում որքան մնաց, մինչև որ 1846 թուի Մայիսի 13-ին հասաւ Մայր Աթոռ։ Պետերբուրգից յետոյ ամենից երկար կանգ է առել Թիֆլիզում՝ 1845 թ. Դեկտեմբերի 17-ից մինչև հետևեալ տարուայ Մայիս ամիսը։ Էջմիածին հասնելուց մօտ մի ամիս յետոյ, Յունիսի 9-ին ձեռնադրւում է կաթուղիկոս, իսկ միւռոնօրհնութեան հանդէսը յետաձգում է մինչև Հոկտեմբերի 27-ը։ Ժողովածուի մէջ չկայ նրա հայրապետական անդրանիկ կոնդակի պատճէնը, այլ միայն Թուրքահայերին և մի քանի մանաւոր անձանց ուղարկուած օրհնութեան և ողջոյնի թղթեր (№ 63)։

(Շարունակելի)։

ՏԱՃԱՀԱՅՔ

Ադրիանարի թեմը. Պատրիարքարանին դարձեալ առիթ է ներկայացել զբաղուելու Աղթամարին վերաբերող խնդիրներով:

Տեղւոյն միաբաններէն երեք վարդապետները՝ Եղնիկ, Երեմիա և Դանիէլ՝ վանքը թողել և հեռացել են Վան. իսկ թէ ինչ պատճառով, այդ չէ գրուած: Միայն երկու տողով «Մանզումէն» յիշում է թէ. «Վանէն դարձեալ դանդաղապիները հասած են Պատրիարքարան. Աղթամարի կաթուղիկոսական Տեղապահ Տ. Արսէն վրդ.-ի դէմ և խնդրած են որ անմիջական դարման մը տուէ»: Այս բոլորից երևում է, որ կարևոր, բայց անմխիթարական անցքեր են կատարւում կաթ. թեմում: Վանքը թողնող վարդապետների համար եղած կարգադրութեան մասին կարդում ենք «Մանզումէում»:

Վանայ Գաւառ. Վարչութիւնը տեղեկագրած էր թէ Աղթամարէն հեռանալով, Վան եկող երեք վարդապետները Վարագ և Կարմրոսի վանաց մէջ զետեղուած են իբրև հիւր առաջնորդաց և այս մասին անօրինութիւն մը կը խնդրէր: Ժողովը (կ. Պոլսի) որոշեց յանձնարարել Վանայ առաջ. տեղապահ Տ. Մահակ եպս.-ի՝ այդ վանքերուն մէջ պահել յիշեալ վարդապետները ժամանակի մը համար:

Բարեգործութիւններ.

Եդեսիոյ ազգային հիւանդանոցը համարեա ապառում է Պատրիարքարանի և հայ բարերարների ուշադրութեան մեծ մասը: Այդ հաստատութիւնն առանց այն էլ արդէն այժմ մի վիթխարի բարեգործական հիմնարկութիւն է և կլանում է տարեկան մօտ 120,000 ր. նպաստ, որպիսի համեմատութեամբ դժբախտաբար կարծողներ կան, թէ բարերար արդիւնքները չեն տացում: Այս դրութեամբ արդէն տարեկան հազարաւոր տպաւորանեաններին լնամում է իւր հովանու տակ, բայց դարձեալ աւելի և աւելի ընդարձակուելու վերայ է: Շինութեան մի թև ևս ուզում է աւելացնել Հոգաբարձութիւնը, որը գլուխ բերելու համար անհրաժեշտ է համարւում մօտ 93,000 ր. Այս խնդրի մասին կարդում ենք «Արևելքում»:

Մեր և Յունաց հիւանդանոցներուն հոգաբարձութեանց մէջև վերջապէս համաձայնութիւն գոյանալու վրայ է այն գետնին գնման համար, որ բանջարանոցի կը ծառայէ Յունաց հի-

ւանդանոցին և որուն վրայ պէտք է կառուցուի մեր հիւանդա-
նոցին երրորդ թևը՝ հետևեալ չորս բաժանումներով:

1. 2000 (!) անկողիններոց շէնք մը անբուժելի հիւանդու-
թեամբ տառապողներուն համար: 2. Ուրիշ հարկ մը վտքբնկ
տղաքներուն և որբուհիներուն համար, որոնք հիմա Յիմարանո-
ցին վերնայարկը կը պատսպարուին: 3. Ծերերու և պառաւնե-
րու համար: 4. Ուրիշ շէնք մը ուր տարափոխիկ հիւանդութեան
մը ծագման պարագային հիւանդները պիտի մեկուսացուին:

Այս շինութիւնները 10,000 ոսկիի կը կարօտին: Առաջին
և երկրորդ մասերուն համար երկու բարերարներ յանձն առած
են 2000ական ոսկի տալ, պայմանաւ, որ վերջին կատարելագոր-
ծութեան մեթոդներով շինուին անոնք, առաղջապահիկ միջոց-
ներու բովանդակ կիրառումով: Երրորդ մասին համար ալ ուրիշ
բարերար մը խոստացած է պէտք եղած գումարը տալ:

Մի ուրիշ կրթական նուիրատուութիւն ենք կարդում «Ա-
րևելքում»:

Տիկին Եփտարլինէ Նադիրեանց, որ տարիներէ ի վեր Վա-
նայ Սալնապատի աղջկանց որբանոցին կը նպաստէր, այս ան-
գամ ալ Վանայ Ս. Առաջնորդին միջոցաւ 170 ոսկիի (1500 ր.)
նպաստ մը ղրկած է յանուն իր և Ս. Հայրապետեան՝ Վա-
նայ ազգային վարժարաններուն: Այնիւ բարերարուհին նոյն-
պէս 51 ոսկիի նուէր մը ղրկեր է Սալնապատի աղջկանց դպրոց-
ին: Սոյն կրկնակի նուիրատուութեանց առթիւ, ն. Ս. օծու-
թեան կոմիէ Վանայ Ս. Առաջնորդին ուղղուած հրամանին հա-
մաձայն, քաղքին եկեղեցիներուն մէջ հոգեհանդստեան պաշ-
ամօն կատարուել է Տիկին Եփտարլինէ Նադիրեանցի ննջեցեալ-
ներուն յիշատակին:

Երզարան մանուկների համար.

Ս. Պատրիարք Օրմանեանը իւր պաշտօնական զբաղմունքից
պատ ժամանակ է գտնում անձամբ շատ անգամ դանդան
կրթական և այլ երկրորդական խնդիրներով էլ պարապելու: Վեր-
նորերս կազմեց մի բազմայոդուած կանոնադրութիւն Պօլսի
թաղային վարժարանների ընթացսւ արարների քննութեան հա-
մար: Այժմ ևս կարդում ենք «Մանզումէում»:

Ամենապատիւ Ս. Պատրիարք հայրը, որ իր հոգածութե-
նէն գլուխ բաժին հանել ամեն օգտակար աշխատութեանց,
մանուկներու համար նոր երգերու պատրաստութեան պէտքը
շեշտած էր դեռ մօտ օրերս, և նոյն իսկ վարդապ յայտնած էր

յանձնաժողով մալ կազմել այս առթիւ: Դոհութեամբ կը լսենք թէ Պէշկթաշլի Ս. Աստուածածնին եկեղեցւոյ հմուտ երաժշտապետ Ալամ էֆ. Բժշկեան, որուն երաժշտական ձեռնհասութիւնը դանօթ է ապրիէն, երկարաշունչ աշխութեամբ պատրաստած է ճոխ երգարան մը՝ որ ըստ ըսվին նոր պիտի լլլայ իր տեսակին մէջ: Այս մանկական երգերը համբաւաւոր են կարող պրոֆէսիոներու կողմէ՝ թարգմանաբար կամ ինքնագիր, եւ եղանակները քաղուած են մեծաւ մասամբ եւրոպական ձեռնհաս երգահաններու արուեստագործներէն, զորանք երկասիրողը փափաք է պատշաճեցնել մեր մանկապարտէզներու մթնոլորտին: Գործը վաւերացած է արդէն ուսումնական խորհուրդէն, և մօտ օրէն վաւերացուելով նաև կրթական նախարարութենէ, պիտի հրատարակուի նոր և փնտռատուելի տարողով մը:

Աշխարհաբար Շարական.

Անցեալ տարի «Մանուկէն Եֆքեար» թերթի համբաւը պարբերաբար իւր թերթի բանասիրականում հրատարակեց Գրիգոր Նարեկացու ազօթագիրքը, որն առաջ արուեստալով, առանձին գիրք կազմեց:

Այժմ նոյն թերթում կարդում ենք:

Այսօր հրապարակ կելնէ Հայ. Ս. եկեղեցւոյ Շարականներու աշխարհաբար թարգմանութիւնը, որուն այնչափ կարօտով կսպասէր հանրութիւնը, անոր առաջին մասին այնչափ յաջող թարգմանութիւնը կարդալէ ետք:

Թարգմանիչը թէ գրաբարի և թէ աշխարհաբարի մէջ ունեցած ձեռնհասութեամբը հանրածանօթ ուսուցիչ և թերթիս աւագ համբաւիը (աշխատակից) Երուանդ էֆ. Տ. Անդրէասեանն է, որուն կարդացուածքին մասին պարտական ենք մեր կարծիքը յայտնել:

Հմուտ թարգմանիչը, որ լեզուներու չափ ալ քաջատեղեակ է նաև կրօնական խնդիրներու և ուղղ ու ճշտը հանած է Ս. Գրքին և սրբազան մատեաններուն, անվիճելի ձեռնհասութեամբ մը պրպտրպէ աշխարհաբարի վերածած է շարականներու գոհար շարքը, զրաբարին հետ դէմ դէմի դնելով աշխարհաբար թարգմանութիւնը.—Ուն բառերէն գանկան կանոնը, Աղուհացի ամբողջ կանոնները, Աւագ Շաբաթու շարականներն ամբողջութեամբ, Արևապալի երգերը, Նայեաց Սիրովը, Ի քէն Հայցեմքը. Հոգեբարեաեան կանոնը, և այլն, և այլն:

Գիրքն, որ 163 էջերէ կազմուհանայ, մաքուր տպագրութեամբ հրապարակ ելած է և 5 դրուշի (40 կ.) անհատատալի ածանու-

թեամբ կը ծախսուի Պապը Ալի ճատաէսի, 38 թիւ Վաթման գրասուենը և ամբողջ հայ գրավաճառներու և ցրուիչներու քով:

—Տաճկահայաստանի դպրոցները թէև ունեն բաւական թուով տարրական դպրոցներ, բայց մինչ պահպանել են նոցա միջնակարգ դպրոցները, որոնք կարողանային պատրաստել հոգևորականներ և ուսուցիչներ: Թէև կան այդպիսի նպատակներին համար Աբմաշ և Սանասարեանը, բայց դրանք միայն բաւական չեն ժողովրդի ունեցող մեծ կարիքը գոհացնելու: Այդ դպրոցի պահպանը դարմանելու համար, թէ դպրոցական առաջնորդները և թէ ինք ժողովուրդը շատ են մտածում, բայց ոչ մի դրական եղրակացութեան չեն հասնում աւելի ժողովրդի աղքատութեան և մասամբ հարուստ դասակարգի անտարբերութեան պատճառաւ: Շատ վանահայրեր կամ առաջնորդներ մտածել են կեդրոնական վանքերում այդ նպատակի համար քայ անել ընծայարաններ, բայց միշտ անյաջող է եղել: Թերթերից լսեցանք, որ անցեալ տարի մտադրութիւն է եղել Վասպուրականի բազմահարուստ թեմի համար ընծայարան քայ անել Վարագում, բայց ի հարկէ ի դուր: Այժմ ևս կարդում ենք «Մանզումիում» հետևեալը:

Մշոյ Պատր. Փոխանորդ Տ. Դնել Ծ. վ. Ս. Կարապետի Վանքին մէջ որբանոց վարժարանէն զատ՝ ընծայարան մը բանալու մտադիր է, հրատ., ամբողջ վիճակին քահանայացուները կրթելու նպատակով:

—Բաղէշի Առաջնորդարանէն եղէկ պատրիարքարան հասած նամակ մը, որ ստորագրուած է առաջնորդական վոխանորդին և Կրօնական ու Բաղաքական ժողովոց քարտ. անդամներէն, կը խնդրէ որ նրանց առաջնորդին եպիսկոպոսական ատիճան արուի տեղւոյն քրիստոնեայ յարանուանութեանց հոգևոր աղդեցութիւնն հակակշռելու համար:

Ատն ժողովն արդէն որոշած էր տալ պահանջուած վկայականը, սակայն Մայր Աթոռոյ արդի դրութերուն պատճառաւ՝ թէ՛ Բաղէշի և թէ Տիարպէքիրի առաջնորդներուն ուղևորութիւնն յետաձգուեցաւ:

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՕԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Պէտք է նկատել, որ ցայսօր Ռուսաստանում ծխական—համայնական կազմակերպութիւնը դոյութիւն չունի և ռուս հոգևորականները ոչ ժողովրդից կախումն ունին և ոչ էլ ծխական—համայնական դործերին են մասնակցում:

Այժմ արդէն ձայներ են լսւում մայնելու ծխական—համայնական սիստեմը (ձևը) և «եկեղեցական համբաւաբերն» (Церк. Вѣс.) արդարացի կերպով պահանջում է, որ ծխական քահանան իրաւունք ունենայ ծխական, ղեմսուվային և քաղաքային ընտրութիւններին մասնակցելու՝ թէ նրանց ընտրող և թէ նրանց ընտրելի: Թերթը նկատում է, որ քահանան այդպիսով կը կապուի ժողովրդի հետ և կը կարողանայ պաշտպանել նրա կրօնական—բարոյական շահերը:

*Նոյն թերթում կարդում ենք. «Վաղուց նկատուած է, որ ժողովուրդը քարոզի ժամանակ չի մնում եկեղեցում, չի ուզում լսել և եկեղեցուց դուրս է դալիս: Դրա պատճառը քարոզ ասելու ժամանակի անյարմարութեան մէջն է, որովհետև քարոզ են խօսում մեղանում սովորաբար պատարագի վերջին, երբ ժողովուրդն արդէն յոգնած է լինում և դուրկ քարոզ լսելու տրամադրութիւնից: Պէտք է քարոզել ճաշու աւետարանից յետոյ և այն էլ ոչ թէ ըեմից, այլ եկեղեցու մէջ տեղում յատկապէս դրա համար շինած ամբիոնից, և այնպէս պէտք է անել, որ քարոզն լրեն բովանդակութեամբ հետաքրքիր լինի ժողովրդին, կապուի նրան ղբաղեցնող առօրեայ խնդիրների հետ և ժամակարգութեան անբաժան մասը կազմի»:**

Ինչպէս ամբողջ Ռուսաստանի, այնպէս էլ բուն ռուսական եկեղեցին ոգատ չը մնաց Հեռաւոր Արևելքում ծագած պատերազմի ազդեցութիւնից և նրա ալիքներն հասան ու ցնցեցին

---

* Հայաստանեայց եկեղեցին այս կողմից ունի բաւականին մեծ յարմարութիւն՝ բարձր բեմ եւ խոսողներն էլ սովորաբար խօսում են պատարագի կիսին. բայց ափսոս որ քարոզը մեր ժամակարգութեան անբաժան մասն ու պարտադիր պահանջ չի կազմում:

աշխարհականների հետ՝ հոգևորականութիւնն ու նրա իրաւասութեան ենթակայ բոլոր դպրոցական հաստատութիւններն: Եկեղեցական Համբաւաբերն (Церковный Вѣстникъ) իւր № 6-ում նկարագրում է ս. Պետերբուրգի հոգևոր ճեմարանում կատարուած մաղթանքն ու Բարձրագոյն հրովարտակի ընթերցանութիւնն և առաջ է բերում ճեմարանի տեսչի հետևեալ ճառը.—Եղբայրնե՛ր. հնչեց ահա ճակատագրական ժամը: Պատերազմի ուրուականը միանգամայն անսպասելի կերպով կանգնեց մեր աչքի առաջ.... Մինչև օրս մենք կարող էինք վիճաբանութիւն անել, վիճել, դատել՝ թէ ինչ է պատերազմը, նեղելի է արդեօք, թէ ոչ. մենք Հեռաւոր Արևելքում որ և է դործի ձեռնարկելու, պատերազմելու կարիք ունէինք, թէ ոչ: Այժմ հատաւ այդ բոլոր դատաղութիւնների վերջը: Այժմ արդէն գիտենք, որ այնտեղ՝ Հեռաւոր Արևելքում թշնամու դէնքն ուղղուած է մեր հարազատ եղբայրների որդին, որ այժմ այնտեղ արիւն են թափում և ծովի ատեն ալիքներում կատրւում են նրանք, որոնց աշխատանքով և քրտինքով է ստեղծուել մեր բարեկեցութիւնը, որոնց չնորհն ու դէպի ամեն վատնդ ցոյց տուած անպատուիրէ վճռականութիւնը մեզ հնարաւորութիւն է տալիս վայելելու քաղաքակրթութեան բոլոր բարիքներն ու անհոդ ներկայութիւն անելու:

Թշնամին, խորամանկ և չը կանդգուղ թշնամին, հպարտացած իւր արագին յաջողութիւնով և սառնարիւն իւր անպիտութեան ժամանակ, բարձրացրել է յանդուգն ձեռքը մեր սրբերի ս. Ուսուցանողի դէմ. կամենում է ստորացնել, նսեմացնել նրա վարքը, և խախտել նրա այժն ու նշանակութիւնն երկրիս վրայ: Ինդիրը մեր ինքնասիրութեան կամ հպարտութեան չի վերաբերում: Այնտեղ՝—Հեռաւոր Արևելքում այժմ իրար դէմ կռիւ են մղում երկու այժեր՝ քրիստոնէական կրօնն ու խաւար կռապաշտութիւնը: Չէ որ ռուսաց իշխանութեան հետ այնտեղ հաստատուում է Քրիստոսի խաչը, նրա հետ յաղթանակում է պրաւօսլաւ եկեղեցին. ռուսաց ազդեցութեան հետ՝ Արևելքը լուսաւորուում է ճշմարտութեան լուսով. մինչդեռ ճապօնացին ուղում է հաստատել իւր ազդեցութիւնը, իւր չար կապաշտական և դուռ աշխարհային կուլտուրան (քաղաքակրթութիւնը), որն հիմնուած է կոպիտ այժի, խորամանկութեան, խաբէութեան, հարստութեան և նիւթական արտաքին յաջողութեան վրայ: Չգտելով յաղթել և ստորացնել Ռուսիան, կանդգնեցնել նրա յառաջխաղացութիւնը դէպի Արևելք, ճապօնացիք ցանկանում են ահմանափակել քրիստոնէութեան ազդեցութիւնը,

յանկանում են հաւատքի վոխարէն՝ լըրև ժողովրդական կեանքի հիմունք, լրենց կռվիտ, անհատատ և մեծին այժն հատատաւել։

Ի մի համախմբուելնք, միանանք եղբօրք, մուռանանք մեր ընտանեկան հաշիւներն ու բաժանականութիւնը։ յիշենք, որ մենք մի մօր՝ ս։ Ռուսաստանի զաւակներն ենք և որ նա այժմ մեզ բոլորիս կանչում է պաշտպանելու մեր հինաւուրց ժառանգութիւնը՝ պրաւօսլաւ հաւատքն և մեր համաշխարհային կոչումը։ Եւ մենք, կրթուած և առաջաւորներս՝ այս ժամին պէտք է յիշենք այն անուրանալի և բազմիցս վկայուած ճշմարտութիւնը, որ մեր երկրին թշուառութիւնն ու վտանգութիւնն ուղակի ում է այն մարդկանց մեղքերի համար, որոնք առաջաւոր են այդ երկրում և ժողովրդի ղեկավար են հանդիսանում։ «Մենք, մեզ առաջաւոր ու լուսաւորուած համարողներս, ոչ մեզ վրայ ենք վերցրել ժողովրդին ղեկավարելու գերը, այժմ պէտք է խոստովանենք, որ մեր պատճառուն է Ռուսաստանի պատժում Ռուսաստանը, որ մեր մեղքերի համար ճայթեց կայծակը նրա գլխին, մեր մեղքերի համար են կատարում Ռուսաստանի ընթերը զաւակները, մեր մեղքերի համար է անբում ու թշուառութիւն կրում ռուս ժողովուրդը։ այո՛, մեր գոռոզութեան, մեր զատարկ կրթութիւնով հպարտանալու, Աստուած ուրանալու և հայրերի աւանդութիւնները մոռանալու, հաւատքին ու եկեղեցուն թեթեւամտութեամբ վերաբերուելու պատճառով։

Քաւենք, եղբայրք, խոստովանենք մեր մեղքերը և զգալով մեր մեղաւորութիւնն ու անարժանութիւնը, եւանգելին աղօթենք ողորմած Աստուծուն, որ Նա խնայէ ս։ Ռուսաստանը, կանգնեցնի իւր պատժող սուրը և թույլ չը տայ, որ թշնամին ոտորացնի ու անարգի նրա հաւատքը, նրա վարքն ու մեծութիւնը և թող Նա նոր վայելով վայլեցնի Իւր խաչն Արևելքում։ ամէն»։

Աչնաւհետև բոլոր ուսուցչապետների ներկայութեամբ տեղի է ունեցել ժողով, որտեղ որոշուել է յայտնել Նորին Կայսերական Մեծութեան թագաւոր կայսեր ամենահաւատարիմ հպատակութեան զգացմունքները, պատերազմական ծախսերի համար յատկացնել բոլոր պաշտօնեաների ռոճիկներից 5%, իսկ ուսանողներն էլ վճռել են հրաժարուել ազնական օրերին մի տեսակ կերակրից և այդպիսով խնայած գումարն յատկացնել նոյն պատերազմի պէտքերին։ Ճեմարանի ուսանողներից շատերն էլ յանկութիւն են յայտնել գնալու Հեռաւոր Արևելք՝ երբև «հին անդրանիկ եղբայրները»։

Նոյն թերթը («Гражданинъ») «Դրաժդանինից» քաղում է հետևեալը.

«Ժողովրդի բերանում առաջին անգամ երբ լսինուեց ճապօնիայի անունը: Երբ հանդուցեալ նախաղաղաց թագաւորը Ալէքսանդր III միանգամայն վատահ, որ իւր ժառանգի համար բոլոր երկրներում էլ կատարեալ անվտանգութիւն կլինի և ոչ մի վտանգ չի սպառնալ, ճանապարհորդելու ուղարկեց նրան և երբ ճապօնիացում՝ այդ վատահութեան փոխարէն՝ ղղուելի վրձ արին նրա կեանքի դէմ:

Անցան տարիներ: Այդ թագաւորազնը թագաւոր դարձաւ Ռուսաստանի և ահա ռուսական կեանքում պատերազմի չարագուշակ փոթորիկը ներս է վրթիւում հէնց այն ժամանակ, երբ թագաւորին հարկաւոր էր խաղաղութիւն Ռուսաստանի ներքին կեանքի վերածնութեան վերաբերեալ իւր բոլոր գործերն իրականացնելու համար և այդ փոթորիկը գալիս է ճապօնիայից նոյնքան խորամանկ և ստոր, ինչպէս անկիւնից թագաժառանգի դէմ արած վրձը: Ճապօնիան իւր յարձակումն սկսեց Ռուսաստանի պատահմանը առանալուց առաջ: Երբ մտածում ու խորհրդածում են, ակամայ հարց է ծագում՝—ճակատագրական մի բան չկայ արդեօք այստեղ: Ռուսաստանի հսկայական մեծութեան մէջ թաղնուած չէ՞ն արդեօք պատմական ճակատագրական գաղանիքները: Նա մեծ է, բայց որքան մեծեն նաև նրան ուղարկած փորձութիւններն և այդ փորձութիւնների մէջ պատմական—ճակատագրական խնդիրներ չէ՞ն երևում արդեօք: Եկատերինա II-ի թագաւորութեան ժամանակուայ հսկայական աճեցողութեամբ այդ ճակատագիրն ինչու համար էր պատրաստում երիտասարդ Ռուսիային եւրոպական թագաւորութիւնների մէջ: Բանից երևայ, որ նրան պատրաստում էր ամբողջ եւրոպայի փոխարէն իւր վրայ ընդունելու Նապօլէօնի յարձակման ամբողջ ոյժն ու ծանրութիւնը. իւր ժողովրդի թափած արեան գետերով, կրած տանջանքներով ու նեղութիւններով ամբողջ եւրոպային ազատութիւն պարգևելու—համազգային այդ պատուհասի ձեռքից փրկելով:

Այսօր էլ վրդովուած միտքը կանդնած է հետևեալ հարցի առաջ.—

Ալէքսանդր III-ի թագաւորութեան ժամանակ, երբ Ռուսաստանն աւելի զօրացաւ, քան Եկատերինա II-ի օրօք, արդեօք այդ զօրանալը նրա համար չէր, որ նա՝ իւր արեան հեղեղներով, տանջանքով ու նեղութիւններով՝ եւրոպային փոխարէն պատերազմ դուրս դայ Ասիայի արևելքում արթնացած դեղին

ցեղի հանդէպ։ Այժմ մնայն մի բան ես տեսնում ու զգում.— ծանրէ Մահմատական պլեսարին ու ծանրէ աշխարհիս վերայ Ռուսաստան լինելը»։

Եկեղեցական Համբաւաբերն այս խորհրդածութիւններին աւելացնում է. «որ Ռուսիան պատերազմում է խաչի քրիստոնէական դաղափարի համար կռապաշտութեան դէմ, պատերազմում է քրիստոնէական սիրդունքներ պաշտպանելու, մի ուրը և մաքուր գործ կատարելու։ Նա կանգ չի առնիլ ոչ մի զոհաբերութեան առաջ և ինչպէս որ դեղեցիկ կերպով նկատել է Անտոն մետրոպոլիտը, եթէ հարկաւոր լինի, վանքերն ու եկեղեցիները գոհ կը բերեն իրենց արդութիւնների թանկագին զարդերն հայրենիքի սեղանի վերայ։

XX Դարու առաջին պատերազմը մղած կլինի Ռուսաստանը խաչանիշ դրօշակով և խաչի համար և մենք հաւատում ենք, որ խաչը կը յաղթի»։

Մեր կողմից կաւելացնենք, որ այո, իւրաքանչիւր եկեղեցին պարտաւոր է տալ, եթէ մնայն մի բան ունի, իսկ որ արդարութիւնը կը յաղթի, կը յաղթի ուղիղ խաչը, դորա համար պէտք է արդար զգալ և անսահման հաւատալ։

Նոյն թերթում կարդում ենք,—«Բալկանեան թերակղզու վերայ գանուած պրաւօսլաւ եկեղեցիներն են,—ա) Ռումանականը՝ 8 թեմերից բաղկացած, բ) Սերբիականը՝—7 թեմերից, գ) Ցրանսկլվանիայի՝—4 թեմերից, դ) Բուկովինո-Դալմացիայի՝ (Ռուս—Սերբո—Ռումանականը) 3 թեմերից, և ե) Բոսնիա—Հերցեգովինո—Սերբիականը՝—4 թեմերից։

Ռումանիայում սկսել է յաջողութեամբ տարածուել կաթոլիկութիւնը, որին պաշտպան են հանդիսանում Կարլ թագաւորն և նախարարապետ Սարուձան։ Բոսնիա և Հերցեգովինայում փակուել է Ռիլսկի պրաւօսլաւ հոգևոր դպրանոցը, որ միակ կրթարանն էր այդ երկրի պրաւօսլաւ հոգևորականութեան։ Բուկովինո—Դալմացիայի եկեղեցում ռուս ազգաբնակութեանը, որի թիւը 30 հազարի է հասնում, ամսագին զրկանքներ են հատցրել և այդրան բաղմութեան համար նշանակել մի միայն 50 ռուս քահանայ, մնացածներին ռումանացներից կարգելով։ Հոգևոր՝ բարձրագոյն պաշտօնները տրուում են ռումանացներին, իսկ հոգևոր դպրանոցներում մի միայն 3 ռուս սան է եղել և անցեալ տարի դադարել է պրաւօսլաւ «Բուկովինա» թերթը։

Լրագրի յօդուածագիրը գանում է, որ երբէք այսպիսի հակառակութիւն չի եղել պրաւօսլաւութեան և նրա ուղեկից ռումանացների մէջ և երբէք այսքան անհամերաշխ չի գանուել

լրեն պաշտպան և հովանաւոր Ռուսաստանի հետ. որ պատճառ նահանգութեան կործանումն երբէք այնքան ազատական և հաւանական չի եղել՝ ինչպէս անցած տարի և որ այդ հանգամանքի շնորհիւ ապագայում հոգի գնում կաթոլիկ և ծողովրական պրօպագանդան և մեծ յաջողութեամբ տարածւում, առաջինն՝ —ամեն տեղ, իսկ երկրորդը՝—Բօլգարիայում և Մակեդոնիայում:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Պիոս X պապը մեծ հոգս է տանում եկեղեցական երդեցողութեան և աշխատում է վերականգնել Երկրորդեան մեղեդինները: Նա շրջաբերականով պատուիրել է ամեն տեղ ճշտութեամբ կատարել այս առթիւ լրեն կոչից եղած կարգադրութիւնն՝ երբև օրէնք: Վերականգնելով Երկրորդեան եղանակները, պապն աշխատում է ազատել եկեղեցական երդեցողութիւնը թատրոնական երդեցողութեան ազդեցութիւնից, որն անցեալ դարու ընթացքում մուտք է գործել և տարածուել է ամբողջ Իտալիայում: Նա մտադիր է Երկրորդեան երդեցողութեամբ կատարել այս տարի հանդիսաւոր պատարագը ս. Երկրորդիս մեծի գերեզմանի մօտ՝ նրա մահուան 1300 ամեակի առթիւ և այս պատճառով պատմաբաններից և հնագէտներից յատուկ մանուածոյով է ընտրուած աւուր պատշաճի հանդէսները և գաւառաւոր թիւնները կազմակերպելու ս. Երկրորի և նրա գործունէութեան մասին:

Պիոս պապը նոյն շրջաբերականով յայտարարում է, որ կաթոլիկ եկեղեցու տարօրինակ լեզուն լատիներէնն է և այդ պատճառով արգելում է եկեղեցական հանդիսաւոր ծեսերին ուրիշ որևէ լեզուով պատարագ մատուցանել կամ քան երգել:

Նոր պապը վոմպոնութիւն է մտցրել նաև եկեղեցական—վարչական ձևերի մէջ: Դեկտեմբերի 17-ին նա ոչնչացրել է կարդինալների այն խորհուրդը, որը պաշտօն և իրաւունք ունէր Իտալիայի համար եպիսկոպոսներ ընտրելու: Նա կարգադրել է, որ բոլոր սուրբ տեղերի եպիսկոպոսներից, որոնք ենթակայ են Պրօպագանդային և եկեղեցու արտաքին գործերի վրայ հոգ տարտարող խորհրդին, մնացածներին ընտրի ս. ժողովը, որի նախագահն ինքը՝ Պիոս X է, որովհետև այս ժողովի մէջ չափազանց լեհատ է գաղտնապահութիւնը և նրա դէմ մեղանչողների ենթակայ են անում:

Պիոս պապը Փետրուարի 3-ին՝ իւր անուանակոչութեան

տասեդարձն առթիւ ընդունեց բոլոր կարդինալներին և առնեւ-
լով Օրելեա կարդինալ սենեկապետի ձեռքից նրա մատուցած
ուղերձը, պապն յիշեց վանականներին Ֆրանսիայից արտաքսելու
մասին և դժգոհութիւն յայտնեց՝ թէ այդ և թէ այն վատ վար-
մունքի համար, որին վերջերս ենթարկուեցին երկու կարդինալ-
ները Ֆրանսիայում:

Հռոմից «Neue Fr. Presse» թերթին հաղորդում են, որ Օլո-
մուցկի եպիսկոպոս իշխան Կոնի դէմ պապն հրամանով դատ էր
յարուցուած երկու դործի առթիւ. մէկով եպիսկոպոսը մեղա-
դրւում էր խոստովանութեան խորհուրդը խախտելու մէջ, իսկ
միւս դործը անտեսական էր (անտեսական բառը խիստ աեր-
մինէ), որտեղ եպիսկոպոսն առել էր դարձել իւր հօրին: Ա-
ռաջին դործը, որ պապի կողմից յանձնուած էր կոնգրեգացիա-
յին (Sant Officio) վանուսելի կարդինալի նախագահութեամբ,
վերջացաւ յօդուտ սրբազան Կոնի և այժմ նրա թեմի քահա-
նաների դէմ դատ է սկսուած զրպարտութեան պատճառով:
Երկրորդ դործը պարզեց, որ Կոնը շատ խիստ կերպով է պահպան-
նել իւր իրաւունքները ու հեղինակութիւնը և մերժելով ամենայն
միջամտութիւն, անհետևանք թողնելով ամենայն միջնորդութիւն
և խնդիրք, ամենայն ինչ կարգադրել է իւր ուղածի պէս, որով
ժողովրդի և հոգևորականութեան զայրոյթն է առաջ բերել:
Դրութիւնը սուր կերպացանք է սպացել մանաւանդ այն ժամա-
նակ, երբ եպիսկոպոսը սկսել է միջամտել Չեխօ-Դերմանական
ազգային վէճերին: Սոյն դործը վարող կոնգրեգացիայի կարծիքով
իշխան արքեպիսկոպոսի ներկայութիւնն այսուհետև Օլոմուցկի
թեմական պահպանում միայն կարող է աւելի սուր կերպարանք
տալ ծագած թիւրիմացութիւններին:

Իւր հնազանդութեան համար, որ նա Օլոմուցկի թեմը
թողեց ինքնակամ, ասում են, որ Կոնը՝ հէնց որ կ'ապատուի
Անտիոքի, Պօլսի կամ Ադէքսանդրիայի աթոռն, նոյնն պատրի-
արքի կոչում կրստանայ, իսկ այժմ մնում է Հռոմում իբրև
արքեպիսկոպոս in partibus և անդամ Սատուածաշունչ ուսումն-
նասիրող կոնգրեգացիայի:

Հետաքրքիրն այն է, որ Կոնին հեռացնելու վճռական պատ-
ճառը, ինչպէս հաստատացնում են, այն երկիւղն է եղել, որ Մո-
րաւիայում նրա ներկայութիւնը կարող էր այժ տալ Կիրիլո—Մե-
թոդիական շարժումներին, որը հեշտութեամբ կարող էր վեր-
ջանալ աեղացիների օրթոդոքսութեան դառնալով: Միւս կողմից
էլ երկիւղ են կրել, որ Մորաւիայի դերմանացիները մէջ կարող է
ուժեղանալ բողոքական շարժումն ու յաջողութիւն ձեռք բերել:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ

(ՄաՀուան հարիւրամեակի առիթով):

Որվհետև Կանտը դիտական-փիլիսոփայական գործունէութեամբ հանդերձ մեծ ծառայութիւն է մատուցել առանձնապէս թէ իւր հայրենիքին՝ Գերմանիային և թէ ընդհանրապէս մարդկութեան՝ գործունէութեան մի այլասպարիզով, այն է ուսուցչութեամբ, ուստի աւելորդ չեր լինի այստեղ մի քիչ աւելի կանգ առնել նորա գործունէութեան այդ կողմի վրայ:

Գառասուն տարուց աւելի Կանտը որպէս համալսարանի դասախօս՝ մեծ հաւատարմութեամբ ծառայեց իւր հայրենիքին: Այդ գործունէութեամբ նա մեծ ազդեցութիւն է ունեցել երկրի առաջնորդող չրջանների տիրահայեցողութեան վրայ: Հին Պրուսիայի և անոր կից արևելեան գաւառների դպրեվէ բոլոր ասպետանատուր պաշտօնեաները ու հոգևորականները, ուսուցիչները ու բժիշկները նորա դպրոցովն էին անցնում: Գերմանիայի մի ծայրն ընկած փոքր համալսարանը նորա չնորհիւ գերմանական բարձրագոյն ուսումնական հիմնարկութիւնների չարքում առաջնակարգ դիրք գրաւեց:

Կանտի դասախօսութիւնները ընդգրկում էին իրենց մէջ ամբողջ փիլիսոփայութիւնը՝ այդ բառի հին իմաստով, որով հասկացում էր տեսական բոլոր դիտութիւնների ամբողջութիւնը. այդ ամբողջութիւնից դուրս գոնում էին միայն պատմաբանական գիտութիւնները. իսկ այդ մասին աւելի ճիշտ գաղափար կարող է տալ դասախօսուող առարկաների հետևեալ ցուցակը.—տրամաբանութիւն, բնազանցագիտութիւն (метафизика), բարոյական փիլիսոփայութիւն, բնական իրաւունք, փիլիսոփայութեան հանրագիտութիւն, (энціклопедія) բնական աստուածաբանութիւն, մանկավարժութիւն, մարդաբանութիւն, Ֆիզիքական աշխարհագրութիւն, տեսական բնագիտութիւն, մաթեմատիկայ, մեքենայագիտութիւն, հանքաբանութիւն: Այս բոլորից նա դասախօսութիւններ արել է, իսկ մնացեալ դասախօսութեան առարկայ եղել են՝ տրամաբանութիւն

բնազանցաղիտութիւն և բնական աշխարհագրութիւն ու մչտական ղբաղմունքի նկատմամբ են մատակարարել մանկավարժութիւնն ու բարոյագիտութիւնը։

Դառնանք այժմ նրա դասախօսութիւնների նախ արտաքին— ապա ներքին եղանակներին։ Արտաքինն երկու եղանակ ունի. այն է ղուտ դասախօսութիւն և ապա գործնական վարժութիւն. պարտաւորվող պրոֆեսոր լինելուց յետոյ, նա պարտաւոր դասախօսութիւններին մշտ կցում էր և այդ գործնական վարժութիւնները, որոնց մասին ճիշտ ոչինչ յայտնի չէ, տակաւին ինչպէս երեում է, սոքա մի տեսակ գիտական վիճաբանութիւններ (диспуть) են եղել։ 1758 թ. իւր դասախօսութիւնների մասին արած յայտարարութիւններից մէկում նա հաղորդում է, «որ նախընթաց օրերում չարադրուած դրութիւնը (Satz) վիճաբանական եղանակով կզննէ» և այդ եղանակը նա համարում է ամենանպատակայարմարը հաստատուն սկզբունքներ առանալու համար։

Ինչ դասատանդութեան ներքին եղանակին է վերաբերում՝ այդ ոչ թէ սխոլաստիկ-ղօգմատիկ քնաւորութիւն է ունեցել, այլ սոկրատեան-քննադատական։ Առաջին ուղղութեան ամենաէական կողմն այն է, որ նա ընդունուած, որոշ տեսակէտով նայուած ու հաստատուած, թէ գիտական և թէ փիլիսոփայական—բարոյական դրութիւններ նոյնութեամբ տալիս է ունկնդիրներին որպէս պատրաստի, վերջակէտ հաստած ճշմարտութիւններ և պարտադիր անում նոյնութեամբ էլ սովորելու։ Շատ պարզ է, որ նոյն բանը չէ աշակերտին ուղղակի սովորեցնել, թէ երբ որ և է տարածութիւն ուղիղ գծերով չրջափակուում է ամեն կողմից, այդ չրջափակող գծերի թիւը առնուազն երեք պիտի լինի, և նոյն բանը չէ, երբ աշակերտին ամեն կողմից չրջափակուած տարածութիւն են գծել տալիս և նա ինքն է այդ եղրակացութեան դալիս։ Առաջին դէպքում նորա միտքը չգործեց, այլ ուրիշ մտքի գործունէութեան հետեանքը որպէս մի բնական իւր վրայ և հեշտութեամբ էլ կձգէ, կմոռանայ, իսկ երկրորդ դէպքում՝ ընդհակառակը՝ իւր իսկ ուղեղը ջանք է գործ դնում և հետեանքն այն է լինում, որ ուղեղի վրայ քանդակուում, տպաւորուում է անջինջ կերպով։ Կանտը ահա վերջնական հարուածը տուաւ սխոլաստիկ ղօգմատիկ ուղղութեան իր ամբողջ ուսուցչական գործունէութեամբ։ Նորա դասախօսութիւնների նպատակը չէ պատրաստի փրլիսոփայական վարդապետութիւն տալը, այլ ունկնդրին ինքնուրոյն մտածութեան դրդել, նորանոր մտքեր որոնել տալ և զարդացնել։ Կանտը սկզբից և եթ տիրող դոգմատիկ ուղղութեան հակառակորդ լինելով՝ ասում է.—«փիլիսոփայութիւնն ընդհանրապէս չի կարելի սովորել այնպէս, ինչպէս սովորում ենք մաթեմատիկան,

բնագիտութիւնը, պատմութիւնը, սակայն կարելի է սովորել փիլիսոփայութիւն անել։ Փիլիսոփայութիւն չի կարելի սովորել այն պատճառով, որ նա որպէս պատրաստի ճանաչուած գիտութիւն՝ գոյութիւն չունի. իւրաքանչիւր փիլիսոփայ իւր համակարգութիւնը, վարդապետութիւնը հիմնում է նախորդի ընկորնների վերայ. բայց պէտ չի ստեղծուել մի համակարգութիւն, որ իւր ամբողջ մասերով մնար։ Փիլիսոփայութիւնը չի կարելի սովորել, որովհետև նա չկայ, բայց եթէ լինէր էլ, չէր կարելի սովորել, որովհետև «սովորուի» (заучное) փիլսոսփայութիւնը կդադարէր այլ ևս փիլիսոփայութիւն լինելուց և կդառնար մի պատմական՝ բայց ոչ երբէք փիլիսոփայական գիտութիւն»։

Այս խօսքերի մէջ «Լուսաւորութեան դարու»*) ոգին է նկատւում։ Աչակերտին անչափահաս դրութիւնից հանել և բարձրացնելով՝ անվնաս հետազօտութիւնների վրայ հիմնուած ինքնուրոյն դատողութիւններ յօրինել տալը—համալսարանական դասաւանդման նպատակն է։ Իսկ աչակերտին ինչպէս պէտք է սովորեցնել փիլիսոփայութիւն անել, այդ հարցին Կանտը պատասխանում է. «վարժութիւնների և բանականութեան ինքնուրոյն գործունէութեան միջոցով։ Այդ վարժութիւնները նրան են տալիս՝ մի կողմից բնական և պատմական երևոյթների (Thatsachen) և միւս կողմից այդ երևոյթների փիլիսոփայօրէն բացատրելու ջանքերը. Կանտն իւր աչակերտներին երկու ճանապարհով է տանում ու նա առիթից առաջ աշխատում է նոցա այդպիսի փաստեր մատակարարել կամ նոցա այդ փաստերին մօտեցնել։ Այդ է ֆիզիքական աշխարհագրութեան և մարդաբանութեան դերը, որոնց նա ահագին նշանակութիւն է տալիս։ «Նախկին փիլիսոփայական դաստիարակութեան սիալն այն էր, ասում է նա 1765 թ. իւր դասախօսութիւնների մասին արած մի յայտարարութեան մէջ, որ նա երիտասարդութեան չատ վաղ էր սովերցնում իմաստակելու՝ նախ քան վերջնիս պատմական բաւականաչափ պիտոլիքներ ձեռք բերելը, նախ քան վարժութիւններով նորա միտքը զարգացնելը, ծանօթացնում էին նորան ընդհանուր գաղա-

---

* «Լուսաւորութեան դար» (Zeitalter der Aufklärung) անուանուել է ժէ. դարը, շնորհիւ իր առաջացրած մեծ շարժման։ Այդ մեծ շարժման հետ սերտ կապուած են Ջոանախացի նշանաւոր հեղինակ փիլիսոփայ Ժան-Ժակ Ռուսօի, գիւմանիցիների բանասէրը Լեսինգի և իր՝ Կանտի անունները։ Կանտն աշխատել է առանձնապես որոշել է թէ ինչ է նշանակում իր դարու այդ «Լուսաւորութիւն» մակդիրը և եկել այն եզրակացութեան, որ այդ նոյն է թէ ասել «ինքնուրոյն մտածողութեան դար»։

Իտա. * *

փարների հետ. այստեղից էլ ծագում են՝ նախ դպրոցական այնպիսի տեսական նախապատրաստություններ, որ չատ անդամ աւելի բերրի ուսմանուն են լինում՝ քան աւօրեայ մոլորութիւնները, ապա կանխահաս մտածողների չաղակրատութիւնը, որ աւելի կոյր է լինում քան անձնապատանութեան մի ուրիշ տեսակ և աւելի անբուժելի՝ քան ագիտութիւնն է»։ Այդ չարիքի հետ կռուելու համար նա բնազանցագիտութիւնից առաջ փորձնական հոգեբանութեան ու մարդաբանութեան դասախօսութիւններ է առանդում. Նմանապէս առաքինութեան մասին խօսելիս՝ նա նախ չարադրում է այն, ինչ որ լինում է և ապա այն՝ ինչ որ պէտք է լինի։ Վերջապէս նորա փիլիսոփայական աշխարհագրութեան դասախօսութիւնները առաջին մասում ունկնդիրներին երկրի ներկայ կազմութեան են ծանօթացնում, երկրորդ մասում—մարդուն՝ իւր բնական նախնական վիճակում, երրորդ մասում—պետութիւնների և ազգերի կազմակերպութեան և այսպիսով ունկնդրին հաճելի և ուսանելի դիտելիքների պաշար են մատակարարում։

Կանտը իւր ունկնդիրներին ուրիշ ճանապարհով էլ էր առաջ տանում. այդ ճանապարհը փիլիսոփայութեան պատմութիւնն է։ Իւր դասախօսութիւնների նկարագրութեան մէջ նա առլորոնթիւն ունէր մի պատմական ակնարկ նուիրելու՝ ինչպէս առանձին առանձին հարցերի, նոյնպէս և իւր նախորդների վարդապետութեան մի պատմական ակնարկ էր ընծայում փիլիսոփայութեան, նաև հանրագիտութեան ու տրամաբանութեան մէջ։

Հերցին գրած մի նամակում Կանտն աւելի է չեշտում այն միտքը, թէ իր նպատակը չէ «արհեստաւոր փիլիսոփաները» պատրաստել, «այլ հիմնական դրութիւնների վրայ հիմնուած համոզմունքներ տարածել ու ամրապնդել մարդկանց մէջ և այդպիսով զարգացող տաղանդներին միակ նպատակայարմար ուղղութիւնը տալ»։ Կանտ այդ սկզբունքով առաջնորդուեցաւ ամբողջ չիչեալ 40 տարուայ ուսուցչական գործունէութեան ընթացքում, և այդ սկզբունքը չատ արդիւնաւոր հանդիսացաւ նորա հայրենիքի համար. նոր որ Գերմանիան այն ժամանակներից սկսած փիլիսոփայութեան նոր հայրենիք դարձաւ, դորա պատճառների մէջ չպէտք է մոռանալ Կանտին իւր ուսուցչական գործունէութեամբ։

Գիտական գործունէութեան սկզբում Կանտի փիլիսոփայական հետաքրքրութիւնն ըստ ամենայնի դէպի արտաքին աշխարհն էր ուղղուած, ինչպէս կարելի է եզրակացնել այդ նորա հեղինակութիւններից և դասախօսութիւններից։ Իւր դասախօսութիւնների մէջ բացի տրամաբանութիւնից և բնազանցագիտութիւնից, որ նորա ծրագրի կարևոր մասն էին կազմում, մտցրել էր մաթեմատիկան ու

բնագիտութիւնը։ Շուտով դուքա հետ հաւատար նշանակութիւն ստացու նաև ֆիզիքական աշխարհագրութիւնը, որ առաջին անգամ Կանտը մտցրեց համալսարանական դասաւանդութեան մէջ։ Այս առարկան մեծ հետաքրքրութիւն առաջացրեց նոյն իսկ ուսանողական շրջանից դուրս։ այս դասախօսութիւնների մէջ էր ամփոփում նա ամենահետաքրքրական և թանկագին տեղեկութիւնները բնութեան և մարդու մասին, այնպէս որ այդ տեղեկութիւնները, որպէս իբր տեսակի ուղեցոյցներ դէպի աշխարհի բոլոր կողմերը, կարող են մի տեսակ նախապատրաստել այն ժամանակ սովորական դպրոցած կրթական ճանապարհորդութիւնների, եթէ մինչև անգամ փոխարինել նոցա։

ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԸՍՏ ՄՈՄՄԶԷՆԻ

«68 թ. ամրան կիսին Լուկուլլոս, շարժուելով Տիգրանակերտից, առաջ դնաց անկասկած Բիթլիսի անցքով և դէպի արևմուտք Վանայ լճի ափերով՝ հասաւ Մուշի և Եփրատի սարահարթը։ Դնացքն ընթանում էր դանդաղ— թշնամու այրուձիու, մանաւանդ հեծեալ աղեղնաւորների անընդհատ ու անտանելի ընդհարումների պատճառով, բայց առանց աչքի ընկնող արդելքի նոքա գրաւեցին դիրքերն ու Եփրատի անցքը, որ քաջաբար պաշտպանում էր հայկական հեծելազօրքը։ Երևաց և Հայոց հեռուակազօրքը, բայց չկարողացաւ ճակատ յօրինել։ Այսպիսով բանակն հասաւ Հայաստանի բուն սարահարթին և առաջ էր քայլում դէպի անծանօթ երկիրը։ Նոքա դեռ մի կարդին դժուարութեան չէին պատահել, բայց արդէն թշնամի այրուձիու հետ ընդհարման և երկրի դժուարանցանելիութեան պատճառով յառաջխաղացութեան ան-

խուսափելի ուշացումը՝ բանակի համար ինքն ըստ ինքեան զգալի կորուստ էր։ Նախ քան զօրքի Արտաշատ հասնելը վրայ հասաւ ձմեռը և հէնց որ Իտալիոյ զինուորները ձիւն ու սառոյց տեսան, կորուեց զինուորական կարգապահութեան թունդ ձգտած լարը։ Զօրքի մէջ իրապէս յայտնուած ապստամբութիւնը ստիպեց զօրապետին նահանջման պատուէր տալ, որ և տեղի ունեցաւ Լուկուլլոսի սովորական ճարպիկութեամբ։ Յաջողութեամբ հասնելով Միջագետք, ուր տարուայ եղանակը դեռ թոյլ էր տալիս նորա համար ձեռնարկութիւններ սկսելու, Լուկուլլոս անցաւ Տիգրիս գետը և իւր ամբողջ զօրքով յարձակուեցաւ այս կողմերում հայոց ձեռքին մնացած վերջին Մծբին քաղաքի վրայ։ Արքայից արքան, որ արդէն Տիգրանակերտի դէպքից վարժուել էր, քաղաքին չմօտեցաւ։ Ընդհակառակը քաջ պաշտպանութեան, պաշարողներն յարձակմամբ առան մի մութ անձրևային գիշեր և Լուկուլլոսի զօրքն այդտեղ գտաւ ոչ պակաս աւար և յարմարաւոր ձմերանոցներ, ինչ որ գտել էր մի տարի առաջ Տիգրանակերտում։ Սակայն նոյն ժամանակ թշնամու ամբողջ յարձակողական ոյժն ընկաւ Պոնտոսում և Հայաստանում մնացած հռոմէացի վաշտերի վրայ։ Մի տեղ Տիգրան ստիպում էր հռոմէացի զօրավար Լուցիուս Ֆաննիուսին (որ առաջ Միհրդատի և Հերատորիոսի համար միջնորդ էր եղել) մի ամրութիւն քաշուել ու փակուել։ Մի այլ տեղ Միհրդատ 4000 հայկական և 4000 պոնտական հեծեալներով դուրս էր եկել և որպէս զապահիչ ու վրիժառու, կոչ էր անում ժողովրդին երկրի թշնամու դէմ։ Ամենքը միանում էին նրա զօրքերին։ Հռոմէացի ցան ու ցիր եղած բոլոր զինուորներն սպասնուեցան և մէջ տեղից վերցուեցան»։[1]) Նոյն իսկ Պոնտոսի հին զինուորներն ևս հռոմէացոց կողմից Միհրդատի կողմն էին անցնում և կարճ ժամանակում Միհրդատ կրկին իւր կորցրած թագաւորութիւնը ձեռք բերաւ։ Բայց

[1]) Տես III 74—76.

Լուկուլլոս, որ մտածում էր ինչ էլ որ լինի չարունակել պատերազմն հայոց հետ և յաղթահարել, ստիպուած եղաւ իր զինուորների դժգոհութեանց պատճառով և սենատի նոր որոշման համաձայն (Ծերակոյտը յաջորդ տարուան զօրապետութիւնն յանձնել էր Գլաբրիոնին) դեպի Փ. Ասիա քաշուել։ Նախ քան այդպէս վարուելը, հռոմէացիք մի անգամ էլ պարտութիւն են կրում Միհրդատից Զիելի (Ziela) մօտ։ Երբ Լուկուլլոս իր բանակով Փոքր Ասիա է մտնում, Փոքր Հայքի կողմից, ուր ժողովուած էին Տիգրանի փեսայ Մարաստանի տէր Միհրդատի և հայոց գլխաւոր ուժերը, և կամենում է այդտեղ ճակատ տալ, զօրքերը չեն համաձայնւում և Լուկուլլոսն այն պահին, երբ մօտ էր արշաւանքն ընդհանուր յաղթական վախճանով պսակելու ժամը, ստիպուած էր տեղի տալ Ծերակոյտին և զօրքին և առանց ընդհարուելու թշնամուց կենդրոնական ուժի հետ, քաշուել Փոքր Ասիոյ հէնց այն տեղն, ուր հռոմէացիք կանգնել էին 8 տարի դրանից առաջ ձմրանը, նախ քան հայկական ու Փոքր Ասիական պատերազմների սկսուիլը։

Նոյն ժամանակները Հռոմում իր քաղաքականներով ու անձնական արժանիքներով յայտնի մի այլ զօրավար՝ Պոմպէոս այնքան հռչակ էր ստացել, որ Ծերակոյտը նրան յանձնեց արևելքում գործող զօրաբաժնի հրամանատարութիւնը՝ թէ ցամաքի և թէ ծովերի վրայ միանգամայն։ Եւ Պոմպէոս ոչ միայն արդարացրեց Ծերակոյտի որոշումը, այլ և շատ առաջ գնաց իր գործի հեռանկարներով։ Դալով արևելք, նա եռանդուն կերպով պատրաստուեցաւ Լուկուլլոսի սկսած և կիսատ թողած պատերազմը չարունակել Հայ և Պոնտացի միացեալ ուժերի դէմ։ «Պոնտացիները պատրաստւում կարծում էին, թէ Պարթևների թագաւոր Հրահատն հիմա համաձայն կը լինի զաշնակիցներին միանալու, ի նկատի ունենալով նոցա տարած յաղթութիւնները։ Դրա հակառակ հռոմէացի դեսպանները գնացին պարթևաց Տիգրան (Կոէղիզոն) պալատը դաշն կապելու. այդ հանդամանքին աւելի նպաստեցին այն չիս-

թուրքիւններըը, որ բաժանում էին ձգում հայոց արքայական տան մէջ։ Արքայից արքայի համանուն Տիգրան որդին հօր դէմ ապստամբել էր, կամ այն պատճառով, որ հաւքերութիւն չունէր ապասելու ծերունի հօր վախճանին, կամ գուցէ եղբայրներից շատերին սպանող հօր կասկածամտութիւնից ազատուելու համար ապստամբութիւնն էր ընտրել իբրև միակ միջոց։ Հօրից յաղթահարուած, նա ու խումբ նշանաւոր հայերի հետ խուսափում է Արշակունիների պալատը և այնտեղ լնտրիզներ է լարում հօր դէմ։ Այդ էր պատճառը մասամբ, որ Հրահառը դաշնակցութեան համար 2 կողմից առաջարկուած պարգևը—Միջագեոքը՝ աւելի սիրով հռոմէացւոց ձեռքից է համաձայնում ընդունել և Լուկուլլոսի հետ եվրաթի ափերի նկատմամբ արած իւր դաշնադրութիւնը Պոմպէոսի՞ հետ այժմ նորոգելով, նոյն իսկ իւր համաձայնութիւնն է տալիս հռոմէացոց հետ հայոց դէմ գործելու։ Սակայն հռոմէացոց և պարթևների դաշնադրութիւնից էլ աւելի Տիգրան կրտսերը վնասեց Պոնտոսի և հայոց թագաւորներին այնու, որ նրա ապստամբութիւնը դաշնակից արքաների մէջ խռովութիւն ձգեց։ Արքայից արքան դաղտնապէս կասկածում էր, թէ ու՞մ գուցէ իւր անները մատ ունենայ իւր թոռան ըմբոստութեան մէջ (կրտսեր Տիգրանի մայր Կլէօպատրան Միհրդատի աղջիկն էր) և եթէ այդ հանգամանքը յայտնի բաժանման առիթ չէր էլ տալիս, այնու ամենայնիւ 2 արքաների համերաշխ դաշնակցութիւնը լուծուելուց հէնց այն ժամանակ, երբ ամենից շատ կարիք կար դրան»։ [1])

Մինչդեռ միւս կողմից Պոմպէոս պարթևների դաշնակցութեամբ զօրացած մօտ 40—50,000 սեվական բանակով մտնում է Պոնտոս և հալածելով Միհրդատին, երկուսով հասնում են Տիգրանի սահմաններին։ Փոքր Հայաստանում Միհրդատ ու վերջնական պարտութիւն է կրում Նիկոպօլսի մօտ և յուսահատուած չուպում է

[1]) III 125.

Եփրատի ափերը՝ միանալու Տիգրանի բանակին։ «Սակայն այդ յոյն էլ դատարկ էր։ Միհրդատի երևակայական դաշնակցութիւնն այլ ևս գոյութիւն չունէր։ Պոմպէոսի և Միհրդատի վերև յիշած կռիւների ժամանակ Պարթևաց թագաւորը ճնշուելով հռոմէացիներից և ափերի չուտ տեղի տալով հայ փախստական թագաժառանգին, յարձակուել էր զօրքով Տիգրանի վրայ և նրան ստիպել էր ամրանալ անմատչելի բարձունքներում։ Թշնամի բանակն սկսեց նոյն իսկ Արտաշատ մայրաքաղաքը պաշարել, բայց որովհետև պաշարումը երկար տևեց, Հրահատը իւր զօրքի մեծ մասով հեռացաւ, որից յետոյ Տիգրանը յետ մնացած պարթևական զօրաբաժինն ու իւր օրդու առաջնորդութեամբ գործող հայ գաղթականներին (emigrent) յաղթահարեց և ամբողջ պետութեան մէջ իւր տիրապետութիւնը կրկին հաստատեց։ Շատ հասկանալի է, որ այսպիսի հանգամանքներում թագաւորը որամադրութիւն չէր լինի նոր ինորոյ յաղթող հռոմէացոց հետ ընդհարուելու, ափերի մի կողմ Միհրդատի համար զոհուելու, որին նա այժմ ափերի մի էր վաստահանում, քան երբ և իցէ՝ այն ժամից, երբ նրան խնացրել էին, թէ նրա ապստամբ որդին մտադիր է իւր պապի (Միհրդատի) մօտ գնալու։ Ա.յսպիսով նա միջոցներ ձեռք առաւ հռոմէացոց հետ մանաւանդ հաշտութիւն անելու և սակայն դրա վախճանին չսպասելով, իւր յարաբերութիւնները բոլորովին կտրեց Միհրդատի հետ։ Սա հասնելով հայկական սահմանին, լսեց, որ Տիգրան արքայից արքան նրան բռնելու համար դիսագին է նշանակել 100 տաղանդ (150,000 տալեր) բռնել է նրա դեսպաններին ու հռոմէացոց յանձնել։ «Միհրդատին ուրիշ ճար չէր մնում, բայց եթէ քաշուել հիւսիս, իւր անձը մի կերպ ազատելու։» Պոմպէոսը մտաւ Արաքսի հովիտը, իւր հաշիւը վերջացնելու Տիգրանի հետ։ Համարեա առանց ընդդիմութեան նա հասաւ Արտաշատի կողմերը (ոչ հեռու Երևանից) և բանակ դրեց քաղաքից դէպի հարաւ 3 մղոն հեռաւորութեան վրայ։ Ա.յնտեղ դնաց նաև արքայից արքայի որդին, որ յոյս ու-

նեը հօր անկումից յետոյ հայոց արքայական թագն ընդունել հռոմէացոց ձեռքից, ուստի և ամեն կերպ արգելքներ էր հանդիպ բերում, որ հաշտութիւն չլինի հօր և հռոմէացոց մէջ։ Սակայն Տիգրան վճռեց հաշտութիւն գնել հռոմէացիներից, ինչքան էլ որ թանկ լինեը դա։

Ձիով և առանց ծիրանու, սակայն արքայական ամբողջովի և գլխապատով նա հռոմէացոց բանակը գալով, ցանկանում էր զօրապետին ներկայանալ։ Լիկոսրի պատուէրի հաւնձայն (ինչպէս պահանջում էր հռոմէական զինուորական կարգ ու կանոնը) նա իւր ձին ու սուրը յանձնում է այլոց և ըստ բարբարոսների սովորութեան, արհամարհական ոտքն է ընկնում և ի նշան անպայման հպատակութեան՝ նրա ձեռը տալիս իւր ապարօշատոր թագն ու մորը։ Պոմպէոսը խիստ ուրախացաւ այս հեշտ յաղթութեան վրայ, բարձրացրեց խեղճացած արքայից արքային, զարդարեց կրկին արքայական նշաններով և թելադրեց խաղաղութեան պայմանները։ Բացի պատերազմական դահձարանին 9 միլիոն տալեր (6000 տաղանդ) վճարելուց և զինուորներին առատապար պարգեւատրելուց, որոնցից իւրաքանչիւրին ընկաւ 50 դենար (15 տալեր), թագաւորը հրաժարւում էր իւր սրած բոլոր նուաճումներից, ոչ միայն Փիւնիկեան, Սորիքի, Կիլիկեայի, Կապադովկիական գաւառներից, այլ նաև Եփրատի այ ափում ձգուած Սոֆենից և Կորդուէնից։ Նա նորից սահմանափակուեցաւ բուն Հայաստանով և այդպիսով վերջացաւ նրա մեծ թագաւորութիւնը (Արքայից արքայութիւնը)։ Մի հաւիկ արշաւանքով Պոմպէոս կարողացաւ բոլորովին ընկճել և հպատակեցնել Պոնտոսի և Հայաստանի 2 զօրեղ թագաւորներին։ 66 թ. սկզբում ոչ մի հռոմէացի զինուոր չկար այլ ևս հին հռոմէական կալուածքներից այն կողմը։ Նոյն տարուայ վերջում Միհրդատը խոյս տուաւ առանց զօրքի Կովկասի կիրճերը և Տիգրան թագաւորը Հայաստանի գահ նստաւ ոչ այլ ևս որպէս արքայից արքայ, այլ որպէս

[1]) III 125—130.

հռոմէական աւատատուս իշխանս Եփրատիս արեւմուտք Փոքր Ասիական ամբողջ երկիրն անպայման կերպով հռոմէացոց էր պատկանում։ Յաղթական բանակը ձմերավայր ընտրեց նոյն դեսի արեւելեան կողմը հայոց հողի վրայ վերին Եփրատի և Կուր գետի միջավայրը, որտեղ խոտալացիք երբեմն իրանց ձիաներին չուր էին խմցրել ա. արշաւանքի ժամանակ։»[1])

Պոմպէոս յաղթական դարձ եկաւ իւր առաջ դրած մեծ պատերազմից. արեւելքի և արեւմուտքի ընդհարման արգիւնքն եղաւ մեկի զօրեղացումը, միւսի ընկճումը։ Սակայն մի բան խիստ աչքի է ընկնում։ Թէև Տիգրան և Միհրդատ իրար հետ դաշն էին կապել օգնելու թէ պատերազմների և թէ այլ վտանգների մէջ, բայց նոքա համարեա ոչ մի գործ իրար հետ չձեռնարկեցին։ Ամենանեղ ճգնաժամին նոքա առանձին էին և նոյն իսկ իրար դէմ։ Ծերունի Միհրդատը՝ յոյսը կորելով իւր դաշնակցից ու կորցրած համարելով իւր վաղքը, քաշուել էր Սև ծովի հիւսիսային կողմերը։ Նրանից ապստամբում է ամենասիրելի որդին և հաւանական ժառանգը և Միհրդատ թշնամուց ձեռքը չընկնելու համար Պանիկապէոն ամրոցում վերջ է դնում իւր կեանքին։ Այսպէս մեռաւ Միհրդատ 63 թ. 66 տարեկան հասակում 57 տարի կառավարելուց և 26 տարի հռոմէացոց հետ կռուելուց յետոյ։ Հօր մարմինը Փառնակէան ուղարկեց յաղթողին ի նշան իւր՝ դէպի Պոմպէոն ունեցած հաւատարմութեան։

Պոմպէոն այնուհետև հպատակեցնելով Ասորիքն ու խաղաղացնելով Հրէաստանը և ամբողջ արեւմտեան Ասիան հռոմէական կալուածք դարձնելով, խիստ դիւրք բռնեց պարթեւների նկատմամբ. նախ որ Տիգրան Մեծին աւելի նախապատուութիւն էր տալիս, քան Տիգրան Կրտսերին՝ Պարթեւաց Հրահատ թագաւորի դաշնակցին. և ապա հրաժայում է ուղղակի բռնել Տիգրան Կրտսերին նրա ընտանիքով և չի բաց թողնում նոյն իսկ այն ժամանակ, երբ Հրահատ միջնորդում է հռոմէացի զօրավարին իւր աղջկայ և փեսի համար։ (Կրտսեր Տիգրանի կինը

պարթև ազգին էր)։ Պարթևները բորբոքում են. հռոմէացոց ջնասելու համար զօրքով Հայաստան են մտնում, սակայն պատերազմը չըսկսած սիպուած՝ են լինում տեղի տալ Պոմպէոսի ամենատաք զօրութեան առաջ։ Պոմպէոս պարթևներից առնելով՝ մեծ Հայաստանին է միացնում Կորդուէնը և Միջագետքի հիւսիսային պատաւէտ մասը, այնպէս որ հռոմէացոց և պարթևների սահմանն է լինում առաջուայ նման ոչ Եփրատը, այլ Աստրա — Միջագետքի անապատը։ Իսկ Սոֆէնն ու Եփրատի ձախ ափը սկզբնապէս նշանակուած էր Կրասեր Տիգրանին։ Պոմպէոս զանազան կարգադրութիւններ անելով. վերադառնում է Հռոմ։

Այսպիսով վերջացաւ արևմտեան Ասիայ նուաճումը և նուաճողներն էին Լուկուլլոս և Պոմպէոս քաջ ու տաղանդաւոր զօրավարները։ Փառաւոր էր Պոմպէոսի ընդունելութիւնը Հռոմում։ 61 թ. սեպտեմբ. 28 և 29-ին տարբած յաղթական դնացքն անցնում էր Հռոմի փողոցների միջից, տանելով իւր յետևից՝ բացի անթիւ ու անհամար դանձից՝ Ասիայ 3 մեծ ու կարող թագաւորների՝ Միհրդատի, Տիգրանի և Հրահատի որդոց։ Հռոմը մեծաթում և աքանչանում էր այն մարդով, որ նուաճեց Աֆրիկան ու Սպանիան, յաղթահարեց Ասիան ու ազատեց Հռոմը մոլեռանդ տորմակների ձեռքից, որ յաղթեց 22 թագաւորների և Հռոմի անունը դեր ի վերոյ պայծառացրեց ու ահեղ և տոկալի դարձրեց որևէ քաղաքային այլ ուժի համար։ Հայաստանը Պոմպէոսի գնալով, դարձաւ հռոմէացիների ուտատուռ թագաւորութիւն։ Տիգրան այնուհետև երկար չապրեց. նա մեռաւ 56 թ., վեսպասիանոսի ամին։ [1])

Տիգրանի որդին յիշւում է Արտաւազդ, որ 54-ին արդէն Հայաստանի արքայական դահի վրայ էր։ Նա սկզբում իւր հօր հպատակութիւնն ու դաշնակցութիւնը պահեց, բայց երբ առաջին Նռատպետութեան անդամ կրա-

---

1) Տես III 157, 342.

2) Որոդէս Ա թագաւորել է 54—36. Գարագաշեան II 89.

Գ. Ա.

սոս արևելք եկաւ պարթևների դէմ կռուելու, Աբատա-ւաղդ երեսանց խօսք տուաւ հռոմէացոց 10,000 հեծեա-լով օգնութեան հասնել, բայց իրօք ծածուկ դաշն կապեց պարթևաց Որոդէս Ա.[2]) թագաւորի հետ և իւր քոյրը նրա Բակուր որդուն կնութեան տուաւ։ Կառանի (Karrhae) մօտ (եգեսիայից քիչ հարաւ) հռոմէական լեգէոնները չարա-չար պարտութիւն են կրում պարթևներից և մեծ վնասը Կրասոսի գլուխը իւր վեհապետին ընծայ է ուղարկում։ Այնուհետև պարթևները հայոց օգնութեամբ Ասորիք ար-շաւեցին։ Պարթևների և հռոմէացոց այս ընդհարման ար-դիւնքն այն եղաւ, որ Հռոմի տիրապետութեան սահմանն էլի Եփրատն եղաւ 50 թ.)[1]

Տիգրան Մեծից յետոյ, երբ պարթևներն հետզհետէ զօրանալով արդէն հռոմէացոց դիմաց մի պատուական ուժ էին կազմել, Հայաստանը խաղալիք է դառնում այդ 2 մեծ պետութիւնների ձեռքին։ Ըստ բերման հանգա-մանքների, երբեմն պարթևներն էին գերակշռող տէր բռնում և թագաւոր նշանակում Հայաստանում իրանց ուզած մարդուն, շատ անգամ իրանց ցեղից, երբեմն էլ հռոմէացիք յառաջանալով դուրս էին քշում պարթևնե-ներին և հայկական դահի վրայ բազմեցնում իրանց թեկ-նածուներին։ Իսկ հայերը, որոնց ներքին շարժումներն ու յուզումները մեզ անյայտ են, մերթ Հռոմի, մերթ Տիգ-րանի դահակալներին էին թեքւում։ Խաղաղ անդորը վի-ճակ չի ունենում Հայոց աշխարհը և մի քանի դար պար-սից ու հռոմէացոց աչքի փուշ ծնալով, վերջապէս կոր-ցնում է իւր թագն ու հարստութիւնը Սասանեանց օրով, որոնք հայոց Աբշակունեաց պետութեան վերջ դրին։[2])

«Այն ժամանակ, երբ հայերը մրցում էին պարթև-ների հետ և Արաքսի ափերում հաստատուած թագաւո-

---

1) Տես III 341—352։

2) Հռոմէացոց ու պարթևների կռիւը Հայաստանում գե-ղեցկանութիւն ձեռք բերելու համար՝ Մոմսէն մանրապատում կերպով նկարագրել է, թէև միայն արտաքին դէպքերը։ Գ. Ա.

բուլթիւնն աշխատում էր Առաջաւոր Ասիայում մեծ պետութեան դեր խաղալ, պարթեւներն ընդհանրապէս բարեկամաբար էին վերաբերւում հռոմէացիներին, ինչպէս իրանց թշնամիների հակառակորդներին։ Բայց Տիգրանին ու Միհրդատին յաղթելուց յետոյ հռոմէացիք Պոմպէոսի ներմուծած կարգերի չնորհիւ այնպիսի դիրք բռնեցին, որ դժուար թէ կարելի լինէր երկու պետութեանց մէջ խաղաղութիւնը տեւական լինել»։ Հռոմէացիք նուաճել էին Կապադովկիան ու Մեծ ու Փոքր Հայաստանները, Կովկասեան հիւսիսային ցեղերը, Փոքր Մարտաստանը կամ Ատրոպատենան. Կովկասեան սարերից և Կասպից ծովի արևմտեան ափերից սկսած Հռոմին էր պատկանում։ «Թէև Հելլէն աղգաբնակութիւնը Սև ծովի հարաւային ափերում և Կապադովկիայում և Կոմմոգենում այնպէս հաստատ հիմք էր բռնել, որ կարող էր հռոմէական դերիշխանութեան դէմ դնել, բայց Հայաստանն հռոմէական բազմամեայ իշխանութեան տակ դարձեալ անհելլէն երկիր մնաց, անխղելի կերպով կապուած պարթեւաց պետութեան հաւատի ու լեզուի ընդհանրութեամբ և աղնուական ընտանիքների բազմաթիւ կապերով, տարազով ու սպառազինութեամբ։ Հռոմէացոց դուդաղն ու հարկահանութիւնը Հայաստանում երբեք տեղի չունեցան։ Արդէն այն էլ շատ էր, որ այս երկիրն իւր սեփական բանակի կանոնաւորման և նրա, ինչպէս նաև այնտեղ եղած հռոմէացի զինուորների ապրուստի համար կարողանում էր հարկաւոր ծախսը հոգալ։ Հայ վաճառականները միջնորդ էին հանդիսանում ապրանքների փոխանակութեան զանազան երկիրների՝—Սկիւթիա, Կասպից ծովի վրայով արևելեան Ասիա և Չինաստան. Տիգրիսն և վայր Բաբիլոն և Հնդկաստան, արևմտեան կողմից նաև Կապադովկիա։ Ըստ երևոյթին շատ բնական կըլինէր քաղաքական տեսակէտից, որ հռոմէացիք իրանց հպատակ երկրից տուրք և մաքսահարկ առնէին, սակայն նոքա չարին այդ երբեք։ Հայաստանն այն պետութեան մէջ չէր, որի հետ նա կապուած էր աղգութեան կապերով, իսկ այս հանգամանքը նրա համար կարևոր նշա-

նակութիւն ունեը այն կռուի մէջ, որ վարեցին հռոմէացիք իրանց արևելեան հարևանների հետ կայսրութեան ամբողջ ժամանակ»։ [1])

Երբ Հռոմը վտանգի մէջ էր եւսպատեանների և ապա ազգամիջեան կռիւների ժամանակ, պարթևները յառաջ են խաղում և մտնում Ասորիք ու Փոքր Ասիա։ Սակայն Անտոնիոս, որ արևելքումն էր, ծրագրում է ամբողջ արևելքը նուաճել և արդէն մտքում նա բաժանել էր բոլոր երկիրները իւր որդոց մէջ։ Հայաստանը մտադիր էր տալու Կլէոպատրայից ունեցած իւր Ալէքսանդր որդուն։ 36 թ. ք. ա. աղատուելով Կլէոպատրայի գրկից՝ Անտոնիոս զօրքն առաջ տարաւ դէպի Ծայրագոյն արևելք Հռոմէացոց համար ոչ սովորական ճանապարհով՝ Եփրատով ու Տիգրիսով, այլ նա «ուղղուեցաւ դէպի հիւսիս՝ դէպի Հայաստան և այնտեղ հաւաքելով իւր բոլոր ուժերը և բանակը զօրեղացնելով հայկական այրուձիով, դարձաւ մարական Ատրոպատէնի (Ատրպատական) սարահարթի ուղղութեամբ։ Նրա դաշնակից Հայոց թագաւորը կարող էր առաջարկել նրան ռազմական գործողութիւնների այդպիսի ծրագիր, որովհետև Հայաստանի թագաւորները շատունակ ձգտում էին այդ հարևան երկիրը նուաճել և Ատրաւազդը (Տիգրանի որդին) կարող էր յոյս ունենալ, որ այժմ կը յաղթէ իրան համառուն Ատրոպատէնի սատրապին։ Բայց ինքը՝ Անտոնիոսը այդպիսի դիտաւորութիւնները չէր կարող առաջնորդուիլ»։ [2]) *Թուլէ նա ուղում էր պարթևների վրայ յարձակուել իրանց երկրի բուն կենդրոնից, յամենայն դէպս Անտոնիոս խիստ ընդդիմութեան է հանդիպում Ատրոպատէնում և «Հայոց թագաւորը յաղողութեան ամենաչնչին յոյսն անգամ կորցնելով, հաւաքում է իւր զօրքերն ու նոցա հետ Հայաստան դառնում»։ Անտոնիոս անասելի տանջանքների հանդիպելով, ստիպուած էր յետ դառնալու հրաման կարդալ և մինչև*

1) V 356—57.
2) V 364.

Հայաստան հասնելը անիմաստ զրկանքներ ու կորուստներ է ունենում։ Զօրքի 1/3-ը կտրուում է։ Հայաստանում Արտաւազդ նրան ընդունում է. Անտոնիոս առկայ է դնում մինչև Անտիոք՝ ճանապարհին կորցնելով դարձեալ 8,000 զինուոր։ Այդ անյաջողութեան պատճառը նա համարում էր Կլեոպատրայի և Հայաստանի թագաւորներին և երբ կեսարի ու Անտոնիոսի մէջ իշխանութիւնը բաժանելու համար անհամաձայնութիւն եղաւ, վերջինս 34 թ. Հայաստան եկաւ, նախապէս գըրեթաեալ տալով Կապադովկիոյ Արխելաթ թագաւորին։ Անտոնիոսի Հայաստան գալն, ինչպէս ինքն ասում էր «նրա համար է, որպէս զի բռնէ թագաւորին, որ մերժել էր Եգիպտոս գնալ։ Վրիժառութեան այս գործողութիւնը եղեռնական կերպով տեղի ունեցաւ խաբէութեամբ և ոչ պատուաղաղելի կերպով ասնուեցաւ Ալեքսանդրիայում, ներկայացնելով Կապիտոլում ասնուող հանդէսների ծաղրանկար նմանութիւնը։ Աչուկը հրամայելու համար նշանակուած Անտոնիոսի որդին այդ ժամանակ Հայաստանի թագաւոր եղաւ և ամուսնացաւ նոր դաշնակից Մարատանի թագաւորի աղջկայ հետ։ Մինչդեռ զբաղուած ու քիչ յետոյ Կլեոպատրայի ցանկութեամբ պատերազմ Հայաստանի Արտաւազդ թագաւորի առաջ որդի Արտաքսիասը (Արտաշէս), որին հայերը նրա հօր տեղ թագաւոր էին հռչակել, փախուստ առաւ պարթեւների մօտ։ Այսպիսով թէ Հայաստան և թէ Մարատան-Արտապատէնան Անտոնիոսի իշխանութեան տակ էին կամ նրա դաշնակիցները, Պարթեւների դէմ պատերազմը թէև յայտարարուած էր, բայց յետաձգուեցաւ մինչև որ Անտոնիոս յաղթէ իւր արևմտեան ասպնին՝ Արտակեցին (Կեսարին)։ Հրահատ Դ (36-1) իւր կողմից յարձակում գործեց Մարատանի վրայ. սկզբում նա յաջողութիւն չունեցաւ, որովհետև Հայաստանում մնացած հռոմէական զօրքերն օգնում էին մարաց։ Բայց երբ Անտոնիոս պատրաստուելով կռուել Կեսարի հետ, դուրս կոչեց այնտեղից իւր վաշտերը, Պարթեւները զօրեղացան, յաղթեցին մարաց ու

թէ Մարաստանը և թէ Հայաստանը տուին Աբտաշէս թագաւորին, որը ի վրէժ հօր գլխատման, հրամայեց բըռնել ու սրախողխող անել Հայաստանում ցրուած բոլոր հռոմէացիներին»։[1])

Ակցիումի և Աղէքսանդրիայի մօտ տեղի ունեցած Անտոնիոսի անկումից յետոյ Օգոստոս ինչքան էլ որ չուզենար իւր նախորդի լայն ու գժուար ծրագրերն իրագործել, պէտք է Հայաստանի նուաճման գործն անպատճառ գլուխ հաներ, որովհետև Հայաստանը Պարթևաց ձեռքն անցնելով, հռոմէացիք կարող էին արևելքում իրանց ձեռք բերած հռչակն ու անունը կորցնել։ Իսկ Հայաստանը ձեռք բերել, նշանակում էր Պարթևաց հետ կռիւ սկսել, որովհետև այդ երկիրը «իւր թէ քաղաքական և թէ ազգայնական համակրութիւններով աւելի հակուած էր պարթևաց քան հռոմէացոց կողմը»։[2])

Աւգոստոս իւր մօտ ապաւինած Աբտոպատէնի թագաւորին տուաւ Փ. հայքը, իսկ Տրդատին, որ անյաջող կերպով փորձել էր Հրահատի իշխանութիւնը խլել և Աւգոստոսին էր դիմել, ուղարկեց Աորիքը, յոյս ունենալով այսպիսով, որ հռոմէացոց յայտնի թշնամի հայոց Արտաշէս թագաւորի առաջը կառնուի։

(Շարունակելի).

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՍԴԵՐ

Մենք գիտմամբ մեր խազերի չափի և յանգերի դասաւորութեան մասին այնքան երկար դրեցինք, որովհետև այս խնդիրը դեռ ևս ուսումնասիրութեան չի առնուած,

1) Տես V 369.
2) 371.

և մեր ժողովրդական երգերի չափը չի բաղդատուած դրա-
կան չափի հետ։

Երբեմն երբեմն խօսք է լինում մեր սովորական տա-
ղաչափութեան մասին, և կարծողներ կան թէ գուցէ
այդ տաղաչափութիւնը յարմար չէ մեր լեզուի ոգուն և
թերևս կարելի է մի նոր տեսակի տաղաչափութիւն մտցնել
մեր բանաստեղծութեան մէջ, որ աւելի ներդաշնակ լինի,
քան մեր սովորական վանկական կոչուած տաղաչափու-
թիւնը։ Մեր բանաստեղծները մինչև անգամ փորձեր են
արել դրել ոտանաւոր կամ դերմանացոց ծայնական կամ
հնչտական կոչուած չափով ոտանաւորներ։ Բայց փոր-
ձերն անյաջող են անցել և կարելի է ասել, որ միշտ էլ
անյաջող կլինեան։ 10-րդ դարուց սկսած, եթէ ոչ էլ առաջ,—
որովհետև այդ ժամանակից միայն ունինք մեր սովորական
չափով գրուած ոտանաւորները,—մեր դրականութեան մէջ
գործածական է մի չափ, որ սխալմամբ միայն վանկական է
կոչւում, որովհետև իսկապես հնչտական է, միայն ոչ գեր-
մանացոց և ռուսաց չափերի նման պարզ ոտքերի վրայ
հիմնուած, այլ բարդ կամ բարձրագոյն ոտքերի, որոնց մէջ
վերջին հնչտերի կանոնաւոր կրկնութիւնն է միայն ի նկատի
առնուում։ Թէ այս չափը որքան առաւելութիւններ ունի, այդ
կը թողնենք. բայց թէ այդ չափը յարմար է մեր լեզուի ոգուն,
դրան ապացոյց է ոչ միայն իւր անցեալը, այլ և այն, որ
ժողովուրդը իւր խաղերի մէջ ճիշտ նոյն չափն է գործածում,
ինչ որ մեր դրագէտները գործ են ածել և գործ են ա-
ծում։ Երկու տարբերութիւնը շատ չնչին է. օրինակ մեր
դրագէտները 7-վանկանի տողը բաժանում են սովորաբար
երկու ոտքի 4 և 3-վանկանի և յաջորդ տողերի մէջ նոյն
բաժանումն ու ոտքերի դասաւորութիւնը կանոնաւորապէս
պահում են, մինչ խաղերի մէջ ոտքերն ազատ են 4 և 3,
3 և 4, նոյն իսկ 2, 3 և 2 վանկանի չինելու և խառն
կերպով դասաւորելու։ Այսպէս ազատ գրուած է սակայն
և Գամառ Քաթիպայի «Բաժակներ առնունք, եղբայր» երգը։

Խաղերի մէջ ոչ գործածական չափերը սիրուած չեն

և դրական բանաստեղծութեան մէջ, ինչպէս են 9-վանկանի և անխառն 6-վանկանի և 13-վանկանի տողերը։ Գրական բանաստեղծութեան 14 և 16 վանկանի տողերը նոյն 7 և 8 վանկանի տողերի վիճակումն են իբրև մի տող, իսկ 3-տանոնի 15-վանկանին նոյն ժողովրդականի զարդացումն է մի առ աւելացնելով։

Ժողովրդական երգերի չափը շատ աւելի բազմազան և հարուստ է քան գրականը։ Այդ չափի տեսակները վերնում գրածով միայն չեն վերջանում, որովհետև մենք միայն մեզ յայտնի խազերն ենք վերցրել և ոչ բոլոր ժողովրդական երգերը, բայց այդքանն էլ միայն արդէն ցոյց է տալիս, որ Էական տարբերութիւն չկայ մեր ժողովրդական և գրական բանաստեղծութեան չափի մէջ, և մի չափ, որ ժողովուրդն ևս գործածում է իր երգերի մէջ, չի կարող լեզուի սգուն համապատասխան չլինել։

Այսքանը հարկանցի այս մասին նկատելուց յետոյ ասենք մի երկու խօսք ևս յանգերի համար։

Յանգերի նկատմամբ ևս մեր ժողովրդական երգը շատ աւելի զարգացած է քան գրականը։ Խազերի մէջ չկան այն թոյլ ու անպէտք յանգերը, որ յանդի տեղ անց կացնել են ուզում մեր բանաստեղծները։ Ժողովրդական յանգերը զօրեղ են ու հնչուն և տողերի վերջում զուգաձայնք չարունելով և որ գլխաւորն է՝ արագ յաջորդելով իրար, վազարշում են ականջը և բանաստեղծութեան հաճար մի զարդ կազմում և ոչ աւելորդ բեռ, որ միայն յանդաչէնները նեղութիւն է տալիս՝ առանց գուարճութիւն պատճառելու ընթերցողին, ինչպէս են մեր արուեստաւոր բանաստեղծների յանգերը մեծ մասամբ։

Չեռի տակ անենալով մօտ 1700 քառեակներ իրենց բազմազան վարիանտներով, դժբախտաբար տեսնում ենք, որ մեր լեզուն ապրատ է յանգերով. առհասարակ թուով են նոյնպիսի քառերը, և հենց այս պատճառով ժողովուրդը շատ անգամ յանդի համար միայն գիմում է իրեն ծանօթ թուրքերէնին, մինչ տողի մէջ օտար քառերը հաճախատաբար պակաս են գործածւում և յաճախ այդպէս

սիներդը վարիանաների մէջ փոխանակուած են հայերէն, և երբեմն շատ ընտիր, բառերով։

Զօրեղ յանգեր կազմելու համար բացի թուրքերէնին դիմելուց ժողովրդական երգը բանեցնում է և մի միջոց, որ յատուկ է նաև աշուղական երգերին, այն է իսկական յանգ կազմող բառի եռանից տողերի վերջում կրկնում է նոյն բառը։ Այսպիսի յանգերը կարելի է կոչել քողարկուած յանգեր, մինչ սովորական կամ պարզ յանգերը մերկ յանգեր են։ Օրինակ՝ հետևեալ առաջին քառեակը մերկ յանգեր ունի, իսկ երկրորդը՝ քողարկուած յանգեր.

Ապուր եմ եփել ագի,
Ուտողի սիրտը դագի.
Ես ու դու իրար սիրենք,
Թող դուշմանը կատաղի։

Ես աղջիկ եմ, ճար չունիմ,
Մի սրտացաւ տէր չունիմ.
Հօրից մօրից զրկուած՝
Աչխատող ազբեր չունիմ։

Յաճախ մերկ և քողարկուր յանգերի միութիւն է առաջ գալիս տողերի մէջ. այսինքն երկու տող միասին քողարկուր յանգ են կազմում, իսկ երրորդ տողը մերկ յանգ է կազմում առաջին տողերի վերջում կրկնուած բառին համ քողնել։ Օրինակ՝

Լուսնակը սարի տակին,
Մամուռը քարի տակին,
Ես իմ հարին կարօտ եմ
Քան վարդ ու մանուշակին։

Հէն, սարէն մարդ ա գալի,
Սարը կրակ ա տալի.
Առաջըս ազուխ բացաւ,—
Իմացայ վարդ ա տալի։

Էս գիշեր ես դուրս ելայ,
Թաթախ ձնիկ թացել ա,
Կը կաթէր մարմար քարին,—
Ետիս աչքն ա՝ լացել ա։

Ղարիբ եմ Կարս գնացի,
Ղարիբ տեղ ճարս գնացի.
Պատկուց ես օր չտեսայ,
Անկեսուր հարս մնացի։

Յանդերի քողարկուրթիւնը յատուկ է աւելի շատ կանի քառեակներին։

Մ. Աբեղեան

(Կը շարունակուի).

Կաթի պակասութիւնները

Դառն կաթ. Շատ անգամ կովերի կաթը դառն համ է ունենում և այդ դառնութիւնը տեւում է երբեմն մի քանի օր կամ շաբաթներ: Ոմանք սորա պատճառը համարում են կեն-դանեաց կերի մի քանի տեսակները՝ գերնմատը (люпинъ) շան-երիցուկը (собачья ромашка) և առհասարակ ճահճային տեղերի բոյսերը, որոնք իւրեանց մէջ պարունակում են դառն նիւթ և մարսողական գործարանի ուժերդի նանգարմունքը. վերջին դէպքում լեարդից լեղին թափւում է աղեան մէջ և այնտեղից անցնում կաթի մէջ: Մերացած կովերն էս երբեմն մի կամ մի-քանի պտուղներից դառնալի համ ունեցող կաթ են տալիս:

Բայց կաթի այս պակասութեան գլխաւոր պատճառը մի քանի տեսակ բակտերեաներ են, որոնց մի տեսակը նախ ա-ռաջացնում է ստինքի վարակիչ հիւանդութիւն, և ապա ընկ-նելով կաթի մէջ, մի տեսակ թթու է առաջացնում, փոխում է պանրածինը և կաթին դառն համ տալիս:

Կաթի այս պակասութեան դէմ կռիւ մղելու համար հար-կաւոր է նախ և առաջ փոխել կովերի կերը և լաւը տալ, ամե-նայն օր աղքը վերցնելուց յետոյ՝ նոցա ախորը պէտք է սրսկել կարբոլա—թթուտով, ծծումբով ծուխ տալ, նոր ստինքն երկու անգամ լուանալ նախ դոլ և ապա կարբոլաթթուտ խառնած ջրով: Երեք օրից յետոյ կաթի և սերի դառն համը բոլորովին կանցնի և սերից կրկին կարելի կլինի պատրաստել հիանալի իւղ:

Կաթի դառնութեան առաջն առնել կարելի է նաև կովի ստինքը սոդի 2% տաք լուծուածքով և աղքահութը հոսե-լու համար պատրաստած խողովակները կրէօլինի 3% լուծուած-քով լուանալով, իսկ պտուկների անցքերը հարկաւոր է ախոտա-հանել 3% սոկերորակի թթուտուի (борная кислота) լուծուածք սրսկելով: Պակասաւոր կաթը պէտք է բաժանել առանձին:

Թթուած կար. Կաթն օդի մէջ մնալով՝ սկսում է կրել գա-նագան խմորումներ (дрожжи), մանաւանդ երբ տեղն տաքու-թիւնը բարձր, մօտաւորապէս 30° լինի: Կան մի քանի տեսակ խմորումներ, որոնք ընդունակ են անմիջապէս թթուեցնել կաթ-

---

Ծանօթ. Այս յօդուածը տպուում էր շարունակաբար «Արարատ»ի ան-ցեալ տարուայ համարներում եւ ընդհատուեց Մայիս ամսուայ համարից: Այժմ տալիս ենք նորա շարունակութիւնն ու վերջը:

նաշաբարը, նրանից կազմել ածխաթթու (углекислота) և ոսկրատ։ Բացի այդ լամորումներից՝ կան նաև մի քանի տեսակ դարպասման ատրճանակներ, որոնք նոյնպէս կարող են այդպիսի դործողութիւններ առաջացնել։

Ինչպէս որ կան շատ տեսակ ոսկրատ լամորումներ, նոյնպէս և կան մի մեծանոցից յատկութեամբ տարբեր շատ տեսակ կաթնային լամորումներ։ Մի քանիսը կաթնաշաքարը դարձնում են կաթնային թթուներ, ուրիշները՝ մրջնական, իւղային և ածխային թթուներ և այլն։ Այսպիսի լամորումները կաթի ամորացկան լամորումներից բոլորովին տարբեր են լինում։ Կաթի մէջ կաթնային լամորումը կարող է սկսուել 10—120 ջերմութեան մէջ և որքան աւելի լինի ջերմութիւնը, այնքան աւելի յաջող տեղի կունենայ այդ լամորումը և միայն 70—750 ջերմութեան մէջ դադար կառնի. այսպիսով ուրեմն եռացրած կաթը դժուարութեամբ կարող է թթուել, եթէ անմաքուր ամանի մէջ չէ դրուած և կամ խառնուած չէ հում կաթի հետ։

Եթէ կաթը թթուում է որև է լամորման պատճառով, այդ պիսին առանց կասկածելու կարելի է դործ ածել, միայն թէ նրանից չէ կարելի պանիր պատրաստել։ Եթէ լամորման պատճառն ուրիշ տեսակ միկրոօրդանիզմներ են, այն ժամանակ պէտք է ղգոյշ լինել, որովհետև նրանցից մի քանիսը տալիքի բորբոքման պատճառ դառնալով, թունաւոր ներգործութիւն են անում. այդպիսի կաթը պանրադործութեան համար անպէտք է համարուում։

Աւազախառն կար. Այսպիսի կաթը տալիքից արտադրուելու՝ տավարաբար ցաւեր է պատճառում կենդանիներին, որովհետև տալիքում հաւաքուած՝ այսպէս կոչուած կաթի բարիրից մանրերը կթելիս դուրս են գալիս։ Պէտք է աշխատել տալիքից կթելու միջոցով հեռացնել այդ կաթի քարերը. բայց եթէ դրա այնքան մեծ են, որ անկարող են անցնել պատւի անցքի միջով, այն ժամանակ հարկաւոր է ալինդեռով հեռացնել։ Սակայն եթէ այս ևս չյաջողուի, մնում է տալիքը կոտրել և այնտեղից դուրս հանել այդ քարերը։ Եթէ կաթի դեղձն ամենալաւ դործունէութեան մէջ է, որ տեղի է ունենում առվորաբար կաթնատուութեան ժամանակամիջոցում, այս տեսակ անդամահատութիւն անվնաս կանցնի։ Բայց որովհետև հէնց այդ դրութեան մէջ ամենից աւելի երկիւղ պէտք է կրել, որ չլինի թէ պատւի անցքը կաթի քարերով վնասուելով, տալիքի բորբոքում առաջանայ և դրանով վնասուի ոչ միայն հովի կաթնոտութիւնը, այլ և նոյն իսկ նորա կեանքը, այս պատճառով

այդպիսի ժամանակ ոսինքից անվնաս կերպով կաթ արտա-դրելու միակ հաւատամք միջոցը պէտք է համարել կաթնահան դոցծկքի (молочный катетеръ) դործադրութիւնը:

Ախի կաթի պատճառը դիտաւորապէս այն տուներն են, որոնք ոսինքի բորբոքում են առաջացնում: Երբեմն պատա-հում է նոյն մի կամ մի քանի պտուղներից աղտեամ կաթ են տալիս:

Մահացու տարափոխիկ ճիւանդութիւններ առաջացնող կար. Կաթն իւր մէջ կարող է պարունակել դանազան վնասակար վարակիչ հիւանդութիւնների սաղմեր: Այդ սաղմերը կարող են դանուել դեռ ոսինքում եղած կաթի մէջ անասունների հի-ւանդութեան պատճառով. բայց աւելի յաճախ կաթն ընդու-նում է իւր մէջ այդպիսի սաղմեր շուրջն եղած ապականուած օդի միջից կամ անմաքուր ջրով լուացած սմանների: Մա-հացու հիւանդութիւնները առաջացնող բացիլներից են՝ տու-բերկուլեօզի (թոքախտ, բարակացաւ), սիֆիլ և խօլերայի բացիլները:

Թոքախտաւոր կովերի կաթի մէջ սովորաբար լինում են տուբերկուլեօզի բացիլներ: Ներկայումս ընդունում են, որ այդ հիւանդութիւնը կենդանիներից կաթի միջոցով կարող է անցնել մարդկանց: Փորձերը ցոյց են տուել, որ այս բացիլները կարող են պահպանել իւրեանց կենսունակութիւնը թթու կաթի մէջ 10—40 օր, իսկ պանրի մէջ 35 օր: Ինչ վերաբերում է բացիլի դոյութեանը իւղի մէջ, այդ մասին կարծիքները տարբերում են: Մինչ դեռ մի քանի հետազօտ փորձերը ցոյց են տուել, որ իւղն էլ ընդունակ է վարակուել այդ բացիլների սաղմերով, ուրիշներն իւրեանց փորձերով ընդհակառակն են ապացուցա-նում և տուում են, որ դոքա տուբերկուլեօզի բացիլներ չեն:

Տիֆի բացիլները կարող են պահպանել կաթի մէջ իւրեանց կենսունակութիւնը մինչև 25 օր. իւղի մէջ նոցա սաղմերը ոչնչանում են միայն 5—7 օր անցնելուց յետոյ:

Ինչ վերաբերում է խօլերայի բացիլներին, ոմանք կաթը այդպիսի բացիլների համար յարմար տեղ են համարում, միայն 12 ժամ անցնելուց յետոյ նոքա ոչնչանում են: Ուրիշներն ապա-ցուցանում են, որ նոքա կաթի մէջ կարող են իւրեանց դոյու-թիւնը պահպանել 4—6 օր, իսկ իւղի և պանրի մէջ խօլերայի կենդանի սաղմերը ոչնչանում են: Ահա այս պատճառով կաթը խօլերայի ժամանակ չպէտք է այնքան էլ դառնդատօր համարել և վախենալ դործածելուց:

Կաթի միջոցով կարող են վոխադրուել սկարլատինան, անա-

սուններուն դաբաղ (ящуръ) կոչուած հիւանդութիւնը, որուն վարակիչ սաղմը դեռ անյայտ է, նաև կատաղութիւնը, թանչքը (дисентерія), ծաղիկը, դեղնախտը և այլն: Սկիզբնական սաղմերը շատ լաւ աճում են թարմ կաթի մէջ և առաջին օրերում երբէք չեն կորցնում իւրեանց վարակիչ յատկութիւնը: Դիֆտերիական բացիլները եփած տաք կաթի մէջ շատ արագ են պարզանում, այնպէս որ այս հիւանդութիւնն էս կարող է կաթի միջոցով անցկենալ մարդկանց:

Թէպէտ սուննիերը մի կողմից շատ անգամ բոլորովին ձգում են կաթի արժէքը, սակայն մեւս կողմից նոքա շատ օգտակար են հանդիսանում կաթնատնտեսութեան համար: Մի կողմ թողնելով սերի մէջ կատարած թթուռանների ազդեցութիւնը, երբ նրանից (թթուած սերից) պատրաստում են այսպէս անուանուած հմի կարագ, առանց այդ օրգանիզմների օգնութեան հատանտանաբար անհնարին կլինէը պանիր պատրաստելը. վերջապէս կաթից այնպիսի համեմքներ պատրաստելը, ինչպիսին է կեֆիրը, որ գործ է ածւում թուլացած, տկարացած օրգանիզմներին ուտացնելու համար, մարդկութիւնը դարձեալ պարտական է այդ բուսական անտեսանելի էակների գործունէութեանը:

Տնային գործածութեան ժամանակ այս վտանգներից ազատ մնալու համար կաթը երբէք հում չպէտք է լամել, նախ եռացնել և ապա գործ ածել, թէև հում կաթն աւելի դիւրամարս է, քան եփածը, թէ որ նոր է կթուած և ազատ է հիւանդութիւններից և վերոյիշեալ սաղմերից:

Կաթի սառեցնելը, պաստորացումը եւ հակափուտ նիւթերի գործադրութիւնը. Որպէս զի կաթը թէ անմիջական գործածութեան և թէ նրանից այլ և այլ նիւթեր պատրաստելու համար շահաւէտ լինի, կարևոր է ամենից առաջ արգելել նրա մակարդումը, թթուիլը՝ դանդաղեցնելով սուննիերի աճեցումը կամ բոլորովին ջնջելով նոցա կաթի մէջից, բացի այն դէպքերից, երբ սուննիերն, այդ մանրիկ էակների գոյութիւնն անհրաժեշտ է նոցանից մի քանի տեսակ արդիւնքներ ստանալու համար: Բայց բաւական չէ միայն կաթի և սերի մէջ վարակամ թթուութիւն առաջացնող սուննիերի առաջն առնելը, որոնք այսպէս թէ այնպէս ձգում են կաթի արժէքը. կարևոր է մարդուս վնասակար, վտանգաւոր հիւանդութիւններ յառաջացնող բակտերեաններն ոչնչացնել:

Որպէս զի կաթը երկար ժամանակ անփոփոխ մնայ, դըլ-

կաուտրասէս թթուելուց ազատ լինել, որպէս զի հնաը լինի գոլորովին ոչնչացնել կամ դանդաղացնել սունկերի զարգացումը, անհրաժեշտ է ձեռք առնել հետևեալ միջոցները.

1. *Կաթը սառեցնել,*
2. » *տաքացնել,*
3. *Կաթի հետ զանազան հակասեպտներ խառնել:*

Կաթ սառեցնելը. Կթելուց անմիջապէս յետոյ շատ հեշտ կերպով կարելի է կաթը սառեցնել, որով կդանդաղի թթուելը և մակարդուելը, որովհետև որչափ աւելի սառը լինի կաթը, այնչափ աւելի ուշ կգոյանան նորա մէջ սունկերը: Մանաւանդ սառեցնելն օգտակար է ճանաչուած այն դէպքում, երբ հարկաւոր է կաթը տաք եզանակին (ամառը) վերադրել հեռու տեղ: Ինչ էլ որ լինի, այնու ամենայնիւ կարևոր է որ կթելուց անմիջապէս յետոյ տեղի ունենայ սառեցնելը: Սառեցնելու համար կարելի է ամանով կաթը ջրի մէջ դնել: Բայց եթէ կաթը շատ է, որպէս զի աւելի լաւ սառչի, հարկաւոր է դործ դնել սառեցնող դործիք կամ սառնարան, որի մէջ կաթը սառչում է այն պատճառաւ, որ հոսում է վերևից ներքև պղնձեայ խողովակների արտաքին մակերևոյթի վերայով, մինչդեռ ջուրը հոսում է այդ խողովակների միջով հակառակ ուղղութեամբ: Դործածութեան մէջ կայ երկու տեսակ սառեցնող դործիք. Լաուրենսի և նորա ձևով պատրաստած շատ ուրիշները և գլանաձև դործիքներ, ինչպէս օրինակ Բաղենում պատրաստած Շմիտի և Բեհտոլինի դործիքները: Սառնարաններն լուբեանց բոլոր պարագաներով արժեն 22—125 ռ, նայած լուբեանց սառեցրած կաթի քանակութեանը. իւրաքանչիւր ժամում կարելի է սառեցնել 100—2000 լիտր կաթ:

Կաթի սառնութեան աստիճանը կախումն ունի սառեցնելու համար դործածուղ ջրի քանակութիւնից և նորա բարեխառնութիւնից: Եթէ 36° ջերմութիւն ունեցող կաթը $35/_4$° ջերմութիւն ունեցող ջրով սառչելով կընկել է 10°-ի, այն ժամանակ սառեցնելու համար ջրի քանակութիւնը 2 անգամ աւելի պէտք է լինի ընդրած կաթի քանակութիւնից: Եթէ նոյնպիսի ջրով կաթը սառել է մինչև 17°, կարելը կլինի կաթի քանակութիւնից 1,24 անգամ աւելի ջուր: Կաթ սառեցնելու համար կարելի է գործածել ջրհորի կամ աղբիւրի ջուր. սակայն եթէ սառը ջուր չլինի, պէտք է աւազանի մէջ լցնել սառուց ու այնպէս գործածել:

Բայց որովհետև ամեն մի տուն անկարող է սառնարան կամ յատկապէս այդ նպատակով պատրաստած սառեցնող պա-

հարան ունենալ, մենք առաջարկում ենք կաթ պահելու համար մի չափազանց հասարակ եղանակ. ամանով կաթը պէտք է բաւականաչափ ցած բարեխառնութեան մէջ պահել, որով մի կողմից կաթը թթուեցնելու առաջն առած կլինենք, իսկ միւս կողմից սահմանած չենք լինի բաւական թանձր դնով ծախուղ առնեցնող պահարան դնելու: Այդ նպատակով հարկաւոր է վերցնել մի ապակեայ աման (յուրան, բանկայ, սափոր), լցնել նորա մէջ կաթ, ծածկել համապատասխան ծածկոցով և դնել մի լայն, մինչև կէսը ստուր ջրով լցրած թասի մէջ: Յետոյ կաթով ամանը պէտք է ծածկել թաց քաթանով կամ անձեռոցիկով, միայն հարկաւոր է հետևել, որ դրա ծայրերն անպատճառ ջրի մէջ լինեն: Ահա այս է կաթ պահելու ամբողջ դործը: Աւելացնենք նաև այն, որ այսպէս թէ այնպէս կաթի չոքատիպ թթուելուն նպաստող արեգակի ճառագայթների վնասակար ազդեցութիւնից պաշտպանելու համար, անհրաժեշտ է ջրով թասի մէջ դրած կաթով լի ամանը դնել մի մութ տեղ, միայն այնպէս, որ այդ տեղը խոնաւ չլինի և օդը մաքուր լինի:

Կաթի պահպանութեան համար 150 Ц. բարեխառնութիւնը պէտք է ամենաբարձրը համարել, որովհետև այդ աստիճանից սկսած ջերմութեան աստիճանաբար աւելանալովը կաթնային թթուտի բակտերիաները կսկսեն աճել և բազմանալ: Հետևեալ աղիւսակը ցոյց է տալիս, թէ որքան կարևոր է կաթը դոնէ մինչև 150 ջերմութեան մէջ պահելը:

390 ջերմութեան մէջ կաթը մակարդւում է 19 ժամ անց-նելուց յետոյ.

250	»	»	»	29	»	»
200	»	»	»	48	»	»
171/20	»	»	»	63	»	«
150	»	»	»	88	»	»
100	»	»	»	99	»	»
20	»	»	»	14 օր	»	»

Տաքացրած կաթն ևս որոշ ջերմութեան մէջ ապականւում է սպմերից: Այս վտանգն առաջին անգամ արել է 1810 թ. մի գիտնական. նորան յաջողուեց ջերմութեամբ կաթը մի քանի ամիս իւր բնական վիճակի մէջ պահել՝ ամեն օր թեթև կերպով եռացնելով:

Յայտնի է, որ կաթի մէջ եղած սպմերը չեն կարող գոյութիւն ունենալ 0—120 ջերմութեան մէջ և միայն 120-ից սկսած մինչև 300 ջերմութեան մէջ կսկսեն աճել, բազմանալ: 300 բարձր հետզհետէ կսկսեն պակասել այդ սպմերը և որոշ աստիճանի ջերմութեան մէջ արդէն բոլորովին կսչնչանան:

Պէտք է աչքի առաջ ունենալ և այն, որ բարձր ջերմութեան ազդեցութեան տակ (տաք 70°-ից) կաթի համը և կազմութիւնը փոխւում է և այդ աւելի դժալի է լինում այն ժամանակ, երբ բացի ջերմութեան տատանութիւնից՝ կաթը երկար ժամանակ ենթակայ է լինում այդ ջերմութեան: Ահա այս պատճառով, որպէս զի կաթը կարողանայ իւր սկզբնական յատկութիւնն ու համը պահպանել, չպէտք է 70° աւելի բարձր ջերմութեան ենթարկել:

Ջերմութեան ազդեցութեամբ կաթը երկար ժամանակ անվնաս պահելու համար կայ երկու եղանակ. պաստորացումն և ստերջացումն:

Պաստորացումն (пастеризація). Պաստորացման ժամանակ դարձ են դնում 1000 ից ցած, աւելի որոշ տաք 700 ջերմութիւն և որովհետև այս գիւտը Պաստեօրինն է, այդ պատճառով կոչւում է պաստորացումն: Ինչպէս տեսանք այդպիսի ջերմութեան մէջ ոչնչանում են կաթնային թթուտանները առաջացնող բակտերեաներն մի մասը և վարակիչ հիւանդութիւնները առաջացնող տարմերը և մնացածներն էլ ախորտանում են: Այդ տարմերը ոչնչանում են՝

30	րոպէում	70°	ջերմութեան մէջ.
15	»	85°	» «
5	»	100°	» »

Տուբերկուլեօզի (թոքախտի) բացիլները ոչնչանում են՝

10	րոպէում	70°	ջերմութեան մէջ
5	»	90°	» »
2	»	90°	» »
1	»	95°	» »
վայրկենապէս		100°	» »

Այսպիսով ուրեմն պաստորացման եղանակով պատրաստած կաթը ազատ է լինում վարակիչ հիւանդութիւնները առաջացնող տարմերից, մանաւանդ տուբերկուլեօզից. այդ մի-ջոցով դանդաղում է նաև կաթի թթուելը և մակարդուելը, որովհետև ոչնչանում են դոցա առաջացնող բակտերիաները: Սորա մէկ օգուտն էլ այն է, որ կաթի կազմութիւնն և համը չի փոխւում, իսկ այդ կարևոր երևոյթ է, երբ կաթը դործ են ածում հիւանդների և երեխաների համար: Ներկայումս շատ տեղերում հոլթերին սնուցանում են այսպիսի կաթով, որով անասունները ազատ են լինում այն հիւանդութիւններից, որ նոքա տանում են կաթից (առաւելապէս տուբերկուլեօզ): Բայց եթէ պաստորացման ենթակայ եղած կաթը ազատ, ան-

մասչելի չէ օդի աղդեցութիւնից և եթէ նա սաղմերից ապատ ամրափակ անոթների մէջ չէ, այն ժամանակ բակտերեաները նորից սուաջ կգան և կթթուեցնեն կաթը, թէպէտ քիչ ուշ: Անմիջապէս պատրաստուածից, այսինքն 70° տաքացնելուց յետոյ եթէ կաթը սառեցնենք մինչև 10°, շատ լաւ կաթ կստացուի:

Стерилизація (стерилизація)· Պատճառը սոյն սուեց, որ կաթը մինչև 100° տաքացնելով չէ կորցնում իւր մէջ եղած բոլոր սաղմերը: Նորան սաղմերից բոլորովին ազատելու, ստերիլացնելու համար հարկաւոր է տաքացնել մինչև 120°, բայց այդ ելով կաթի յատկութիւնը կվնասուի և նոյն իսկ մանկի համ կտանջայ, այդ պատճառով ստերիլացումը շատ օգտակար չէ համարուում:

Սառեցումը լինում է մասնաւոր և կատարեալ: Առաջինս սեռակի ստերիլացման ժամանակ կաթը տաքացնում են $\frac{3}{4}$—1 ժամ մինչև 100—103° հասող շոգու ազդեցութեամբ: Այս դէպքում յաջողութիւնը նոյնն է, ինչ որ պատրաստման ժամանակ, ոչնչանում են միայն որոշ սաղմեր: Այսպիսի մասնաւոր սառեցումը դործադրում է երեխաներին երբև նուազ ծառայող վաճառուելիք կաթի համար, որովհետև այս դէպքում տաքացնելը այն նպատակով է տեղի ունենում, որ վտանգաւոր հիւանդութիւններ առաջացնող սաղմերն ոչնչացումը տեղի կարճ ժամանակամիջոցում է կատարուում (10 րոպէում), քան պատրաստման ժամանակ: Այս կերպ մշակուով մնայն այն դէպքում կստացուի սաղմերից ազատ կաթ, երբ կաթը շատ մաքուր է կթուած եղել:

Կատարեալ սառեցումն, այն է կաթի մէջ եղած բոլոր բակտերիաների ոչնչացումը կարող է տեղի ունենալ երեք կերպ· առաջին՝ կաթը 6-7 ժամ եռացնելով· երկրորդ՝ չափազանց շատ տաքացրած գոլորշու ներգործութեամբ, որի ժամանակամիջոցն այնքան տեղի կարճ էլինում, որքան ճնշումը տատիկ է լինում (130°—$\frac{1}{2}$ ժամ, 120°—2 ժամ, 102—103°—3$\frac{1}{2}$—4 ժամ) և երրորդ՝ ընդհատ ընդհատ տեղի ունեցող տաքացումով· այս դէպքում կաթը նախ պէտք է տաքացնել մի քանի րոպէ 100°, յետոյ մի բաւականաչափ տեղում (40°) 12—24 ժամ հանգիստ թողնել, ուր օդ չէ կարող մտա գործել, կրկին տաքացնել մի քանի րոպէ մինչև 100°, որից յետոյ հարկաւոր է կրկին թողնել այնպէս, ինչպէս վերևում ասուեց: Այս գործողութիւնը պէտք է կրկնել 5—6 անգամ: Ինչ ազդեցութիւն որ ունենում է 100° ջերմութիւնը մի քանի րոպէում, նոյնպիսի ազդեցութիւն է ունենում 70° ջերմութիւնը 30 րոպէում: Այս եղանակով կաթը

սառեջացնելու հարկաւոր է ամէն անգամ այդպիսի ընդմիջումների ժամանակ կաթը թողնել 200-ից բարձր ջերմութեան մէջ, որպէս զի չչնչացած սպիտակները կարողանան առաջ գալ, աճել, որ յետոյ հեշտ լինի նոցա ոչնչացնելը:

Սառեջացման առաջին երկու եղանակները այնքան էլ նպատակայարմար չեն, որովհետև այսպիսի ժամանակ ինչպէս սրտաբին, նոյնպէս և նեբբին վուլսուսութիւնը շատ դժուարին է լինում. կաթը մութ կինամոնագոյն է դառնում և անհաճոյ համ ստանում: Երրորդ եղանակն ևս արդէն նպատակայարմար է, բայց այն սատիճան դժուարին և թանգ, որ սովորական պայմաններում դժուար է դործադրել. միայն այն դէպքում, երբ կաթի գինը բաւական թանգ է լինում և երբ կարևոր է սպիտակները ոչ ամբողջովին սպատ կաթ ստանալ, կարելի է դործադրել այս եղանակը:

Ասածներից պարզ երևում է, որ կաթը սպիտակներից բոլորովին սպատ կացուցանելն այնքան էլ հեշտ չէ և շատ դէպքերում բաւական կհամարուի, եթէ հիւանդութիւնները առաջացնող սպիտակները միայն յաջողուի ոչնչացնել: Համեմատաբար սակաւ և հեշտ ոչնչացող սպիտակներ պարունակող կաթ ստանալու համար ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել, որ կովից ստացուած կաթը մինչև մշակելը մաքուր լինի:

Կաթի պատրաստման և սառեջացման համար դործածուելիք դործիքները երկու տեսակ են լինում. առաջին տեսակի դործիքների մէջ կաթը տաքացնում են 1000-ից ոչ բարձր, վերջիններների մէջ 1000-ից բարձր: Իւրաքանչիւրը դոցանից նոյնպէս բաժանւում է երկու կարգի. մի քանիսի կազմութիւնը նման է առնարանների կազմութեան. կաթը հոսում է խողովակների պրսի կողմից, իսկ ներսից հոսում է դոլորշին. միւսների կազմութիւնն այնպէս է, որ նոցա մէջ լցրած կաթը դրսի կողմից դոլորշիով տաքանում է. կաթը մշտապէս շարժման մէջ է կամ առանձին խառնիչի միջոցով և կամ հէնց դործիքի պատերովը:

Սառեջացման համար շատ դործիքներ և եղանակներ կան. հետաքրքրութեան համար առաջ ենք բերում այստեղ Սօկլետ-Լէսկի սառեջացման եղանակը: Կաթը պէտք է ոչ բոլորովին լիքը լցնել խորով կամ ծղօտէ դործուածքով պատած փոքրիկ շշերի մէջ, որոնց վերևի կողմը քիչ դատարկ տեղ է մնում օդով լցուած. ամանների բերանը լաչակից պատրաստած և մէջտեղը ծակ խցանով փակւում է: Այդ շշերը պէտք է դնել խուփ ունեցող մի կոնքի մէջ, որը պէտք է լցնել ջրով մինչև շշերի պարանոցի սկիզբը և ապա փակելով խուփը, ջուրը տաքացնել մինչև եռացման աս-

տլճանի ու թողնել 5 վայրկեան, որպէս զի կաթի մէջ լուծուած օդը դուրս գայ լցանի անցքից։ որանից յետոյ լցաննելի անցքը հարիւրաւոր է վաճել մի փոր կոնաձև ապակիով, իսկ կոնքը խուփով և ապա նորից տաքացնել ջուրը եռացման աստիճանից քիչ պակաս։ Այս ըոլորից յետոյ հանում են շշերը և թողնում սառչելու։ Այս կերպ պատրաստած կաթը կարող է պահուել մինչև մի ամիս։

Տաքացնելու համար ընտրած կաթը պէտք է հատարելապէս թարմ լինի, որովհետև ամենաանշան թթուութիւնն անգամ բաւական է, որ տաքացնելուն պէս կաթը մակարդուի, որից յետոյ դորձերը անկարող կլինի կանոնաւորապէս գորձել։ Զպէտք է տաքացնել այն կաթը, որն արդէն ենթարկուել է ըջանը (վարակումն ախտաբերից մինչև հիւանդութեան յայտնուելու ժամանակամիջոցը) անցել է։

Սառեցրած կաթն օգտակար է գորձածել առաջին երկու երեք օրուայ մէջ, մանաւանդ եթէ նորածինն երեխայոց հաճար է գորձածուում, որովհետև այդպիսի կաթն աւելի ժամանակ անցնելուց յետոյ անմարսողական է դառնում։

Հակափուս ցիւրեր. Կաթը թթուելուց երկար ժամանակ պահած մնալու համար երբեմն նորա հետ խառնում են մի քանի յայտնի նիւթեր. ոսկեորակի թթուտ (борная кислота). կամ ոսկեորակ (бура). իւրաքանչիւր լիտր կաթի հետ խառնում են 0,5 գր.։ Գորձ են ածում նաև ուռիտային թթուտ՝ (салициловая кислота), իւրաքանչիւր լտրի համար 0,2—0,3 գր.։ Կաթի թթուութիւնն երբեմն աշխատում են ծածկել՝ խառնելով իւրաքանչիւր լիտր կաթի հետ մի մի գրան սոդա կամ երկբնածխական սոդա (двууглекислая сода)։ Նոր վիրձերը ցոյց են տուել, որ եթէ այս հերպ վարուելով մարդս իւր նպատակին հասնի, այնուամենայնիւ չպէտք է երբէք յիշեալ նիւթերը գորձածէ, որովհետև ժամանակի ընթացքում այդպիսի կաթը կարող է նոյն իսկ վնասակար ներգործութիւն ունենալ մարդու կազմուածքի, մանաւանդ ստամոքսի և աղիքների վերայ։ Սհա այս պատճառով պէտք է արդելել թէ այս և թէ ուրիշ հակուտա նիւթերի գորձածութիւնը։

Կաթի թթուութիւնը եւ նորա հետազօտելն ու խարդախելը.

Կաթնաստանեաց թեան մէջ շատ կարևոր է իմանալ կաթի աստիճանը, որ կախուում ունի նորա մէջ եղած ճարպի քանակութիւնից, խարդախած կամ անխարդախ լինելուց և մէջն եղած

հատատուն նիւթերի քանակութիւնից: Կարևոր է իմանալ նաև կաթի տեսակարար կշիռը: Այդ նպատակով առաջ ենք բերում այստեղ համառօտակի այն գործադրուող հեշտ միջոցները, որոնցով կարելի կլինի մօտաւորապէս իմանալ կաթի պատրաստութեան չափը և ապա նորա տեսակարար կշիռը: Այդ միջոցները բաւական են իմանալու համար, թէ արդեօք կաթը քնական վիճակի մէջ է, թէ խտրպախած է, երեսից սերը քաշած, վերցրած է, կամ թէ արդեօք ջուր չէ աւելացրած: Սոյն նպատակին հասնելու համար կարևոր է կաթը հետազօտութեան ենթարկել. բայց նախքան այդ անելը, որպէս զի արդիւնաւոր հետևանքների հասնենք, անհրաժեշտ է, որ հետազօտելի կաթը լաւ խառնուի և նորա տաքութեան աստիճանն իջնի մինչև 15: Կաթը ուղղահայեաց դիրքով պէտք է խառնել և եթէ շատ չէ, կարելի է խառնել փայտեայ գդալով, շատ եղած դէպքում շերեփով: Խառնելու նպատակն այն է, որ նիւթա կարևոր նշանակութիւն ունեցող կաթի ճարպային գնդակիկները, որոնք միշտ ձգտում են բարձրանալ կաթի երեսը, համահաւասար կերպով տարածուեն կաթի մէջ:

Պատահում է երբեմն, որ նորա վերցրած կաթի բաղադրութիւնը, մանաւանդ ճարպի քանակութիւնը, պակաս կերպով տարբեր է անարատ կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնից. դա միայն համար վերցնելու ժամանակ կաթը լաւ չխառնելու հետևանք է:

Եթէ հարկաւոր է համարում միայն համար վերցուելիք կաթը պանրատան ամաններից առնել, այդպիսի դէպքում աւելի լաւ կլինի ջուրը լցնել մի ամանի մէջ, որով աւելի ճիշտ կերպով կարելի կլինի մէջին չարդը (проба) իմանալ. եթէ այս նախազգուշութիւնը չպահպանուի, մնում է, որ ընդհանրապէս ամանից միայն համար վերցրած կաթը առանձին քննուի և դուրս բերուի նորա բաղադրութիւնը. միայն այսպիսի դէպքում ուշադրութեան պէտք է առնել նաև ընդհանրապէս ամանի մէջ եղած կաթի քանակը. ընդհանրապէս ամանից երբեմն օրինակ վերցրած կաթը պէտք է յարաբերական լինի նորանում եղած կաթի քանակութեանը. այսպէս օրինակ, կարելի է ընդհանրապէս 100 լիտր կաթից վերցնել 1, 1/2 կամ 1/4 լիտր և ապա բոլոր վերցրածները խառնել ու տասցուածը ենթարկել հետազօտութեան:

Եթէ կաթի երեսն արդէն սեր է բռնել, այն ժամանակ սերն ամբողջ կաթի մէջ տարածելու կամ խառնելու համար հարկաւոր է միջոցներ ձեռք առնել: Սորա համար անհրաժեշտ

է կաթը 30—40° տաքացնել և խառնելով տաքեցնել մինչև 150, որով սերն մէջ հաւաքուած ճարպը կարող է հաւասարապէս տարածուել կաթի մէջ:

Կաթ հեռադրելը, նորա մէջի ճարպի քանակը որոշելը պէտք է շատ շուտ կատարուի և կամ թէ չէ կաթը պէտք է պահել սառն օդի մէջ (10°-ից ցած), հակառակ դէպքում նորա մէջ շոր նիւթերը կաթնային թթուտուի պատճառով կպակասեն: Փորձերը ցոյց են տուել, որ 10—15° ջերմութեան մէջ 48 ժամ անցնելուց յետոյ պակասել է՝ 0,3%, 19—21° ջերմութեան մէջ՝ 0,78%, 96 ժամ անցնելուց յետոյ՝ 1—1,92%:

Գնել կաթի արժէքը, նշանակում է իմանալ դրա տուրապէս նորա մէջ եղած ճարպի քանակը: Ներկայումս կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու շատ միջոցներ կան: Թէպէտ այդ միջոցներից համարեա և ոչ մէկը բոլորովին ճշտութեան ապահանին չի մօտենում, բայց նոցանից մի քանիսը յարմարութեան պատճառով նստա ընդարձակ գործադրութիւն են ստացել կաթնատնտեսութեան մէջ: Գործադրուող միջոցները շորս խմբի կարելի է բաժանել. ա. սերի քանակութիւն չափելը, բ. փորձ ենթարկուող կաթի անթափանցկութեան աստիճան որոշելը, գ. փորձի համար լուղ հարելը, դ. միքանի քիմիական նիւթերի միջոցով, երբեմն և կենդրոնախոյս զօրութեամբ ճարպ հանելը:

Ա. Կաթի մէջ սերի քանակութիւնը չափելու համար շատերը գործ են ածում Շեվալէի սերաչափ (кремометръ или сливкометръ) գործիքը, որովհետև եղածների մէջ ամենից պարզն է և յարմարը: Այս գործիքի միջոցով կարելի է որոշել 24 ժամուայ ընթացքում դուլ և հանգարտ մնացած և 12—15° ջ. ջերմութիւն ունեցող կաթի սերի քանակութիւնը: Այդ գործիքը բաղկացած է 20 սանտ. բարձրութիւն և 4 սանտ. տրամագիծ ունեցող ապակեայ մի գլանից, որ բաժանուած է աստիճանների. 15 սանտ. բարձրութեան վերայ նշանակած է 0 աստիճանը, որը հետզհետէ բարձրանալով հասնում է մինչև 100-ի: Սերաչափի մէջ կաթը պէտք է լցուի մինչև 6 աստիճանը և ինչպէս վերևն էլ յիշեցինք, 24 ժամ շարունակ պէտք է թողնել հանգիստ մի դուլ տեղ. այդ ժամանակուայ ընթացքում սերը՝ բաժանուելով կաթից՝ նստում է նորա երեսը բաւական որոշ և նկատելի շերտով: Այսպիսով որոշած կլինենք թէ սերի քանակը, թէ կաթի հետ չուր խառնած լինել կամ չլինելը և թէ երեսից սերը քաշած է թէ ոչ: Որոշ ժամանակ անցնելուց յետոյ պէտք է նայել, թէ սերը քանի՞ մասերի բաժանմունքներ՝ այսինքն

առաջման տեղ է բռնել. հենց այդ բաժանմունքների թիւը ցոյց է տալիս, թէ կաթի մէջ հարուցից որ մասն է սեր: Այսպիսի դէպքում որպէս զի սերի առաջին շերտերն էլ, որոնք այսպէս թէ այնպէս պարզ նկատելի չեն, որոշ լինին, վերջերը կաթի մէջ մի քանի կաթիլ անիլինի կապոյտ գոյն կամ լեղակի կաւմիր գոյն պէտք է լցնել, որով սերը կպատնանէ իւր նախկին գոյնը, իսկ երեսը քաշած կաթը կնկերկուի:

Բայց սերաչափի դործիքով չեն կարող ճիշտ հերսով լմա-նալ կաթի պարարտութեան չափը, որովհետև թէպէտ սերի շերտի ծաւալը զուդընթացաբար մեծանում է կաթի մէջ եղած ճարպի քանակութեամբ, այսինքն որքան շատ ճարպատ լինի կաթը, այնքան աւելի սեր կտայ, բայց ընդհանրապէս սերի քանակութիւնը ուղիղ յարաբերական չէ կաթի մէջ եղած ճար-պի քանակութեանը: Բացի այն բանից, որ շատ դժուար է պահ-պանել կաթը միևնոյն բարեխառնութեան մէջ, որ նոյնպէս ազդում է սերի շերտի բարձրութեան վերայ, (տաք տեղ դրած սերաչափից աւելի քիչ սեր կտտացուի, քան ցուրտ), այստեղ կարևոր է ուշադրութեան առնել նաև կաթի յատկութիւնը, նորա թանձրութեան աստիճանը և ճարպային դնտահիւնների մեծութիւնը: Որքան թեթևաձիգ լինի պանրածինը և որքան մանր ճարպային դնտահիւնները, վերջիններս այնքան աւելի դան-դաղ կբարձրանան կաթի երեսը և այնքան աւելի պակաս թուով կընկնեն նորա սերի մէջ 24 ժամուայ ընթացքում: Միևնոյն կա-թից վերցրած երկու օրինակները, որոնք միևնոյն քանակու-թեամբ ճարպ են պարունակում, կարող են բոլորովին տարբեր քանակութեամբ սեր պարունակել:

Կաթի սերի և նորա մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշ յարաբերութեան մէջ դնելու համար կատարուած վոր-ձերը բոլորովին անյաջող են անցել և հիմա կաթի սերը չափե-լու համար դործ են ածում առանձին դործիքներ (лактокритъ), որոնք հենդրոնախոյս ոյժութեամբ են դործում և որոնցով կարճ ժամանակուայ ընթացքում կարելի է լմանալ դանազան տե-սակ կաթերի սերի քանակը, թէպէտ որքա էս ունին իւրեանց թերութիւնները:

Բ. Կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու մի միջոց է համարուում նաև կաթի անթափանցկութեան աստիճանը: Առաջ կարծում էին, թէ կաթի անթափանցկութեան միակ պատճառը նրանում եղած ճարպն է (լոյսի ճառագայթները անդրադառնում են ճարպային դնտահիւնիներից), հետևապէս և անթափանցկութեան աստիճանը ճիշտ յարաբերական է ճարպի

քանակութեան հետ. այսպէս օրինակ, որպէս զի կաթը մի որոշ աստիճան թափանցկութիւն ունենայ, որպէս զի նորա մի որոշ չերեկից կարելի լինի տեսնել մի յայտնի սեւ գիծ և այլն, պարտ է կաթի հետ աւելի ջուր պէտք է խառնել, քան ոչ պարտ, այլընդ ճարպային գնատիկներով աղքատ կաթի հետ: Բայց այս հայեցողքը ճիշտ չէ երկու տեսակէտից:

Առաջին, որ կաթի անթափանցկութիւնը կախում ունի ոչ միայն որոշ քանակութեամբ կաթի մէջ եղած ճարպային գնատիկներից, այլ և նորա մեծութիւնից. որքան մանր լինեն ճարպային գնատիկները և, հետեւապէս, որքան շատ լինեն նորա, այնքան աւելի ստուար կլինի լոյսի անդրադառնալը և նոյնքան աւելի պակաս թափանցիկ կլինի կաթը: Եթէ վերցնենք միևնոյն քանակութեամբ ճարպ պարունակող երկու տեսակ կաթ, ճարպային մանր գնատիկներ պարունակողն աւելի ստակաւ թափանցկութիւն է ունենում և այդպիսի կաթն աւելի պարարտ է համարւում, քան այն կաթը, որի մէջ ստակաւ, թէպէտ նոյնչափ ճարպային գնատիկներ կան: Եւ որովհետև տարբեր տեսակի կաթեր տարբեր մեծութեամբ ճարպային գնատիկներ են պարունակում, պարզ է ուրեմն, որ թափանցկութեան աստիճանով կաթի ճարպի քանակութիւն որոշելն այնքան էլ յաջողի հեռանքներ չի ունենում:

Երկրորդ. կաթի թափանցկութեան պատճառը ոչ միայն նորա մէջ եղած ճարպն է, այլ և պանրածինը և հանքային նիւթերի մանրիկները:

Գ. Որև է կաթի մէջ եղած ճարպի քանակութիւնը որոշելու համար մարդիկ փորձեցին հասել նոյն կաթից երբև օրինակ վերցրածը: Այս միջոցը սկզբներում խիստ ընդարձակ դործունէութիւն է ունեցել նախօրհնի դործքով. այդ դործքի մէջ միատեսակ և միևնոյն պայմաններում կարելի է կարագ հասել վեց տեսակ կաթից: Այս կերպ ստացուած կարագը կշռում են և համեմատ ճարպի չափը: Բայց որովհետև կարագի քանակն ամեն ժամանակ համապատասխան չի լինում ճարպի որոշ քանակութեանը, ինչպէս այդ ցոյց են տալիս փորձերը. շատ պարարտ կաթը որոշ հանդամանքներում կարող է տալ աւելի պակաս կարագ, քան քիչ պարարտ կաթը, այդ պատճառով այսպիսի միջոցներով երբէք ճիշտ եզրակացութիւնների չի կարելի հասնել, մանաւանդ որ այս նպատակով դործ ածուող դործիքը շատ հոդացողութիւն և խնամք է պահանջում, նպատակայարմար չէ և բաւական թանկ է, մօտաւորապէս 100 մարկ արժէ:

Դ. Կաթի մէջ եղած ճարպի քանակը որոշելու մէջոցնե-րից չորրորդը (ճարպը քիմիական նիւթերի օգնութեամբ բաժա-նել) աւելի մեծ նշանակութիւն ունի և աւելի շատ է տարած-ուած: Սորա առաւելութիւնն այն է, որ նոյն իսկ վերլուծ-ման ժամին օդին, մինչև իսկ բոլորովին անծանօթ մարդն անդամ կարող է գործադրել. միքանի տեսակները նոյն իսկ հնարաւորութիւն են տալիս միաժամանակ և կարճ միջոցում մեծ թուով հետազօտութիւններ կատարել: Այդ տեսակները կամ եղանակները կարելի է երկու կարգի բա-ժանել. առաջին դէպքում կաթից ճարպը բաժանւում է՝ վերան քիմիական նիւթեր աւելացնելով, իսկ երկրորդ դէպ-քում կարևոր է համարւում գործ դնել կենդրոնախոյս զօրու-թիւն: Առաջին կարգին է պատկանում Մարշանի ճարպ չափե-լու գործիքը (лактобутирометръ), որ 30 սանտ. երկարութեամբ և 12 մլլմ. արամագիծ ունեցող ապակեայ մի խողովակ է՝ ներ-քևից վակուած, իսկ վերևից բաց, որի մէջ հատուած չափով կաթ և 90° սպիրտ կամ 630 եթեր (эфиръ) և մի քանի կաթիլ այրեցական կալի (ѣдкій кали) խառնելուց յետոյ, հարկաւոր է լաւ հարել և ապա խողովակը մտցնել 38°—40° տաքացրած ջրի մէջ ու թողնել 10—15 րոպէ: Կաթի ճարպը հետզհետէ կբարձ-րանայ խողովակի վերևի մասերը և երբ ճարպային գնդակիկ-ները բոլորովին դադարեն բարձրանալուց, խողովակը ջրի մէջից պէտք է հանել, ուղղահայեաց դնել և հաշուել նորա վերայ նշանակած աստիճանները՝ սկսած այն տեղից, որտեղից որ ճար-պային մասը բաժանւում է եթերից կամ սպիրտից: Երկրորդ կարգին է պատկանում Դէ—Լաւալի գործիքը (лактокритъ): Այս գործիքի առաւելութիւնը նրա ժամանութեան և պարզու-թեան մէջն է կայանում. միակ անյարմարութիւնն այն է, որ ամեն ժամանակ ճիշտ հետևանքների չենք կարող հասնել: Բայց երբ հարկաւոր է լինում որոշել ճարպի քանակը մօտաւորա-պէս, օրինակ առանձին կովերի կաթի մէջ եղած ճարպը, այդ-պիսի դէպքում Մարշանինը մի կանոնաւոր՝ կատարելապէս օգ-տակար գործիք է համարւում: Այս գործիքով շատ արագ և բաւական ճիշտ կարելի է գործ կատարել. այս պատճառով էլ գործնական տեսակէտից վերլուծութիւնը նրանս օգտաւէտ է համարւում: Մի փորը քանակութեամբ (10 խոր. սանտիմ.) կաթի հետ պէտք է խառնել հատատարաչափ քանակութեամբ 50% ծծմբային թթուտ (концентрированная сѣрная кислота) խառն քացախային թթուտ (уксусная кислота): Խառնուր-դը 7—8 րոպէ պէտք է տաքացնել եռացրած ջրում և ապա մո-

տաւորապէս 5 րոպէ ենթարկել սեպարատօրի մէջ կենդանական օգուտների՝ ամեն մի րոպէում 6000—6600 շրջան անելու արագութեամբ: Կաղամախի վերայ եղած բաժանմունքները կարելի է անմիջապէս որոշել, թէ կաթի մէջ եղած ճարպը հարիւրից որ մասն է կազմում, որովհետև երկու բաժանմունքների միջև կաթից առաջացած ճարպի ծառայը համապատասխան է կաթի մէջ եղածի $^1/_{10}$ %-ին: Թէպէտ այս գործիքով աղդիւնաւոր հետևանքների միշտ կարելի է հասնել, բայց պէտք է զգուշացել այն դէպքերում մեայն, երբ պատրաստի կայ թանկագին սեպարատօր:

Այս մեջտեղ պատճ է, որ երբ մի լիտր կաթի մէջ 12,6% դրամից աւելի ճարպ չկինի, նորա երեսին ճարպային նիւթերը չեն բարձրանայ, այդքանը լուծուած է մնում եթերի կամ պիրտի հեղուկի մէջ: Մարշան ընդունում է, որ այս քանակութիւնն անվտանգ է ամեն տեսակ կաթի մէջ և հեղուկի երեսը բարձրացած ճարպային նիւթերից գործիքի ուղղանչիւռ բաժանմունքի համապատասխան մասը քաշում է 0,0233 դրամ: Որքան այս վոլձերն աւելի խնամքով կատարուեն, այնքան աւելի կարելի կլինի մօանենալ ճշտութեան սահմանին:

Կաթի թթուութիւնը. Նախ կարևոր է որոշել կաթի ուղղանչիւռ տեսակի վիճակը, մանաւանդ թթուութեան աստիճանը: Կթելիս որքան շատ կեղտ ընկնի կաթի մէջ, որքան բարձր բարեխառնութեան մէջ պահուի կաթը, այնքան աւելի բարձր կլինի նորա թթուութեան աստիճանը և ընդհակառակը: Մի աստիճան թթուութիւնը (50 խ. ս. կաթի մէջ) համապատասխանում է 0,0255 դր. կաթնային թթուուտի: Թարմ կաթը իւր մէջ 1—4 աստիճան թթուութիւն է պարունակում: Կաթն եփելիս մսխվում է այն ժամանակ, երբ նա իւր մէջ 5,5—6,5 աստիճան թթուութիւն է պարունակում, որ համապատասխանում է 0,114—0,146 դր. կաթնային թթուուտի: Կաթն ինքն իրան մաքարդում է, երբ 15—16 աստիճան թթուութիւն է ունենում, որ 0,337—0,360 դր. կաթնային թթուուտի է հաւասար (կամ երբ 100 խ. ս. կաթի մէջ 0,674—0,720 դր. կաթնային թթու է լինում):

Կաթի մէջ եղած թթուութիւն որոշելը շատ կարևոր մի բան է կաթնատնտեսութեան մէջ. դրանով երևում է կաթի հետ ունեցած վարուելոյսի եղանակը՝ սկսած կթուելուց և թարմ կաթի թթուութեան աստիճանի բարձրանալը, որ տեղի է ունենում միայն կթելուց մի առ ժամանակ անցնելուց յետոյ. այդ ժամանակին աւելի ուշ կլինի, եթէ խնամքով

վարուած լինին կթելիս և նամբով էլ պահած կթելուց յետոյ: Սակայնեաը մինչև թթուութեան առաջանալն նկատելի դառնալն եղած ժամանակամիջոցն անուանում է ինկուբացիոնի շրջան: Տարացրած կաթի վերաբերմամբ այդ շրջանը տևում է 3—8 ժամ, 100 տաքութիւն ունեցող կաթինը՝ 52—75 ժամ: Խիտ մաքուր կթած կաթի վերաբերմամբ այդ ժամանակամիջոցը չորս անգամ աւելի երկար է տևում, քան անջնամ՝ անմաքուր կթած կաթինը: Որքան աւելի երկար է տևում այդ շրջանը, նշանակում է թթուով նոյնքան աւելի պակաս ապականիչ մասնիկներ են լինում կաթի մէջ, հետևապէս և նոյնքան աւելի դանդաղ է սեղն ունենում նորա բաղադրիչ մասերի մէջ փոփոխութիւնն և ընդհակառակը:

Պատահ ասելով այս տեսակէտից որև է կաթ հետազօտելու համար պէտք է այսպէս վարուել. նախ պէտք է որոշել փորձի ենթարկուող կաթի թթուութեան աստիճանը (ինչպէս հում, նոյնպէս և եփած վիճակի մէջ. յետոյ ամանի մէջ լցրած, լայնով (ватная пробка) ամուր փակած 120 լոր. սանտ. կաթը պէտք է դնել օդային բաղանիքի մէջ և ժամանակ առ ժամանակ որոշել վերցրած օրինակների մէջ թթուի քանակութիւնը. թարմ, վերին աստիճանի մաքուր պայմանների մէջ կթած կաթի թթուութիւնը հաղիւ նկատելի է դառնում մինչև 5 ժամ անցնելուց յետոյ: Անկնամ կթած թարմ կաթի մէջ հինգ ժամից յետոյ արդէն նկատելի է դառնում քաւականաչափ թթուութիւն: Պատրաստման և սառեցման ենթակայ եղած կաթի վերաբերմամբ այս եղանակը չի գործադրւում: Եթէ հարկաւոր լինի ճշտութեամբ լսմանալ ոչ թէ կաթի թթուութեան աստիճանը, այլ նորա թթուած լինելը, այն ժամանակ կատարելագոյն քաւական կհամարուի ապերասով փորձելը: Եթէ հաւասար քանակութեամբ 68% (ըստ ծաւալի) ապերսի հետ խառնած և 150 տաքութեան մէջ պահած կաթը չի մակարդւում, այն ժամանակ այդ կաթը եռացնելիս ևս մի քանի ժամուայ ընթացքում չի մակարդւում: Եթէ այս փորձի ժամանակ կաթը թոյլ կերպով է մակարդւում, այն ժամանակ ևս կարելի է եռացնել, առանց երկիւղ կրելու թէ կմակարդուի»

Վատահողջ է համարւում այն կաթը, որ 9 ժամից առաջ կամ 18 ժամից յետոյ է մակարդւում: Ադյուլսի կաթը չպէտք է գործ ածել ոչ լմելու և ոչ պանրագործութեան համար: Կասկածելի է համարւում այն կաթը, որ 9 ժամից յետոյ կամ դեռ 12 ժամ չանցած մակարդւում է. գործ պատճառը ոչ միայն անասունների հիւանդութիւնն է, այլև կաթի մէջ եղած ան-

մաքրա թիւննեբը և գուցէ անտառննեբի կերած վատ խառը: Այս պատճառներից մէկին ու մէկը միայն բաւական է պանրագործութեանը վնաս հասցնելու: Կաթնաեամոցայցի մէջ (лактоферментаторъ) 12 ժամից յետոյ և 18 ժամից առաջ մակարդուղ կաթը առոյգաբար է համարւում: Այն տեղերում, որտեղ կաթն այլ և այլ տեղերից են հաւաքում պանիր պատրաստելու համար, աւելի նպատակայարմար է կաթնաեամոցայցի գործածութիւնը:

Նախքան որև է կաթից պանիր պատրաստելը, ամեն ոք պարտաւոր է նախօրօք այդ կաթից մի փոքր օրինակ վերցնել փորձելու համար, թէ արդեօք ո՛րքան յարմար է նա պանրագործութեան. այդ փորձերի հետևանքը կամ արդիւնքն այն է, որ կաթի բոլոր թերութիւննեբն աւելի շուտ և պարզ երևան են գալիս այն ժամանակ, երբ նա պահւում է 40 կամ 45° բաբեւաուներութեան մէջ: Զալատաւրնում Վալաեբի կազմած կաթնաեամոցայցը բաղկացած է թիթեղեայ մի կաթսայից, որ երկու բաժանմունքներ է ունենում. վերինը՝ փակը ջրի համար է և նոյնպէս փորը՝ 50 և 100 լ. ո. բավանդակութեամբ, խոլոր ծածկուած ապակեայ պլանակների համար է, իսկ երկրորդը՝ բացը սպիտակ լամպի համար է: Պլանակները և խոխինները պէտք է վերին աստիճանի մաքուր պահել, լուանալ նախ մսխրաջրով և ապա եռացրած ջրով. աւելի նպատակայարմար կլինի պլանակները ատերջայնել: Վերին բաժանմունքը փակւում է խուփով և ունի ջերմաչափի համար մի անցք, որի գնատակ մասը, որ պաշտպանուած է ծակ-ծակ թիթեղեայ պատեանով (футляръ), խորասուզում է ջրի մէջ: Սառեցրած պլանակների 2/3 մասը պէտք է լցնել կաթով և խոյն փակել ատերջացրած խցաններով: Ջուրը պէտք է ամբողջ ժամանակը անփոփոխ կերպով 40° տաքութիւն ունենայ: Փորձի ենթարկուող նրբաքանչիւր տեսակ կաթ պէտք է առանձին նմանապէս կիթած լինի: Պլանակների մէջ եղած կաթի բարձրութիւնը հաւասար պէտք է լինի կաթսայի մէջ եղած ջրի բարձրութեանը:

Առաջին անգամ պլանակների մէջ եղած կաթը պնտելու համար կաթսայի խուփը կարելի է վերցնել 6 ժամ անցնելուց յետոյ, նոյն փորձը կարելի է կրկնել 9—12 ժամ անցնելուց յետոյ: Առոյգ, մաքուր կիթած և լաւ պահած կաթը երբէք չպէտք է 12 ժամուայ ընթացքում մակարդուի և կամ դղալի կերպով փոփոխուի: Փորձն աւելի կատարեալ և ճիշտ անելու համար կարող ենք նրբաքանչիւր տեսակ կաթից երկ-երկու պլանակ

լինել և դիտելու ժամանակ նորանից մեկին խիլիկը բռնալ և այնպէս տեսնել, թէ արդեօք կաթը թթուած է և այլն: Տատներկու ժամուայ ընթացքում կաթի թանձրութեան աստիճանը պէտք է մնայ այնպէս, ինչպէս սովորաբար լինում է առաջ կաթինը և եթէ այդքան ժամանակամիջոցում մակարդուի, շատ թանձր չպէտք է լինի, չպէտք է պղպջանկներ ունենայ և ոչ էլ քուլայ քուլայ թելաձև ձգուած լինի և այլն: Միայն պէտք է նմանալ, որ այսպիսի յոյսերը կարելի է հասատել թարմ և ոչ թէ մի օրուայ կիթած կաթի հետ:

Գ. Ղազարեան.

ՅԱԽԵԼՈՒԱԾ „ԱՐԱՐԱՏԻ“ 1904 Թ. ԱՊՐԻԼ

ԹՈՒՂԹ

ՍԻՄԷՕՆԻ ՍՍՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ս. Ն.

*ՓԻԼԻՊՊՈՍ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ**

Ա.ռ ի յերկնաւսա պատուեալ և ի դերագոյե բարեպաւաճեալ, հռչակելի և հաստատեղ վենասատանէս ի հրեշտակաբնակ խորանացս երկնանման յօրինուամբ դեբանդչակ ուխտիցս, զմբեթաձէն և սպաշէն սուրբ
5 *եկեղեցեացս տանս Կիլիկիոյ, այսինքն Սսայ սուրբ էջմիածնայ և սուրբ Սուիւա և սուրբ Աստուածածնի և սուրբ Լուսաւորչի Այծոյն և այլ սուրբ աջերացն, որք աստանօր կան հաւաքեալք։ Եւ ի սոյն սպասաւորէ նուաստ Տէր Սիմէօն կաթուղիկոսէ և պատրիարքէ սրբոյ*
10 *աթոռոյն Երուսաղէմայ։ Առ հոգևոր եղբայրդ մեր Տէր Փիլիպպոս կաթուղիկոս Հայոց։*

Գիտութիւն լիցի քեզ, որ դրեալ էիր ընդհանրական քարտէզ և նամակ հանդերձ տեառնատառաք ողջունիւս և նոյնատանդ սիրով առ ամենայն արմենակոչ

Վ.ԵՆ. Թղ. 34բ։ * Պաշտպանութիւն իրաւանց սրբոյ աթոռոյ տանն Կիլիկիոյ։ Թուղթ Տեառն Սիմէոնի ամենայն Հայոց կաթուղիկոսի տանն Կիլիկիոյ, պատասխանի թղթոյն՝ զոր առաքեաց Փիլիպպոս կաթուղիկոսն Վաղարշապատու։

1. գերապոյն էէն։ 2. քարոզելի եւ մինաստանէս։ 3. յօրինեալ։ 4. սրբոց։ 5. տանն։ չիք այսինքն։ 5. սրբոյ։ 6. էջմիածնի. սրբոյն Սուիւայ. սրբուհւոյ Աստուածածնին։ 7. սրբոյ Լուսաւ։ 8. աստ կան հաւաքեալ։ 9. չիք նուաստ։ ամենայն Հայոց և պատ։ 10. Երուսաղէմի։ 11. ամենայն Հայոց։ 12. զոր։ 13. քարտէս։

15 խուման, որ յաշխարհս Կիլիկիայ, ի Սիս և ի Բերիոյ քաղաքին դերագահ և ընդհանուր սեփականեալ ամենայն Սսոյ, և միաւսար բնաւից զաւակաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, վարդապետաց, եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, սրբոց հարց ևլն։

20 Նախ դրեալ ես թէ, «յուշ լիցի ձեզ, ով հետեւողք առաքելոցն» ևլն. բերելով վկայութիւն ի Սողոմոնէ՝ եթէ «Քանդի հզօր է քան զմահ սէր. և խիստ իբրև զդժոխս՝ նախանձ» (Երգ երգոց Ը. 6)։ Այս, ճշմարտութեամբ ասես զայս. բայց զինչ է կարդ սիրոյ. այսինքն 25 երկու են, նախ խնդրելով զիմոխարէնն զսիրելն, իբրև զդժոխս նախանձ. այն ճշմարտութեամբ ասես և այս պատկառ է. զի որ խնդրէ, պակաս առնէ զինդրելին։ Իսկ երկրորդ սէրն առանց խնդրելոյ սիրեն և այս դերագրական է. զի Սաուսծոյ նմանի, որպէս առաքեալն ասէ. «զի ոչ 30 մեք սիրեցաք զնա, այլ զի նա սիրեաց զմեզ» (Ա. Յով. Դ. 10)։ Եւ մեերիմ սէրն այն է, որ դործով խնամէ և մօտ սիրէ. իսկ խնամելն՝ իբր թէ ողջանօք խօսի խոնարհութեամբ. զի դոն այնպիսի բանք, ոչ ողջանօք, այլ խրատեցուցանեն զմարդն։ Բայց տեսանեմ ի ոտսանէ ի քեզ և 35 ոչ գիմն. զի հեռի են այս ամենայն ի քէն. զի միայն լեզու առչորես ի սիրոյ և սակաւք քո վասն առաւել նախանձու մշտակէզ առնեն զքեզ։ Զի ասասյեալ ես. «Հուր սիրոյ ձերոյ առչորեալ մշտակէզ առնէ զսակեաս իմ յարաժամ մղձկմամբ պատիս, որ ոչ բաւի և պատմի

15. չիք և ի Բերիոյ։ 16. չիք քաղաքին։ դերագահիս ընդհանրաքար համայն

Թղ. 35ա։ 16. սեղմականեալ և մասնաւիճակեալ բաժնի աթոռոյն։ 17. չիք և։ միագումար բնաւից։ 19. և այլ սրբոց հարց։ 21. Սաղոմոնէ։ 22. Թէ հզօր քան զմահ սէր։ 24. չիք այսինքն։ 25. կրկին. նախ։ չիք զփոխարէնն։ 26. նախանձ խիստ է։ չիք ասես։ 27. զի ամենայն որ։ առնու քան։ 27—8 իսկ երկրորդն։ 28. վերադրական է։ 29. չիք զի Սաուսծոյ նմանի։ ասէ առաքեալն. ոչ զի։ 30 նախ նա։ 32. իբրու Թէ։ 33. ողք ողջանօք են, սակայն խրատեցուցանեն։ 35 ոչ մի. զի հեռի է։ 36. լեզուաւ առչորիս. 37. չիք Զի։ 38. Թէ հուր։ 39. մղձկմամբ պատիս։

40 քարախիզիւ և տամխիւ, միայն առ Աստուած յայտնի է զայս։ Ահա բանիւ քո զքեզ ատես, ոչ ի քեզ սիրոյ հաւր կայ և ոչ առչօրսումն և ոչ մշտակեզ ոսկերացդ այրսումն և ոչ միշտ մղձկիս սրտիւդ, վասն զի սէրն ի սրտէ տարեալ զուտոզն. և զի քո սէրդ ոչ ի սրտէ է և ոչ հոգևոր և մարմնաւոր։
45 Եւ եդեալ ես կրկնաբանութեամբ, եթէ վասն զի հզօր առացաք զուտելութիւն զթոյ և սիրոյ մերոյ, զոր չիք նմանութիւն սորին յայլ մարմնաւոր իրս։ Զի՞նչ է քո գաւթն, և զի՞նչ քո սէրն առ աստա. զի սէրն նախ՝ տեսութեամբ է զմիմեանս. երկրորդ՝ խօսակցութեամբ.
50 երրորդ՝ երթևեկութեամբ. չորրորդ՝ պատգամաւ և նամակաւ. հինգերորդ՝ միջնորդօք։ Ահա ի սոցանէ միթէ գտանի ի քեզ. զի զաստա ոչ ես տեսեալ. և ոչ ընդ աստա խօսակցեալ և ոչ ի աստա երթևեկութեամբ ընթացեալ և ոչ պատգամս և նամակս ուղարկեալ և ոչ
55 միջնորդօք յորդորեալ վասն սիրոյ և գթոյ, և ոչ երբեք նամակս առ մեզ եկեալ։

Ապա ճար երևի քան զմահ հզօր սէր և գութ քո. և ոչ երբեք. այլ չղղաքորդել է աղաքեն քո և ոչ սէր և գութ։ Զի եթէ սէր գոյր ի քեզ և գութ առ մեզ
60 կամ ի վերայ մեր ժողովրդեան, սիրոյ նամակաւ և քաղցր բանիւք յորդորական սէր առաքէիր առ մեզ։ Բանզի զնո ես զքո համբաւն ոչ եմ լուեալ և ոչ զքեզ տեսեալ և ոչ յորդորական նամակ քո առ մեզ եկեալ։

Թղ։ 35ր։ 40. քարախիզ։ 41. այս։ գու զքեզ ատես զի ոչ։ 42. յոսկերսդ մշտակեզ այրումն։ 43. փղձկիս սրտիւ։ ի սրտէն։ զուտոզն. խակ։ 44. չիք զի։ 45. Եւ երկրորդեալ ես։ եթէ քան զմահ հզօր։ 46. սիրոյ և գթոյ, զոր։ 48. զի՞նչ է քո սէրդ։ 49. միմեանց է։ 51. Արդ՝ աստա ուրեմն ճրն ի սոցանէ։ 52. տեսեալ երբէք. 53. առ աստա երթևեկութեամբ։ 54. պատգամաւ և նամակաւ ընդ աստա։ սէր արարեալ և ոչ։ 56. նամակ քո։ 57. չիք հզօր։ 58. ոչ երբէք։ 59. կամ գութ։ դէպ առ մեզ։ 60. ժողովրդեանն մերում, նա սիրոյ։ 61. բանիւ զթուղթ

Թղ. 36ա։ 61. սիրայորդոր առաքէիր։ 62. Արդ, տակաւին

Բայց տեսանեմ զքեզ վառեալ և բորբոքեալ իբրև զբեհեման հրոյ, որ այրէ և ոչնչէ զամենայն նիւթ իբրև. զնուր նախանձ քո։ Տեսանեմ զքո յօժարութիւն՝ որ գայ առ ի ապանանել և կործանել զարևմտեանս 1), բայց ոչ ես ձեռնհաս. զի «եթէ Աստուած ի մեր կոյս է, ով է ի հէնջ մեզ հակառակ» (Հռոմ. Ը. 31). զի «Տէր ամենատեսանիոյ հակառակ է. տայ չնորհս խոնարհաց» (Առակ. Գ. 34)։

Դարձեալ գրեալ ես թէ, դէտ գոլով զբրիստոսիւն հոգալ պարտիւք զհօտին Քրիստոսի ըստ առաքելոյն։ «Քանզի յուսոյց և բարերարուց պարտապան եմ» (Հռոմ. Ա. 14) ևն։ Այո, ճշմարտութեամբ է ասացեալդ, որպէս որ քարոզեցիք յերկիրս Լեհաց, և մինչև ցայսօր հրատարակի ընդ ամենայն աղգս 2)։ Իսկ զայն, որ ի վերոյ գըրեալ ես, թէ «օրհնութիւն ընդհանրական» և զքո ուրախացն սէրն երևեցուցանես. որ ցուցանելով զատացեալդ՝ ասացեալ ես. «Երկնչիմ յոմանց դիւրաւայթաքաց»։ Ո՞վ է դիւրաւայթաքն, զի դու զքեզ դու սայթաքես և ընդդիմադիր լինիս դու քեզ, և օրինակ բերես առաձնեալսայեայ. «որք յարեն զտուն ի տուն և զագարակ առ ագարակ մերձեցուցանեն» (Եսայի Ե. 8)։ Զոր տուն յարեցեալ կամ զոր ագարակ մերձեցուցեալ առ ագարակ։ Աւաղ յիմարութեանս։ Դուք ընդէր զԱզուանիոյ տունն յափշտակեցիք, զոր ի ձեր թուղթն գրեալ էիք, թէ ինքն զը-

պահաբաւ քո չիմք լուեալ։ 64. միայն տեսանելիք։ 66. քանզի իբրև պնուր է։ 66—7. դյօժարութիւն քո, որ կամիս ապանանել և կորուսանել զարև։ 68. զի եթէ Տէր։ 70. հակառակ կայ։ 72. գոլով մեր։ 73 հօտին առաքելոյ։ 74. բարերարուց իմաստնոց և անմոխիր։ չիք պարտապան։ 75. ասացեալդ։ 76. քարոզեցիք յերկիրն։ 78. չիք և։ 79. սէրդ երևեցուցեր՝ ոչ ցուցր։ 80. Ասացեալ ես։ 81. կու սայթաքես։ 82. չիք գու։ Վասն զի օրինակ առբերես չնսայեայ։ 83. տուն առ տուն։

Թղ. 36ᵇ։ 84. չիք մերձեցուցանեն։ 84—5. Արդ, զոր տուն յարեցեալ առ տուն, և զոր ագարակ։ 87. զոր գուք ի ձեր թղթոջ։ եթէ ինք-

լուխ աթոռ է ի սուրբ Լուսաւորչէն կարդալ։ Նմանպէս և զԱղթամարային ընդ ձեր իշխանութեամբ նուաճեցիք, որ ԵՃԻԶ տարի է, որ ինքնագլուխ կաթուղիկոսք են. 3) թէպէտ դիրք կու պարտաւնեն։ Ծես, ըս եղայ յարոյ տան առ տուն՝ թէ դու «ուտելով պառնս այրեաց, պատճառանօք երկարեալ զաղօթս, զի առաւել դատաստան ընդունիցին» (Մարկ. ԺԲ. 40)։

Դարձեալ գրեալ ես թէ, «իւրաքանչիւր յոր կոչումն կոչեցաւ, ի նմին կայցէ (Ա. Կորնթ. Է. 20), և իւրաքանչիւր զիւր բեռն բառնալոց է»։ Եւ գիտես՝ թէ իւրաքանչիւր զիւր բեռն բառնալոց է, իսկ ընդէր դու զայլ վիճակներն և զայլոց տունն յափշտակեցեր ըստ վերոգրելոցն թէ, «Աղուանք» ևլեն։ Դարձեալ գրեալ ես, «և զի, թէ իցէ առագրել օրինակս, ոչ իսկ գոյ սր, որ պատասխանատրիցէ։ Քանզի անհատն և տեսակն ի սեռն տեսանի, այլ ոչ սեռն և տեսակն ի յանհատան պարունակի։ Վասն զի ամենայն տեսակ և անհատ՝ կենդանի են, բայց ոչ ամենայն կենդանին մարդ է. որպէս մասունքն ի հանուրն տեսանին, բայց ոչ հանուրն ի մասունս»։

Այս բանս բազում տեսութիւնս ունի. սակայն զայս բանս այն մտօքն էք գրեալ, թէ մեք յառաջ եմք և գուք վերջին, կամ՝ թէ մեք գլուխ՝ և գուք մասունք։ Եւ ասացեալ ես թէ. ո կարէ առագրել սմա պատասխանի. իբրև թէ զրոյցն մեր է։

Այո, այդպէս էր. վասն զի էր երբեմն, զի առաջին կաթուղիկոսութիւնն ի սրբոյն Գրիգորէ Լուսա-

նալուս։ 88. աթոռ է և թէ սուրբ Լուսաւորիչն է։ 91. Վերք պարտաւնեն։ Արդ, ըս եղէ։ 93. երկարել։ զի առնլիս։ 97. Արդ՝ եթէ գիտես որ։ 98. չիք խոկ ուրեմն գու զայլոց վիճակքն։ 100. վԱղուանս և թէ զայլսն։ չիք Դարձեալ Գրեալ ես, զի եթէ իցէ։ 101. առագրելիս։ 102. նաարեսցէ։ 103. և տեսակն յանհատան։ 105. այսինքն մասունքն։

Ծ։ 37ա։ 106. և ոչ։ 107—8. Այո, և այս բանս տեսութիւն ունի, զի գուք այնու մտօք գրեցեալ էք վաչս, թէ մենք առաջինք։ 109. վերջինք։ գլուխն, գուք՝ մասունք։ 110. զի ասելով թէ։ 111. է այնպէս ասել, պէս թէ գրոյցն ի մեզ է։ 112. այդ այդպէս էր երբեմն, վասն զի

ԾԱՆՕԹԱԳԻՒՆՆԵՐ

1. Հնումն Մեծ Հայաստանը կոչւում էր Արեւելեան Հայք, իսկ փոքր Հայքը՝ Արեւմտեան, որոնք բաժանւում էին իրարից Եփրատ գետով։ Ի. դարում, երբ Հայաստանը բաժանուեց Յունաց և Պարսից մէջ, Յունաց բաժինը կոչւում էր Արեւմուտք, իսկ Պարսիցը՝ Արեւելք։ Այս տեսակ բաժանումն յայտնի է նորհնացուն էլ (Տիրք Գ. պլ. ԾԸ). «Վասն որոյ Թողու (Սահակ) զմեսրոպ ի վերայ վարդապետութեան կողմանն արեւմտից ... Եւ ինքն նկատել անցանէ յայրարատեան գաւառ»։ ԺԲ. դարում, երբ Կիլիկիան Հայոց քաղաքական և կրօնական կեդրօն դարձաւ թագաւորական և Հայրապետական աթոռների այնտեղ հաստատուելով՝ կիլիկեցիք իրանց անուանում էին Արեւմտեանք, իսկ բուն Հայաստանցիներին՝ Արեւելեանք։ Այնուհետև մինչև ցայսօր Տաճկաց իշխանութեան տակ եղող Հայոց գաղթավայրերը կոչուել սկսեցին Արեւմտեան, իսկ Պարսից և Պարսից իշխանութեան տակ եղողները՝ Արեւելեան։ Այժմ Արեւելեան և Արեւմտեան յորջորջումները միայն դրական բարբառների վերաբերութեամբ են դործ ածւում — Արեւելեան կամ Արարատեան բարբառ և Արեւմտեան կամ Տաճկահայոց բարբառ։

2. Ակնարկութիւնը Լեհաստանի հայերի կրօնափոխութեան մասին է։

ԺԷ. դարի առաջին քառորդին Շահ-Աբաս Մեծ՝ աւերելով Արարատեան աշխարհը և հայերին դաղթեցնելով դէպի Սպահան՝ ս. Էջմիածինը աւերակ էր դարձրել։ Դաւիթ Ե. մենակ չկարողանալով հոգալ ծանր հարկապահանջութեան և պարաքերի տակ ընկած Էջմիածնի պէտքերը, իրան աթոռակից կաթուղիկոս օծեց Մելքիսէթին։ Սա ևս ոչինչ չկարողացաւ անել. հրաւիրուեց հաստատութեամբ և բարի վարքով համբաւաւոր Սրապիոն վարդապետը, որ կաթուղիկոսական օծումն ընդունեց Գրիգոր ԺԴ. անուամբ։ Սրապիոն-Գրիգոր ԺԴ. մեծ նեդութիւններ կրելուց յետոյ չուտով վախճանուեց Տիդրանակերտում 1606 թ.։

Մելքիսէթը իւր եղբօրորդի Սահակին կաթուղիկոս օծեց, հարկապահանջների ու պարտատէրների առաջ պատասխանատու կարգելուց յետոյ, գնաց Կ. Պոլիս և Լեհաստան՝ ժողովարարութեան։ Լեհաստանում ժողովրդից թաքուն Նիկոլ Թորոսովիչ արեղային ե-

պիսկոպոս ձեռնադրեց։ Նիկոլ Թարսոնցին լատին կրօնաւորների ձեռքին դործիք դարձաւ. նա միանդամայն հակառակ ուղղութիւն բռնեց թէ Էջմիածնի վերաբերութեամբ՝ արհամարհելով հայրապետի ազդարարութիւնները և անարդելով հայրապետական նուիրակներին և թէ ժողովրդի վերաբերութեամբ՝ բռնանալով նրանց վերայ, և մերժելով եկեղեցու աւանդութիւնների և կարգերի դէմ։ Լատին կրօնաւորներն իրանց պաշտպանութեան տակ առան Նիկոլին, որ ընդունելով պապի դերիչխանութիւնը՝ սկսաց աւելի ևս նեղել ժողովրդին. յաւտահատ ժողովուրդն էլ պապական եղաւ, պապի միջոցով Նիկոլից ազատուելու համար։ Լատին կրօնաւորները հասան իրանց նպատակին սիրելով հայ եկեղեցիներին։ Լեհաստանի հայերի վիճակը թեթևացնելու և նրանց գործերին վերահասութիւն անելու համար՝ Էջմիածնի հայրապետանոցի կողմից այնտեղ ուղարկուեցին ժամանակի ամենանշանաւոր հոգևորականները—Գրիգոր և Խաչատուր Կեսարացիները. սակայն սրանք եկեղեցական սահմին նախանձախնդրութիւն ցոյց տալ կամենալով՝ աւելի ևս բորբոքեցին խռովութիւնը ժողովրդի և Նիկոլի միջև («Ազգ աքել պատմագիր»։ «Նիկոլ եպիսկոպոս» Գաբրիել արքեպս. Այվազեանի և «Բռնի միութիւն» Կ. Եղեանց)։

3. Ազուանից կաթուղիկոսութիւնը, ըստ ազգային պատմչաց, սկսաւեց 340 թ. և առաջին կաթուղիկոսն էր ս. Լուսաւորչի թոռն Գրիգորիս։ Ազուանից կաթուղիկոսութեան յաջորդութիւնը չարունակուեց Փոքր-Սիւնիքում կամ Արցախում՝ ի պատիւ ս. Գրիգորիսի նշխարաց՝ որ թաղուած է Ամարասում, այդտեղը համարւում է աթոռ Ազուանից կաթուղիկոսութեան, բայց կաթուղիկոսները կենում էին Պարտաւում, յետոյ Գանձասարում ևն։ Ազուանից կաթուղիկոսների իշխանութեան ենթարկուեցին մի ժամանակ և Դուգարք կամ այժմեան Ղազախ, Բօրչալուն, բայց սխալ է այդ գաւառը, ինչպէս և Արցախը կոչել Ազուանք։ Ազուանից աշխարհն ընդգրկում էր այժմեան Բաքուի նահանգի մի մասը։ Խորենացուն վերաբերուած աշխարհագրութեան մէջ (հրատ. Ք. Պատկանեանի, Ս. Պ. Բ. 1877) առուած է. «Ազբանիա, այսինքն է Ազուանք, յելից կալով վրաց առ երի Սարմատիոյ առ Կասկասաւ մինչև ցԿասբից ծովն և ցՀայոց սահմանս առ Կուր գետով» (եր. 17)։ Խորենացին (Գիրք Գ. Գլ. Գ.) ս. Գրիգորիսի նահատակութիւնը դնելով Վաղարշապատում «մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով», աւելացնում է. «զոր (զմարմինն), բարձեալ սարկաւագաց նորուն, բերելով ի Փոքր-Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանին»։ Ուրեմն Փոքր-Սիւնիք, որով և Ամարասը, Ազուանքից դուրս էր։

Մենք հարկ համարեցինք այս կէտի վերայ կանդնել, որովհետև Գեր. Տ. Մակար եպիսկոպոս Բարխուդարեան, իր ըոլոր տեղագրական երկասիրութիւնների մէջ Ազուանից աշխարհի սահման-

ներբը չատ է ընդարձակուած, հասցնելով մինչև Զորոյ գետ և Սևանայ լճի հիւսիսային ու արևելեան ափերը, չփոթելով Աղուանից անունը կրող կաթուղիկոսների իշխանութեան սահմանը Աղուանից երկրի սահմանի հետ։

Աղուանից կաթուղիկոսութիւնը միչտ եղել է ամենայն Հայոց հայրապետութեան պերիչխանութեան տակ. ժամանակաւոր ընդվզումները չատ կարճատև են եղել։ Աղուանից կաթուղիկոսութիւնը վերջացաւ իսկապէս 1786 թուին, և վերջին կաթուղիկոսն էր Յովհաննէս Ջալալեան։ Իսրայէլը իբրև հակաթոռ և Յովհաննէսի եղբայր Սարգիսը թէև կաթուղիկոսական օծումն առացան, բայց վերջինս 1798 թ. Վրաց Գէորգ թագաւորի հաճութեամբ և ամենայն Հայոց Պետրոս կաթուղիկոսի հրամանով նշանակուեց Հաղբատի վանահայր արքեպիսկոպոս սիւղոսով։ Երբ ուսանողը տիրեցին Ղարաբաղին, Սարգիսը վերադարձաւ Գանձասար և 1815 թուին Սիրեմ կիզ. յաջորդեց նրան միարոպոլիտ սիւղոսը։ Սարգսին յաջորդեց Նրա եղբօրորդի Բաղդասար արքեպիսկոպոսը, դարձեալ միարոպոլիտ սիւղոսով։ Աղուանից կաթուղիկոսական առհմի այս վերջին բարձրաստիճան հոգևորականը վախճանուեց 1854 թուին յունիսի 27-ին։ 1836 թուից պօլոժենիէի հաստատութեամբ Աղուանից անունը կրող կաթուղիկոսութեան վիճակը դարձաւ Թուռաստանի հայերի վեց թեմերից մէկը Ղարաբաղու թեմ կոչմամբ։

Աղթամարայ կաթուղիկոսութիւնը սկսուեց ԺԲ. դարի համարեա սկզբում։ Երբ Գրիգոր Դ. քահանայ հռոմկում կաթուղիկոս ընտրուեց, Աղթամարի Դաւիթ արքեպիսկոպոսը իւր կուսակիցների ձեռքով վաստպուրականի Զորոյ վանքում օծուեց և վոխադրուեց Աղթամար։ Գրիգոր Դ. 1114 թ. Սեաւ լեռան Բ. ժողովով նզովեց և հակաթոռ հրատարակեց Աղթամարայ կաթուղիկոսութիւնը, բայց ցարդ չարունակուում է։ Այս երկու—Աղուանից և Աղթամարայ—կաթուղիկոսական աթոռներն էլ, որ ս. Էջմիածնի թչուառութեան օրերին վաղանցիկ էին, երբ Մովսէս և Փիլիպպոս կաթուղիկոսների օրով սկսեց Էջմիածինը բարեկարգուել ու պայծառանալ՝ կամովին հպատակուեցին, ընդունելով ս. Էջմիածնի ամենայն Հայոց հայրապետական Աթոռի գերիչխանութիւնը։

Ց. Ե.

1903 թ. Ս. Էջմիածնի տպարանում լոյս են տեսել եւ վաճառւում են.

	Ռ.	Կ.
1. Բանաստեղծութիւններ — Շիրվանի	—	50
2. Ժամադիրք մինջադիր (կազմած)	2	—
3. Ժամադիրք դրպանի (կազմած)	1	50
4. Մեղուաբուծութիւն Գ. Վարդապետեան	—	50
5. Դաւիթ Հարքացի. Գ. Տ. Միքայէլեան	—	50
6. Աղէքսանդր մեծ թարգ. Վրթանէս ք՜ե. Մովսիսեան	—	50
7. Հայկականք Գ. Տ. Միքայէլեան	—	50
8. Աստուծոյն թէ՞ Մամոնային. թարգ. Մամբրէ վարդ.	—	3
9. Բանաստեղծութիւններ և Կիրակոսի Հարսանիքը. դրաշ. Ներսէս Տ. Աւետիքեան	—	50
10. Հոգեբանութեան հիմնական դաղափարների մասին համառօտութեամբ Ս. Տիգրանեանի	—	40
11. Մարդուս շատ հող է հարկաւոր թարգ. Վրթանէս ք՜ե. Մարգարեան	—	5
12. Հազար ու մի խաղ. Կամիտաս վ. և Մ. Աբեղեան	—	10
13. Ի՞նչ է ճշմարտութիւնը. թարգ. Մամբրէ վարդ.	—	10
14. Էջմիածնի ծոյլ օրացոյց 1904 թուականի	—	15
15. Յուցակ ձեռագրաց Խաչիկ վ. Դադեան	2	—
16. Գեղյեր. պատմութիւն Բիւզանդական կայսրների թարգ. Մեսրոպ վարդապետ	1	—
17. Խոտովիկ թարգմանիչ և երկասիրութիւնք, Գարեգին վարդ. Յովսէփեան	1	20

Նոյն տեղ կարելի է գնել

Архимандритъ Месропъ Теръ-Мовсесянъ, Исторія Перевода Библіи на армянскій языкъ, С. Петербургъ 1902 г. 3 р.

„ “ Расконки развалинъ церкви св. Григорія близъ Эчміадзина, С. Петербургъ 1903 г. 1 р. 50 коп.

ԱՐԱՐԱՏ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

1904

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է { Թուղթասեաւմամբ 4 ր.
Արտասահմանաւմամբ 5 ր.

Խնդրում ենք Արժ. Գործակալներին յայտնել այն բաժանորդների ճիշտ հասցէները՝ հոգեւորական թէ աշխարհական, որոնք կարող են իրենք անմիջապէս կամ մի ուրիշի անունով ծրարներ առանալ փոստից: Բոլոր այդպիսիներին «Արարատ»-ը կուղարկուի առանձին ծրարներով եւ առհասարակ նորա գրումը կանոնաւորելու համար ամէն հոգ կտարուի:

Հասցէն՝ Св. Эчміадзинъ, Типографическому Комитету

Արտասահմանի համար՝ Rédaction de-la Revue „Ararat".
Etchmiadzine (Caucase)